/206a/ Է

Յիսուս Քրիստոս

Այսուհետեւ սկ[ս]իմ գրել, զոր ինչ վիճաբանեցաք ընդ ֆռանկ եխպօրն.

Հ. Բարի տեսաք զքեզ, պարո՛ն:

Պ. Բարի առաքեցար, դու իմ սիրելի՛, բայց ոչ ճանաչէմ զքեզ, թէ դուն օվ էս, կամ վասն որ պատճառի եկիր առ յիս՝ ոչ գիտեմ:

Հ. Ես եմ այր ֆռանկ, որ եկի առ քեզ, առ ի հարցանել քեզ եւ յիմանալ զքէն, թէ վասն յէ՞ր այտքան վատահամբաւեցիր զազգն մեր, մանաւանդ այտքան պարսաւեցիր զմեր կրոնաւորքն:

Պ. Յոյժ բարի եկիր: Ես եւս ցանկայի զայտ, որ այր ոք ի ձէնն հարցանէր յինէն ի վերայ ամենայն բանից իմոց, զորս գրեցի եւ առնոցոյր յինէն զլիակատար պատասխանն, զի բառնիցիր ի միջոց զամենայն տարակուսութիւնն պատմութեանց իմոց, քանզի վասն յոյժ համառոտելո[յ] բանս, բազում ինչ մնաց տարակուսելի: Աստուած առաքեց զքեզ, որ զքոյ հարցանելովն բառնի ամենայն տարակուսութիւն ի միջոյ եւ լինի իմ ամենայն պատմութիւնն ճշմարիտ, յաղթօղ եւ հաստատ:

— Ասացիր, վատահամբաւեցիր զմեզ եւ պարսաւեցիր զմեր կրոնաւորքն: Ինձ քաւ եւ մի լիցի վատահամբաւել զոք եւ պարսաւել ու/206b/մեք թարց պատճառի եւ ի զուր միայ[ն] թէ կամեցայ խրատել զձեզ եւ զձեր կրոնաւորքն եւ պակասութիւն ձեր դնել առաջն աչացն ձերոց, զի ապաշաւէք եւ զեկանէք ի բարձրայսն հպարտութենէ ձերմէ, ուղղիք դուք զձեզ, ճանաչելով զձեր պակասութիւն, զի լիցի ինձ վարձ, քանզի դուք կարի յոյժ հպարտացեալ էք ի վերայ ձեր սնոտի գիտութեամբ: Աստուած կամեցաւ ինձ նման տգիտիւ խարատել զձեզ եւ առաջի աչաց ձերոց դնել զպակասութիւնն, որժամ որ Տէրն մեր յանդիմանեց զդպիրս եւ զփարիսեցիս վասն պակասութեանց իւրեանց, ոմանք գայթակղեցին եւ ոմանք սկսէին դիմամարտիլ ընդ Յիսուսի[9]:

Հ. Դիցուք, թէ այտպէս է: Եթէ դու լաւ քրիստոնեայ ես, ընդէ՞ր եւ դուն ոչ պահես զպատուէր Տեառն մերոյ, որ ասաց թէ՝ կեղծաւո՛ր, նախ հան զգերանն յականէ քումմէ եւ ապայ հանեշչիր զշիւղն յականէ եխպօրն[10]:

Պ. Բարի հրամայեցիր եւ արդար ասացեր, զյոր այտպէս է, վասն այսորիկ վերո[յ] յայտնեցի ձեզ եւ ա՛ռաջի աչաց դրի մեր եւ ձեր պակասութիւնն, զի շնորհէք ենթադատել... արդ, աղաչեմ երդմնեցուցանել եւ հարկ ի վերայ քոյ դնեմ. դուք, որ ձեզէն շատ գիտուն համարիք, մեր եւ ձեր պակասութեան դրեք առաջի ձեր. վասն Աստուծոյ եւ թարց աչառութեան քննեցէք եւ տեսէք, թէ մեր ականն է գերան եւ ձերն՝ շիւղ, թէ մեր ականն է շիւղ եւ ձերն՝ գերան:

Հ. Դիցուք, թէ այտպէս է, բայց քեզ ոչ էր պարտ /207a/ քննել զմեր աչաց գերանն եւ յայտ ածել:

Պ. Եղպայր, օ՞վ սկսեց ի սկսբանէ, մեք, թէ՞ դուք: Մեր ազգն այնպիսի սովորութիւն չունի ատել զոք ի պակասութեանց, միայն թէ եւէթ բնականաբար սիրել զամենայն ոք, իբրեւ եխպայր: Տէ՛ս թէ քանի տեղ քրիստոնեայ ազգ կայ ի վերայ աշխարհիս. երբեք լա՞յք, թէ մեք վիճաբանեցաք ընդ ումեք եւ կա՞մ թէ պարսաւեցաք զոք, ոչ ոք եւ ոչ ընդ ումեք՝ բաց ի ձէնջ: Ուստի, դուք կարի յոյժ առ յոտն հարիք զմեզ եւ հաւասարեցուցիք ընդ աղբիւրաց: Մեր ազգն միամիտ, դուք՝ խորամանկ եւ խղճմտանք չիք ի ձեզ: Ի սկսբանէ որպէս սիրէր զձեզ մեր պարզամիտ ազգն: Օվ որ պատճառ եղեւ այն նազելի սէրն հատանել, հատցէ Տէրն մեր զկեանս

9 Տե՛ս Մարկ. Բ 16, Ղուկ. Ե 21, ԺԵ 2, Մատթ. ԺԲ 38

10 Հմմտ. Մատթ. Է 5, Ղուկ. Զ 42

նորայ: Ես դեռ նոր յընծայեալ էյի ի մօրէ, որ ճէզվիտ պատրի Յակոբ Վիլօթն[11] եկել է ի Երզրում: Տէ՛ս, թէ ինչ սիրօվ ընդունին զնայ հայք. խուց բանան վասն նորա ի յեկեղեցւոյն, զգենու առժամայն հանդերձ հայ քահանայի, նոյն եկեղեցւոյն ժամասէ ընդ հայ քահանայսն, անդ քարօզ ասէ, անդ պատարամէ եւ հաղորդէ զժողովուրդն: Եւ այլք պատմեցին, թէ այնքան սիրէին զնայ, որ ոչ թողուին զնայ, որ միայնակ լինէր եւ կամ ուտէր զիւր հացն: Արդ, զի՞րդ եղեւ, որ այժմ վերացաւ այն սէրն եւ սերմանեցաւ ատելութիւնք: Օ՞վ եղեւ պատճառն, ոչ ապաքէն դուք, /207b/ կարի յոյժ արձակեցիք առ մեզ այտ ձեր մարմնապաշտ, արծաթապաշտ, խաբեբայ, խորամանկ եւ իգասէր կրոնաւորքն ձեր, որ ոչ խնայեցին հօտին, որպէս որ ասէ առաքեալն Պողոս՝ որպէս զգայլ յաբշտակեցին զանմեղ գառինս[12]: *Թէ քահանայքն ձեր ոչ կարեն արձակել զկապեալս, քանզի ի[ն]քեանք կապեալ են, նոցա արած պատարամն պատարաք չէ, զի առնեն զսիմէոնականութիւն եւ այլ բազում նման սոցա բարբանջեցին:*

— Եխպայր, յերբոր երկու թագաւոր հանդէպ միմիանց տան պատերազմ, յուրաքանչիւր հակառակին թշնամի կոչէ: Արդ, առ ո՞րն ի յերկոցունցն է ասելի, թէ է ճշմարիտ թշնամի: Պատասխանեմ, յորն որ ի սկսբանէ պատճառ եղեւ, նայ է թշնամի եւ զմիւսն, որ հարկէ յելաւ ընդդէմ նորա, նայ անպարտ է եւ ոչ է արժան կոչել թշնամի, քանզի ոչ կարէր եթէ ոչ յելանիցէր ընդդէմ յարուցելոյն: Եթէ նայ ոչ գայր ի վերայ սորայ, սայ ոչ յելանէր ի վերայ նորա: Ուրեմն, յարուցեալն կոչի թշնամի եւ ոչ ընդդիմացօղն:

— Շնորհակալ եմ, որ ուղիղ դատեցիր եւ ճշմարտութեամբ պատասխանեցիր:

— Նմանապէս պատասխանեմ քոյ բանին, որ յանդիմանեցիր զիս, թէ քեզ ոչ էր պարտ քննել զմեր աչաց գերանն: Նախ դուք յարեաք ի վերայ մեր քննել զմեր աչաց շիւղն, մեք ոչ կարէ[մ]ք ոչ ընդդէմ ունիլ քննել եւ յայտնել ձեզ ձեր աչաց գերանն: Ուրեմն դուք էք մեր թշնամին, /208a/ որ ի զուր եւ անպատճառ յարուցեալ էք ի վերայ մեր, այլ ոչ ունիս պատասխան՝ լուռ լե՛ր:

Հ. Թողումք այս ամենայն, ընթացուք յառաջ, սկսեսցուք զսկսբեն պատմութեանց քոց մինչ ի վերջն, բառ առ բառ... Առ որ բանից վերայ որ հարցանեմ, շնորհես պատասխանել ինձ ամենայն ճշմարտութեամբ:

Պ. Բարի է, յոժար կամօք յանձն առնում, ամենայն ճշմարտութեան եւ առանձ ձանձրութեան պատասխանել քեզ, ընդ ամենայն իրաց, զոր ինչ որ հարցանես յինէն, ասաց զի տեսից քոյ կամն ինչ է:

Հ. Ի յառաջին գլխոյ պատմաբանից քոյ 3 համարն գրել ես, թէ իմ վարպետն ասէր, թէ ճշմարտութիւնն է ի մէջ Ֆրանկաց եւ թէ հայրն իմ գովաբանէր զնոսա: Արդ, դու ընդէ՞ր պարսաւես զմեր ազգն, թէ ոչ գոյ ի նոսա ճշմարտութիւն:

Պ. Ես ոչ ասացի հաւատո[յ] կողմանէ, այլ՝ գործոց: Զինչ օգուտ է բերանով քարոզել զճշմարտութիւնն եւ գործել զստութիւն, որպէս որ ասէ Յակոբ առաքեալն, թէ՝ զինչ օգուտ է եխպայրք իմ, եթէ, ասիցէ, ոք հաւատս ունիլ եւ զգործս ոչ[13], *եւ այլ բազում ինչս խոսի ի վերայ սորա: Վարպետն իմ ոչ եկաց ընդ ձեզ եւ երբեք ոչ տեսաւ զձեզ, այլ միայն թէ այնպէս կարծէր ի հեռաստանէ, որպէս որ ես ի նախնումն այնպէս հաւատայի եւ կարծէյի առանց տեսութեան:*

11 Հայաստանում ԺԷ դարի վերջին գործած յիսուսեան միսիոներներից, հայագէտ: 1714 թ. Հռոմի Ուրբանեան տպարանում հրատարակուեցին Յակոբ Վիլլոտի *Բառգիրք հայկական լեզուի* եւ *Մեկնիչ սրբոյ աւետարանին* աշխատութիւնները: Երզրումում եւ Հայաստանի այլ շրջաններում իր առաքելութիւնը, ինչպէս նաեւ մօտ մէկ տասնեակի չափ ուղեգրութիւնները տե՛ս Voyages d'un missionaire de la Compagnie de Jesus en Turquie, en Perse, en Arménie, en Arabie, & en Barbarie. Paris, MDCCXXX */1730/*.

12 Հմմտ. Գործ. Ի 29

13 Յակ. Բ 14

© National Library of Armenia

— Նմանապէս, հայրն իմ ոչ գիտէր զլեզու եւ ոչ անկաւ ի ցանցս ձեր, միայն թէ քանիցս անգամ պատահեցաւ նմայ առ եւ տուր առնել ընդ ձեզ: Քանզի դուք ի սկսբանէ /208b/ ոչ խաբէք, այլ հանգոյն կարճաց նախնումն շողոքորթէք, ապայ թէ՝ խայթէք եւ սպանանէք: Եթէ ի սկսբանն խայթէիք, ոչ ոք անկանէր ի ցանցս ձեր, բայց էս 40 ամօք ծառայեցի ձեզ, տեսի աչօք իմօք եւ քննեցի բազմիցս, որ ոչ գոյ ի ձեզ ճշմարտութիւն: Ի սկսբաննէ շողոքորթէք, որպէս որ ասի, վերջն՝ խայթէք, եւ որպէս որ մեղուն գարնան ժամանակին կարգէ զմշակս վասն բերելոյ զծաղիկս եւ խոստանայ նոցա կերակրել ձմեռան մեղրաւ, բայց յերբոր սպառի ծաղիկն ի վայրեացն, տեսանէ, որ այնուհետեւ պարտի կերակրել զնոսա, այնժամ գտանէ պատճառ մի եւ կոտորէ զնոսա ի փեթակէն ի դուրս, եւ ինքեանք միայնակ ուտեն զվաստակս նոցա: Սոյնգունակ գործս գործողին արժան է ասել, թէ չեն քրիստոնեայ եւ կամ թէ գոյ ի նոսա ճշմարտութիւն:

Հ. Ընդ յորո՞ւմ մեք այնպէս արարաք, բանէցուցաք եւ ի ժամանակս վարձուցս հանաք զնայ ի մէնճ յունայն:

Պ. Ընդ բազմաց, որ ոչ կարեմ թուել զնոսայ, մի ըստ միոջ, զորս տեսի աչօք իմօք եւ լուայ, թէ զրկեալն ի կրոնաւորացն ձերոց եւ թէ ի աշխարհականացն, բայց զերիս ի նոցանէ յայտ ածից այսր, որ է յոյժ երեւելի:

— Նախ յոյն թարգմանն՝ մուսի Պատերան, որ եղեւ պալիոզ[14] Շիրազու, սայ, որ գործէր իւր ամենայն գործն կատարելութեամբ եւ գորովի արդեամբք: Տեսանէին զնա /209a/ ձեր ազն եւ չարանային, նախանձէին, ընդդէմ նորա գրէին առ դուռն թագաւորին եւ մատնէին զնայ ի զուր եւ ազգն ձեր միշտ հակառակէին նմա ի ամենայն գործս նորա, որքան որ Պարսից յերկիրն շէն էր: Իբրեւ որ անկաւ տէրութիւն ի ձեռն Աղուանից[15], առաքեցին զնայ ի Հնդիկս, անդ ծառայեաց թագաւորին ժամանակ մի: Տեսին, որ շատ յաւելաւ, կոչեցին զնայ ի Փարէզ, առ ի առնուլ զհամարս ի նմանէ, արարին զնայ պարտական, որ թշուառապէս ապրեցաւ եւ քաղցած մեռաւ անդ, մնաց առանց պատանայ[16]:

— Երկրորդն թիֆլիսեցի Պաղի Փօխլունց թարգման Ներսէսն, իբրեւ որ մառչիլիացի Անժ մուսի Գառտանն[17] գայր դեսբանութեամբ ի Պարսս խնդրեց ի Թիֆլիսու քափուչինացն, զի առաքեն առ նայ այր ոմն հմուտ, որ կարիցէ տնօրինել յամենայն գործոց իւր: Առաքեցին այս վերո[յ] յիշատակեալ Ներսէսն, ծառայեաց դեսբանին ամենայն շնորհօք, ամենայն ճշմարտութեամբ եւ ամենայն իրօք կատարեալ[18], այնքան ավելելով ծախէր զդրամն դեսբանին, զի լիցի նմայ օգուտ, որպէս որ ես առնէի վասն մուսիու Պոռէկարին[19]: Իբրեւ տեսին նոյն դռան եղող ֆռանկքն զգործս նորա, չարացան եւ գրգռեցին զդեսբանն հանել զնայ յիւրմէն եւ կամ սպառնալ նմայ: Պատասխանեց նոցա դեսբանն եւ ասաց. եթէ նայ կամի յելանել յինէն, /209b/ գրկեմ զնայ, փոխանակ սպառնալոյ համբուրեմ զոտս նորա, վասն զի ամենայն ինչ իմաստութեամբ գործէ եւ ջանաց վասն իմ շինիլ շահ եւ այլ: Եղեւ մինչեւ անկաւ յերկիրն ի ձեռն Աղուանից, կորեցաւ յամեն[ա]յն եկամուտն, հատաւ յոյսն դեսբանին ապրելոյ ի ձեռն մեծամեծ տրտմութեանն կաթիլ հոսանաց զեկոյց դեսբանն այն եւ եղեւ անդամալոյծ: Ամենայն ոք թողին զնայ եւ գնացին, մինչ որ յիւր եխպայրն թողից զնայ եւ գնաց, բազում գովութեանց արժանի Ներսէսն պաշտեց զնայ իւր թշակօքն այնքան, մինչ որ բացան ամենայն ճանապարհ, ապա թէ ուղեւորեց զանդամալոյծն այն, որ գնաց ի Ֆռանս: Զկնի այնքան ժամանակաց անցելոց ցերբ ես եկի ի Իսպահան, տեսի զՆերսէսն: Զկնի բազում բանիցն ասաց ինձ Ներսէսն, թէ ես իմ ծառայութեան վարցն չեմ յուզել, միայն թէ զոր ինչ որ իմ դրամն ծախեցի վասն նորա, զայն պահանջեմ: Զանձրացայ գրելով, ոչ առաքեն զիմ դրամն. թագաւորն ասէ, թէ՝ թող հատուցանէ յիւր եխպայրն, եխպայրն կասէ, թէ՝ թագաւորին բանին համար է իմ եխպայրն այն պարտ արել. ես ոչ կամիմ տալ: Այսպէս եղեւ իմ գործոց հատուցումն, ահա ես ծերացայ, ոչ կարեմ գնալ անդ եւ որ նոքայ Աստուծոյ ոչ երկնչին, ոչ գիտեմ, թէ որպէս պարտիմ ապրիլ եւ կամ պահել զտղայքն իմ: Այսպիսի տրտմութեամբ մեռաւ /210a/ Ներսէսն:

— Երրորդ զիմ բանն, թէ որպէս սկսեցի, որպէս աշխատեցայ, վերջն զինչ արարին ընդ իս, որ յայտնի յէ ամենայն աշխարհի, որպէս որ վերո[յ] պատմի զիմ արարն եւ հատուցումն նոցա:

Հ. Այտ աշխարհականաց եւ թագաւորաց արարն է, երբեմն պատահի, որ այտպիսի զրկանք գործեն, բայց մեր կրոնաւորքն ընդէ՞ր պարսաւիս:

Պ. Բազումք են եւս արարն կրոնաւորացն ձերոց եւ անթիւք, բայց ես յայտնեմ աստ քեզ չորիս իրս, զորս ես գիտեմ եւ վկայեմ զորս տեսի աչօք իմօք: Նախ այր ոմն օլթեցի Ասլան անուն, այրի, ամենեւին հաւատարմաբար ծառայեաց Դավրեժու քափուչինացն: Զկնի ժամանակաց հանին զնայ յունայն եւ ոչ հատուցին նմա վարձ, պատճառեցին, թէ՝ դուն հաղող ճմլես եւ գինին վաճառես: Պատասխանէր այրին պատրի՝ ոչ է ամօթ եւ ոչ է արգիլեալ, ես այլ ուրիշ վարք չունիմ, որ գործեմ, միայն թէ այս արդար վաստակօքն կամիմ շահիլ ինչ եւ տալ աղքատաց, մանաւանդ որ իմ ընտանիքն աղքատ են, կամիմ օգնել նոցա, բազում անգամ գուք վաճառեցիք: Պատասխանեցին նմայ, թէ՝ մեք պատճառ ունիմք, յերբոր ժամանեմք, նոր գինուն հինն վաճառեմք, զի մի քացախի:

Հ. Այտ իրաւ է, քափուչինքն պարտական չէին նմայ վարձ տալ, քանզի ինքն խոստացել էր ձրի ծառայել վանուցն մինչ ի յիւր մահն, որպէս որ կրոնաւոր ոք:

/210b/ Պ. Ապա ընդէ՞ր ոչ պահեցին զնայ մինչեւ ի մահ, այլ տարադէպ հանին զնայ:

Հ. Որ ոչ հնազանդեցաւ հրամանաց մեծաւորաց, վասն այնորիկ ոչ կարէին յաւել պահել զնայ, ինքն պատճառ եղեւ, որ հանին զինքն:

---

14 Baille – պայլ, պալեօզ: Սկզբնապէս այպէս էր կոչւում վենետիկեան դեսպանը Օսմանեան կայսրութիւնում (Ն. Բիւզանդացի, *Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն*, Կոստանդնուպոլիս, 1884, էջ 121):

15 Նկատի ունի 1722 թ. աֆղանների արշաւանքը դէպի Սպահան եւ Պարսից շահի գահազրկումը:

16 Եւրոպացի պատմաբանները, վերջին տասնամեակներին, մեծ ուշադրութիւն դարձրին Արեւելքում աշխարհիկ եւ հոգեւորական եւրոպացիների գործունէութեան ուսումնասիրմանը: Այդպիսի ուսումնասիրութիւններից մասնաւորապէս տե՛ս *Européens en Orient au XVIII siècle*, Paris: L'Harmattan, 1994 (Moyen Orient & Océan Indien XVIe-XIXe s.) յօդուածների ժողովածոն:

17 Ange de Gardane - Գարդանի դեսպանագնացութեան մասին մանրամասն տե՛ս **Anne Kroell.** *Louis XIV, la Perse et Mascate*.- Le Monde Iranien et l'Islam. Sociétés et cultures, Paris: Société d'Histoire de l'Orient, IV, 1976-1977, pp. 57-78 (յատկապէս Les Mission de Gardane et de Padery բաժինը)

18 Գարդանին ամենայն հաւատարմութեամբ ծառայում էին զանազան հայեր: Նոյնիսկ անձնական քարտուղարն ու թարգմանիչը հայազգի Յովսէփ Աբիսալոմեանն էր (տե՛ս *The Chronicle of Petros di Sarkis Gilanentz concerning the Afghan Invasion of Persia in 1722, in Siege of Isfahan and the Repercussions in Northern Persia, Russia and Turkey*, Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and additional Notes by Laurence Lockhart, Lisbon, 1988, p. 4): Եղիա Մուշեղեանի եւ Գարդանի ունեցած փոխադարձ գրագրութիւնը հրատարակուած է «Եղիա Կարնեցու դիւանը» փաստաթղթերի ժողովածոյում:

19 Bearegard (Бургаръ, Борегардъ, Боригар[дов], Պոռեկար եւ այլն) – ֆրանսիացի զինուորական, 1707 թուականից Իսրայէլ Օրու դեսպանագնացութեան քարտուղար: 1709 թ. Եղիա Մուշեղեանի հետ միասին Մոսկուա էր տանում Օրու նամակը՝ ուղղուած իշխան Գագարինին եւ կանցլեր Գոլովկինին (մանրամասն տե՛ս **Г. А. Эзов.** *Сношения Петра Великого с армянским народом*, СПб., 1898, стр. 249, 251, 267, 283, 287-288, 320-321; *Армяно-русские отношения в первой трети XVIII века*. Сборник документов. Том II, часть I, Под ред. Ашота Иоаннисяна, Ереван, 1964, док. 123, стр. 287-289, док. 129, стр. 298-304): Աւելի ուշ Արեւելահնդկական առեւտրական ընկերութեան կառավարիչն էր Թաւրիզում, իսկ օգնականը՝ Եղիա Մուշեղեանը: Վերջինիս թողած գրական ժառանգութիւնը վկայում է նրանց ամենեւին էլ ոչ անամպ յարաբերութիւնների մասին:

© National Library of Armenia

Պ. Հանապազ վաճառէր, ոչ էր նոր սկսել ընդէր ի սկսբանէ՞ ոչ արգիլէցին:

Հ. Հանապազ խրատէին, բայց յերբ տեսին որ ոչ հրաժարի ի գործոյն, հանին զնա:

Պ. Յերբօր հանին, պարտ էր անցած աշխատանաց վարձն տալ, քոյ զրուցն իրաւ գլնիր, եթէ ի սկսբանէ՞ սակարկեալ էյին, թէ եթէ դուն գինի վաճառես՝ ոչ պահեմք զքեզ: Բայց որ այս ուխտն ոչ էր յուխտեալ նոցա այրին այն, ուրեմն պարտ էր հատուցանել զվարձն:

— Երկրորդն, որ փափի դեսբան քահանայ մուսի Ըռըշառն[20] չքաւորեցաւ ի երկիրն Պարսից[21]: Այր ոմն Կարապետ անուն ջանաց, որ ոչ ամօթ լինի-փափի անուանն, լցոյց զպակասութիւն դեսբանին, որքան որ պիտոյ էր՝ տվեց: Զկնի ժամանակ, յերբոր ես գնացի ի Հռօմ, տեսի ողորմելի այրն այն անկեալ կայր ի վանն Հայոց[22], անդ կերակրիր, դեռեւս սպասէր, թէ փափն հատուցանէ զպարտն[23]: Ինձ գանկատարաւ, թէ յիմ տվածն ոչ տան, ես եւս անցայ այն դրամէն, բայց քանիս անգամ զգացուցի փափին, թէ գոնէ տուր վասն Աստուծոյ թոշակ վասն ճանապարհի, որով կարող լինիմ /211a/ գնալ յերկիրն իմ: Այն եւս ոչ տան, ահա ծերացայ եւ թշուառացայ եւ այլ:

— Երրորդն. Այր ոմն Էրզրումցի Մարկոս անուն մեռանի ի Հաշտարխան, գայ ի Էրզրմա[յ] նորին եխպայրն, որոյ անունն Մելքիսէթ որդին զասապ Արութինին, զի տիրիցէ Մարկոսի ապրանաց, որ եւ տիրեց: Զկնի ժամանակաց մեռաւ եւս այս Մելքիսէթն, սնաց ըստակ ի նմանէ 15 թուման: Հաշթարխան նստօղ քափուչին Ֆելիքսն[24] առաւ այն դրամն, թէ յաստ ինձ պիտոյ է, ես գրեմ Թիֆլիսու քափուչինացն, որ նոքա առաքեն ի Էրզրում այս 15 թումանն, առ ընտանիսն Մելքիսէթին: Այնուհետեւ այս քափուչինն գնաց ի Եւրօբայ եւ դարձաւ եկաւ ի Թիֆլիս եւ անդ մեռաւ: Մինչի ցայսօր ոչ հատուցին, դեռ եւս կարծեմ, թէ ի վերջնում աշխարհի հատուցանելոց են:

— Զորրորդն, որ քափուչին Օվանէսն ինձ յընկերացուցի, այնքան ծախս արարի: Երբոր իմն հատաւ, հարկեցայ պարտ առնել եւ ծախել, ընդէր ոչ հատուցանիցէ ինձ իւր բաժինն, այս եւս քեզ շնորհեմ իմ ձեռամբն կնքեալ եւ ձեռամբ առ ձեռն քափուչինաց աւանդած աւանդն իմ ընդէ՞ր ոչ դարձուցանեն առ յիս, ահա մեռասան ամ եղեւ եւ այլք: Ահայ այս եւս քո կրոնաւորաց արարն, որ առաւել վատթարագոյն եղեւ, քան թէ աշխարհականացն, արդ ո՞ ոք ի մնաց ի ձերոցտ գովութեանց արժանի, զի գովեցից զնոսա եւ ոչ պարսաւեցից, այնուհետեւ օ՞վ կարէ ասել, թէ ճշմարտութիւն գոյ ի մէջ ֆռանկաց. ոչ ոք:

Հ. 'Ի մէջ պատմութեանց քոց 29 համարոջն գրեցիր, /211b/ թէ ես այնպէս կհաւատայի, թէ փափն ում որ կամի առաքել յարքայութիւն, ուրեմն այժմ դու ոչ հաւատաս, թէ այնպէս է:

Պ. Ինձ քաւ եւ մի լիցի այլ այնպէս հաւատալ: Մեզ արքայութիւն տանօղն եւ դժոխքն առաքօղն միածին որդին Աստուծոյ Աստուածն է, ըստ բանի Տեառն, որ ասաց, թէ որք ընդ յառաջմէն իցեն, ասէ՝ եկա՛յք, օրհնեալ էք Հօր իմ[25], եւ որք ընդ ահեկէն իցեն, ասէ՝ զնացէք ի հուրն[26], եւ այլ:

Հ. Ապայ ընդէ՞ր ասաց Տէրն մեր Պետրոսի, թէ՝ տաց քեզ զփականս արքայութեան յերկնից, զոր միանգամ կ[ա]պեսցես յերկրի, եղիցի կ[ա]պեալ յերկինս[27] *եւ այլ:*

Պ. Այտ բացումն եւ յարձակումն ամենայն աշակերտացն տվեցաւ ի Տեառնէ, եւ ամենայն քահանայքն ունին այտ իշխանութիւնն, որպէս ասաց Տէրն, եթէ՝ թողուցուք յիւրաքանչիւր եխպօրն յիւրում ի սրտից ձերոց զ[յ]անձանս նոցա[28] *եւ այլ:*

— Ոչ ապաքէն Տէրն մեր ասաց հասարակաց աշակերտացն, թէ ամէն ամէն ասեմ ձեզ, զոր կապէք յերկրի եղիցի կապեալ յերկինս,[29] *եւ այլ բազում տեղիս ի մէջ աւետարանին խոսի Տէրն մեր զայտ թողութեանց վերայ եւ* ամենեցուն առ հասարակ պատուիրէ թողուլ յիւրաքանչիւր եխպօրն զ[յ]անձանս, *վերա[յ] աւելու եւ ասէ՝* եթէ դուք ոչ թողուցուք եւ ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զ[յ]անձանս ձեր[30], *եթէ միայն Պետրոսի տվեց այտ բացումն եւ ոչ այլոցն, որպէս կարէին այլ առաքելքն շրջագայիլ զաշխարհ[հ]ս զկնի Յիսուսի եւ տալ զթողութիւն ամենեցուն, ոչ ումեքէ լայք, թէ /212a/ յառաքելքն յամեցին հաւատացելոցն տալ զարձակումն մինչ որ Պետրոս գայր եւ բանայր, կամ առնիցին ի նմանէ:*

— Հրաման ապայ թէ բանային, դիցուք, թէ այտպէս է, Քրիստոս Տէրն մեր միայն Պետրոսի երեսն այտ բանալին եւ ոչ այլոցն, ապայ փափն ուստի՞ կալաւ այտ բանալին, օ՞վ երեսն նմայ: Այտ փափութիւնն հաստատեցաւ ի Հռօմ զկնի 9ի մօտ, 400 ամօք, ապայ թէ այնուհետեւ սկսեց աճիլ, ուրեմն յառաջ քան զայն հաւատացելքն ոչ գնացին արքայութիւնն: Զարմանամ, թէ փափապաշտքն որպէս ոչ ընթեռնուն զԱւետարանն եւ զԳործ առաքելոցն: Եթէ ընթեռնուն, ուրեմն աքշութիւն ունին ի սիրտս յիւրեանց եւ կամ թէ կուրացեալ է զաչս նոցա, որպէս որ ես կուրացեալ էյի ի նախնումն. կարդայի եւ ոչ յիմանայի:

Հ. Եթէ հասարակաց տվեց Տէրն այտ բանալին, ընդէ՞ր միայն յատուկ Պետրոսի անունն գրեցաւ:

Պ. Ծառայ ոք, որ մինն բարի զրոյց ասէ եւ որ դուր գայ Տեառն, հանէ իւր քսակէն եւ շնորհէ դրամ այն ծառային վասն բարի զրուցից

20 Խօսքը Abbe Richard-ի ֆրանսիական արտաքին միսիաների կազմակերպած դեսպանագնացութեան մասին է, որը 1716-1717-ական թթ. Այսրկովկասում եւ Պարսկաստանում ներկայանում էր Պապի դիւանագիտական առաքելութեան անուան տակ: Դեսպանագնացութեան նիւթերը պահւում են Archives du Séminaire des Mission étrangères de Paris-ում (այսուհետեւ՝ AME), որին մեզ յաջողուեց ծանօթանալ 1996 թ.:

21 Ֆրանսիական դիւաններում բազմաթիւ փաստաթղթեր են պահպանուել Ռիշարի դեսպանագնացութեան արած պարտքերի եւ հայերի կողմից փոխհատուցման վերաբերեալ: Նոյն ժամանակուայ դէպի Իրան ուղեւորուող ֆրանսիական մէկ այլ դեսպանի՝ Գարդանի նամակը՝ ուղղուած Ֆրանսիայի Ծովային Խորհրդին, հայերին ունեցած Ռիշարի պարտքերի հատուցման մասին, տե՛ս **Anne Kroell.** *Louis XIV, la Perse et Mascate, pp. 60-61:*

22 Խօսքը 1566 թուականից Պիոս Ե. պապի կողմից հայերին տրուած Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցու եւ Հայոց հիւրանոցի մասին է, ուր հանգրուանում էին քաղաքով անցնող հայ ուխտաւորները (տե՛ս **Մ. Կարապետեան,** *Հռոմի հայ գաղթօջախի պատմութիւնից,*- Պատմա-բանասիրական հանդէս, 1998, թիւ 1-2, էջ 165-178):

23 Իրականում գլխաւոր պարտատիրոջը պէտք էր փնտրել «Ֆրանսիական Արտաքին միսիաների վարժարան»-ում: 1716-ին, երբ Ռիշարը հասաւ Կ. Պոլիս, չնայած եղած պայմանաւորուածութեանը չյաջողեց հանդիպել Սուլխան Սաբայ Օրբելիանին, որն արդէն մեկնել էր Վրաստան: Կ. Պոլսում նոյն ժամանակ շատ խանդոտ էին վերաբերում Պարսկաստան մեկնող ֆրանսիացի դիւանագէտներին: Արդիւնքում մաքսաւորը, որ ծովն էր նետել նետերի ունեցած փաստաթղթերն ու նամակները, զրկւում է կեանքից, քանի որ Ռիշարի համար բարեխօս է հանդիսանում Երեւանի խանը (իմանալով, որ վերջինս իր հետ տանում է նաեւ Պապի նամակը): Միաժամանակ Ռիշարի զգալի դրամական պարտքերը իրենց վրայ են վերցնում մի շարք հայեր, որոնք օգնում են իրեն (տե՛ս AME, vol. 355, p. 231, 276, 293, 297): Ռիշարի նամակներում դիմումնագրեր կան հասցէագրուած Փարիզի Արտաքին միսիաների ղեկավար Բրիզասիէին՝ հատուցելու այն պարտքերը, որոնք ինքն արել էր Արեւելքում: Այդպիսի խնդրագրերից մէկում (1720 թ. 17 սեպտեմբեր) նա խնդրում է հատուցել, ի շարս այլոց, նաեւ իրեն շատ օգտակար եղած Յովսէփ (իր թարգմանն էր), Աղաբաբէ եւ Յարութիւն հայազգի վաճառականների պարտքը (տե՛ս AME, vol. 355, p. 458)

24 Աստրախանում վեղարաւորների գործունէութեան մասին անդրադարձ տե՛ս **Է. Թաչիրեան,** *Աստրախանի հայոց պատմութիւնից (ԺԸ դարի առաջին քառորդ),*- Armenian History Materials in the Archives of Central Europe, Yerevan, 2001, էջ 66-74:

25 Մատթ. ԻԵ 34

26 Մատթ. ԻԵ 41

27 Հմմտ. Մատթ. ԺԶ 19

28 Հմմտ. Մատթ. Զ 14-15

29 Հմմտ. Մատթ. ԺԸ 18

30 Հմմտ. Մատթ. Զ 15

© National Library of Armenia

վարձ: Մի՞թէ սպառեցաւ դրամն պարոնին, որ ոչ մնաց տալու այլոցն: Մաթէոսի 16 գլխոցն ասէ 19 համպարոշն[31] վասն բարւոք պատասխանոյն, ընկալաւ Պետրոս զբանալին, 23 համարոշն[32], վասն յոռի զրուցին յընկալաւ անուն սատանայի ի նոյն բերանեն. արդ զինչ ասասցուք Պետրոսի սատանայ, որ քաւ եւ մի լիցի. 18 գլխոշն եւ 18 համարոշն[33] /212b/ նոյն Մաթէոսի ասաց Տէրն աշակերտացն ամենեցուն, թէ՝ զոր կապիցէք յերկրի եւ արձակիցէք եւ այլ, բազում տեղիս գրի նմանս սոցին:

Հ. Պետրոս առաքեալն գլուխ առաքելոց պարտի՞ հաւատալ:

Պ. Այտ պարտականութիւնն առ յումմէ՞ պատուիրեցաւ մեզ, ասել Պետրոսի գլուխ մեք ոչ գտաք ի մէջ սուրբ աւետարանին եւ ի գործս առաքելոցն: Միայն թէ զայս գիտեմք, թէ Մարկոսի 9 գլուխն 34 համարոշն ասաց Տէրն, եթէ ոք կամիցի յառաջին լինիլ, եղիցի ամենեցուն կրտսեր[34]:

— Պողոս, Պետրոսի, Յակոբու, Յոհաննու անունն տայ, թէ կարծեալք սինք, այն եւս ոչ խոստովանի մեծ, այլ ծանակէ, թէ՝ կարծեալք: Արդ դուն ուստի՞ բերես վկայութիւն, թէ Պետրոս գլուխ է: Գիտեմ զքոյ դիտաւորութիւնտ. կամիս, թէ ասեմք՝ Պետրոս գլուխ, որ հարկաւորիմք փափին ասել գլուխ, միայն ջան եւ դիտաւորութիւն ձեր այն է, որ հաստատէք լինիլ փափն մեծ, որ այլ առաւել լիցի եկամուտն նորա, քանզի այն ոք կայ, ոչ է բաւական Մաթէոսի 20 գլուխն, 25 համարն[35].

Հ. Որպէ՞ս հաստատես զայտ:

Պ. Բազումս տեսի եւ ի անթիվսն լուայ, եթէ ունենամ հազար տարի կեան, որ ամենայն ձեր անցեալ անիրաւ դատաստանն գրեմ, դեռ եւս ոչ կարեմ աւարտել, բայց երեք ինչ գրեմ լինի բաւական, ըստ բանի Տեառն. որ ասաց, թէ՝ երկու եւ երեք վկայում հաստատի ամենայն բան[40]:

— Ի քաղաքն Վանադիտ մի մեծատան բան անկանի, ի դատաստան տեւէ մինչի 32 ամ: Մերկանայ այրն ամենայն ընչից, մնա[յ] միայնակ մին տունն: Հոգւով չափ վշտատեալ՝ ողորմելի այրն յաւուր միում առնու գկանգունն ի ձեռին եւ մտանէ ներս ի ատենատունն, յորում է ժողովն ամենայն գլխաւոր իշխանացն, որոց ճենթիլում[41] ասեն: Սկսէ անդ չափել ատենատան լայնութիւն եւ ընդարձակութիւն, ոմանք թէ՝ թոյլ տուք տեսանեմք զվերչն: Մինչ հարցին զպատճառն, պատասխանեց այրն, թէ՝ զամենայն կեանն եւ զգոյսն իմ մուծի աստ ոչ ցագեցաւ, միայն ինձ մնաց տուն մի, վասն այն չափեմ, թէ տեսնում, թէ եթէ տունն իմ գոհկվի ուրայ մէջն, որ գնամ /214a/ բերեմ տունն իմ եւս եւ դնեմ աստ գուցէ յագին դատաստանն իմ հատանէ: Զայն բան լսելով ապա թէ ողորմին եւ հատանեն զվճիռն, որ գնայ այրն ի բաց:

— Երկրորդն. ի Հռոմ երկու կարդինալ միմիանց հետ խոսակցին ի վերայ աշխարհականաց, թէ ինչ պատճառաւ ի վերայ միմիանց զրուցանեն՝ զդաւ եւ մաքառին եւ ծախեն ի զուր զգոյսս յիւրեանց եւ դեգերին ի դրունս դատաւորաց եւ այլ. միւսն պատասխանէ նմայ, թէ՝ մինչի ցայսօր դու ոչ ես գիտացել զայտ բան, կամի՞ս որ ցուցանեմ քեզ: Ասաց կամիմ, միւսն պատասխանեց՝ ահայ բարեկենդան է, գնամք այն[տ]եղ կրպակն զբօսնուլ. բայց որքան որ ծախս լինի կան, դուն վճարես: Ի վերայ այս յուխտիս այլափոխեալ գնացին, իբրեւ կամէին դառնալ, սկսան համարել զծախսն, որ ամենայն ոք իւր բաժինն տայ ի բաժանելն մէկ ճուլի, որ լի մէկ ձ(100) դիան: Մէկ կարդինալն ոչ կամեցաւ տալ, ասպէս դարձան եւ եկին ի քաղաք: Միւս օրն ցոյց տվօղ կարդինալն առաքեց սպասաւորն իւր առ դատաւորն, թէ այնիշ կարդինալն պարտի ինձ տալ մին ճուլի, ոչ տայ: Առժամայն առաքեն ի ատենէն սպասաւորս զկնի միւս կարդինալին, թէ ընդէ՞ր ոչ վճարես զքոյ պարան: Նայեաւ ի տեղի իւր կարգէ զփոխանորդս եւ առաքէ ի ատեան, զի պատասխան տացցեն ոսոխին: Այսպէս անցանէ եւ գայ միւս տարին: Գայ տնտեսն կարդինալին համարս տալ, քանզի յամն /214b/ մեծ պատին համարս առնուն ի տնտեսէն, քաղելով զհամարն հասնէ այնտեղն, թէ զ2 (70) ըսկութ ծախեցի ի ատեան: Զարհուրի կարդինալն, թէ այտ ինչ ծախս է, ոչ գիտեմ, քանզի մոռացեալ էր, պատասխանեց տնտեսն, թէ վասն մէկ ճուլուն, որ հրամայեցիր դէմ ունիլ, ահայ մին տարի յէ, որ դատախազիմք ընդ ոսոխին. զ5 ըսկութ եւս ծախս գնայ: Առժամայն հրամայէ եւ ասէ. գնացէք փութանակի եւ հատուցէք զմէկ ճուլին, որ զերծանիմք այլ առաւել ծախս անելոյ, զ5 ըսկութն տեղոյն լինի 37 ոսկի եւ կէս: Միւս կարդինալն եւս այնքան ծախեց վասն միո[յ] հարիւր դիանին, որ կանէ օսմանցւոցն յութն փարա եւ պարսիցն՝ քսան փող:

— Երրորդն. վաճառական ոմն յոյն բառնայ իր ապրանքն ի վերայ թուրքի նաւի առ ի գնալ այլ իմն յերկիր: Ի ճանապարհին հանդիպին ավազակքն փափին, զարնեն եւ տանին զնաւն: Լսելոյն վաճառականն գայ առ փափն խնդիր ապրանացն, անդ անկանի ի դատաստան եւ մնայ մինչի օր մահուն, յետ այնորիկ գայ որդի նորա: 1738 թիին ես, իբրեւ դառնայի ի Հռոմայու, պատահեցաւ ինձ ճանապարհին նոյն վաճառականի որդին, որ գայր վասն Հռոմա[յ] գնալու խնդիր ապրանացն, զի յետ առնուցու ի փափէն: Այնպէս հաւատամ, թէ անդ եւս մնալոց է մինչ ի օր մահուն եւ մտանելոց է գերեզման եւ ի ծոց հօրն իւրոյ: Այս գործ պատահեցաւ ինձի ի /215a/ ճանապարհին, յորժամ որ տեսի այրն այն, քանզի հարցեալ քննեցի: Որովհետեւ գրեցի ի դատաստանացն քրիստոնէյից, կամիմ եւս աստ գրել զերիս իրս զդատաս-

31 Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս (Մատթ. ԺԶ 19)

32 Եւ նա դարձեալ ի Պետրոս՝ ասէ, Երթ յետս իմ, Սատանայ, գայթակղութիւն իմ ես. զի ոչ խորհիս զԱստուծոյսն, այլ՝ զմարդկանն (Մատթ. ԺԶ 23)

33 Ամէն ասեմ ձեզ, Զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս (Մատթ. ԺԸ 18)

34 Մարկ. Թ 34

35 Գիտէք զի իշխանք ազգաց տիրեն նոցա, եւ մեծամեծքն իշխեն նոցա (Մատթ. Ի 25)

— *Ասաց Տէրն՝* գիտէք զի իշխանք ազգաց տիրեն նոցա[36]. *յոչ այնպէս իցէ ի մեզի ձերում, այլ որ կամիցի ի ձէնն մեծ լինել, եղիցի ձեր պաշտոնեայ: Եթէ Տէրն մեր կամենայր լինիլ գլխաւոր ոմն, կարէր ասել. թէ սայ լիցի գլուխ եւ առաջին ձեր, յորժամ որ /213a/ խնդրեցին առաքեալքն, թէ նշանակէր զոմն ի նոցանէ գլխաւոր, այլ ասաց ոչ այտպիսի է ի միջի ձերում, դուք ամենեքին եղսպայր էք միայն կամեցաւ լինիլ գլուխ, վարդապետ, ուսուցիչ եւ տէր մեր ինքն հորժամ, որ ասաց, թէ՝* դուք կոչէք զիս վարդապետ եւ տէր բարւոք առնէք, զի եմ իսկ[37]: *Արդ դուն ուստի՞ բերես վկայութիւն, ոչ ասեմք, թէ փափն է գլուխ ամենից քրիստոնէից: Եթէ տէրն մեր յիւր յայտնապէս յընտրեալ սուրբ առաքելոցն ոչ օրվաւ լինիլ մեծ, արդ դու որպէ՞ս զօրես մեկ մեղաւոր մարդու մի ասել, թէ տեղի Քրիստոսի է, միթէ դուն հոգի չունիս, որ ոչ զերկնչիս ի Աստուծոյ: Պողոս ասաց՝* անդամք բազում եմք եւ եկեղեցւոյ գլուխն Քրիստոս է[38], *ուրեմն լուռ լե՛ր:*

Հ. Այտ ամենայն պատմութիւն, որ գրեցիր, թէ արարմանցն մերմէ, զոր ինչ որ կրեցիր, ճշմարիտ է, կաւատամ: Գոն եւս անթիւք, որ ոչ գիտացիր եւ զբաղմանցն, որ ասես, թէ զանց արարի, լիցի այտպէս, բացի արարմանցն հասարակացն ֆռանկաց 27 համարոշն գրեցիր, թէ Ֆռանկիստան դատաստան չկայ, իրա՞ւ որ այտպէս է:

Պ. Այոյ: Եթէ այնպէս չը լինէր, ոչ գրէյի ի զուր որպէս զձեզ, որ ճշմարիտ էր գրեցի: Ես ոչ կամիմ ընդունիլ զայն վայն որպէս որ ես Եսայեաս կարդաց ասելով վայ է այնոցիկ, որ ասիցեն /213b/ խաւարին՝ լոյս, լուսին՝ խաւար[39], *մանաւանդ որ ի ձեզ դատաստան չլինիլն ամենայն ազգ վկայեն եւ գիտեն ամենայն ազինք, որպէս որ արեգակն լոյս տայ ամենայն աշխարհի, նմանապէս ամենայն լեզու խոստովանի, թէ ի Եւրոբայ չիք դատաստան:*

36 Մատթ. Ի 25

37 Յովհ. ԺԳ 13

38 Հմմտ. Եփես. Ե 23

39 Ես. Ե 20

40 Հմմտ. Բ Կոր. ԺԳ 1

41 Իմա՛ gentilhomme - ազնուական:

© National Library of Armenia

տանէն Ռուստաց, քանզի ի Եւրոբա[յ] երբեմն վճիռ հատանեն զմի ի հազարից, բայց ի Ռուստաց՝ եւ ոչ մի:

— Նախ պատմեցին ինձ, թէ այր ոմն անուանի աւազակ՝ ճանփայ խաբանօղ, ըմբռնի երկիցս եւ խրատի: Բայց մինչ ըմբռնի ի երրորդումն, կամին մահացուցանել, քանզի այնպէս սահման կայ ի միջի նոցա, որ յերբոր ըմբռնէ գողն, առաջի անգամն ձաղէն օղն նորա եւ թողուն, երկրորդ անգամն հատանեն զմէկ գիու պինչն, բայց երրորդ անգամն մինչ ըմբռնին զնայ, այնժամ մահացուցանեն: Նմանապէս այս աւազակն մինչ ըմբռնեցաւ երրորդ անգամն, հրամայեցաւ մահացնել: Իբրեւ լաւ ավազակն այն վճիռն, կոչեց լռելեայն զդպիրն ատենին, որոյ ձեռին էր յիւր բանն, խոստացաւ տալ նմա 40 ֆլօրի, եթէ ազատիցեր զինքն ի մահուանէ: Յանձն առէր դպիրն ի լուսանալ առաւօտուն հանից ի բանտէն այլ իմն բանտարգեալ եւ տարաւ կախեց ի փայտէ եւ արձակեց զաւազակն:

Հ. Որպէ՞ս ճանաչէն, թէ երկրորդ անգամ բռնված է գողն այն, որ ի երրորդին մահացնեն զնայ:

Պ. Առաջի անգամ, որ ձաղի սպի վիրացն երեւի ի վերայ օղանն, երկրորդն, որ նշանն երեւի ի վերայ ոընգոյն պնչաց:

Հ. Զիա՞րդ կարէ երեւիլ ի վերայ յօղանն զսպի ձա/215b/ղանացն, այտ անհաւատալի է:

Պ. Միթէ կարծես, թէ նոցա ձաղն նմանի ձիու կամ այլոց ազգաց ձաղի նման, որ ոչ երեւեցի զսպի վիրացն, ո՛չ: Նոցա ձաղն կաշի, երկու մատ լայն եւ երեք տակի, յերբոր կամենան ձաղիլ այրոք, նախ մերկացնեն այրն եւ հանեն զթեւերի խաղն ի թիկանց ոսկերին եւ դուրս ցգեն ի տեղւոյն եւ պրկեալ զերկու ձեռն կախեն ի բարցանց եւ զյոտն պրկեն ի գետնի. առնու դահիճն զիւր խարազանն ձաղին եւ հեռանայ անտի արշավմամբ գայ, մինչ մերց լինի, ցաթկէ ի վեր եւ երկու ձեռամբ ուժգին բախմամբ հարու ի վերայ թիկանցն ամենայն զօրութենէ իւրմէ ըստ լայնութեան խարազանին: Առնու կաշին մարդուն ի թիկանցն եւ յիշանէ մինչի տափողքն առնն, ապայ այժմ տես, թէ այսպիսի վիրաց սպին կարէ անյայտանալ. այս կերպիւս 26 մինչ ի 32 անգամ հարուն՝ ըստ գործոցն չարութեան գողին:

Հ. Այժմ հաւատացի, որովհետեւ այտպէս է երեւի սպին եւ ոչ կարի աներեւութանալ, բայց ասայ ինձ, թէ այն անիրաւ դպիրն զիա՞րդ իշխեց զայտ գործ գործել վասն փոքր ինչ դրամից եւ ոչ երկեաւ, թէ յիմացվի:

Պ. Յերբոր աւազակն այն դարձեալ ժողովեց ի վերայ յիւր զցրուեալ զօրքն եւ սկսեց ըստ առաջնոյն կտրել զերթեւեկութիւն ճանապարհաց, այնժամ յիմացան եւ մինչ սկսեցին քննել եւ յիմանալ զպատ/216a/ճառն, այնժամ փախաւ զդպիրն:

Հ. Այտ այտպէս լինելոց էր, գիտեմ, ես այտ ոչ հարցանեմ ի քէն, այլ զայն զարմանամ, թէ յերբոր կախեցան այն միւս բանտարգելեալն ի տեղի աւազակին, անդ ո՞չ ոք ճանաչեց, թէ կախվօղն ոչ էր այն աւազակն, այլ այլ ոք:

Պ. Նոքայ, որ գողն կախեն ոչ ունին ծեւ ըստ այլոց ազգաց, որ կախեն ցիւր հանդերձօվն, յոչ այլ այսպէս սահման ունին, մերկացնեն այրն եւ ագուցանեն մէկ նոր սպիտակ շապիք եւ նոր վարտիս եւ մէկ կտոր սպիտակ վարշամակ ծածկեն ի վերայ գլխոյն եւ դիմացն, որպէս որ քող եւ ապայ թէ չուվանի օղն անցուցանեն ի վիզն եւ կախեն: Որ ոչ երեւի յերեսս առնն եւ որ ոչ գոյ հանդերձ, զի ճանաչիցի, որպէ՞ս կամիս թէ ճանաչի: Դիշերօվ հանեց այրն եւ տարաւ կախեց, առաւօտն տեսին այրն կախած, կարթացին թուղթն պատճառաց, տեսին անուն ավազակին եւ անցան:

Հ. Այտ այտպէս կարէ լինիլ, [հ]աւատացի, բայց այն անմեղ այրն, որ կախեցաւ, տէր չունէ՞ր, որ որոնէր, թէ զիարդ եղեւ այրն:

Պ. Զարմանամ, որ ըստ օրինացն ձերոց ոչ յիմանաս նոցայն, այլ աշխատիս հարցանել եւ զիս մղես ի աշխատանն, ոյք էն տիարքն կապելոցն, որք գան ի որոնել այս մէկ տարեն կամ երկու տարեն բան չէ, օվ գիտէ 10, 20, թէ երեսուն օրարվան էր բանտարգեալն այն, որ տարաւ կախեց փոխա/216b/նակ ավազակին, քանզի անթիւք են բանտարգեալքն, որոց ոչ

գոյ թիւ: Այր ոք, որ մին անգամ ըմբռնեցաւ, եթէ գոն ազգականք ամենեքեանքն լքին եւ ի բաց մերժին ի նմանէ յուսահատ եւ այլ ոչ դառնան առ նոսայ որպէս որ տեարքն մեռելոց դառնան ի գերեզմանէն, քանզի հաւաստեաւ գիտեն, թէ այր ոք, որ մին անգամ ըմբռնեցաւ եւ մատնեցաւ ի ձեռն դպրաց, կորաւ եւ մեռաւ, քանզի չիք դատաստան: Կամայ ակամայ հեռանան ազգականքն, զի մի պատճառաւ կապեցելոցն մերկանան եւս յընչից ինքեանք, վասն այն ուրանան եւ փախչեն:

Հ. Այտ ամենայն ընդունեցի, որ այտպէս լինի, բայց դատաւորքն որպէ՞ս ոչ տեսին զաւազակն այն օրն, որ տարան ի սպաննումն:

Պ. Իբր թէ դուն ոչ գիտես ձեր սահմանած օրէնն, որ ամենայն ինչ դպրաց ձեռին է եւ ոչ պէտաց, գան եւ գանկատեն ի ատեան, դպիրքն առաքեն զկնի նորա, զօրական ածեն զնայ եւ արգելուն զմեղապարտն ի բանտ, գնայ դպիրն առ պէտն եւ ասէ՝ ահա այսու զէկարանաւն ըմբռնեցի զմեղապարտն եւ ածի ի բանտ: Ի՞նչ հրամայես: Պատասխանէ պէտն, թէ՝ քննեցէք եւ դատեցէք: Այսպէս անցանէ: Յերբոր սիրտն լինի դպրին, գնայ դարձեալ առ պետն եւ ասէ՝ քննեցաք եւ դատեցաք, պարտի մեռանիլ եւ կամ թէ՝ անմեղ է: Այնժամ պետն ձեռնադրէ զհրամանն եւ տայ ի ձեռն դպրին, թէ արձակել եւ թէ սպանանել, այսպէս է սովորութիւն ամենայն Եւրոբայու, /217a/ մանաւանդ ի մէջ Ռուստաց: Այրն մտանէ ի բանտ եւ գնայ ի մահ: Ոչ տեսանէ պետն, թէ որպիսի ոք էր այրն այն, միթէ անուանի ոք իցէ մեղապարտն եւ կամ մեծ ազգէ տէր լինի, որ մեծ պետն տեսանէ զնայ եւ հետն խոսի, որ ոչ այնքան կարեն դպիրն իշխել, եթէ ոչ հասարակ ժողովուրդն կորչի ի ձեռն դպրաց:

Հ. Ամենայն ինչ լայ բարեպէս, բայց մի ինչ տարակուսութիւն մնաց: Կամիմ զայն եւս յայտնես, որ ասացիր, թէ երկու անգամ թոյլ կուտան գողոյն, ապայ թէ երրորդին սպանանեն: Ընդէ՞ր առաջին անգամն, յորժամ որ ըմբռնի գողութեամբ առժամայն ոչ սպանանեն, այլ թոյլ տան մինչ ի երիցս:

Պ. Եթէ առաջի անգամ ըմբռնեալն գողութեամբ սպանանէին, ոչ ոք մնայր կենդանի այն երկիրն, զի շրջիցեր ի վերայ յերկրի, քանզի ամենեքեան գող են, այրն եւ կինն, մեծն ու փոքրն, պետն ու զօրականն, աշխարհականն եւ կրոնաւորն եւ ամենայն ոք: Որովհետեւ այսքանս հարցիր, կամիմ օրինակ մի տալ քեզ, որ լաւ հաւատաս իմ զրուցին, թէ ոչ խոսեցայ սուտ: Ի ժամանակս անուանի թագաւորին Ռուստաց, որոյ ցար Յուվանի Վասիլիչ[42] ասեն, ի յաւուրս նորա գողքն բազմանան այնքան, որ ի հասարակ աւուրն յայտնապէս մտանեն ի տունս եւ կողոպտէին: Զանձրացան ամենայն ժողովուրդն յոյժ, բողոք բարձին առ կաթուղիկոսն. առ ժամայն մտանէ առ թագաւորն եւ [յ]անդիմանէ զնայ վասն այս գործոցն, թէ ընդէ՞ր ոչ քննես եւ ոչ դատես, որ գողքն այնքան բազ/217b/մացան, որ անդ քնին հասարակ աւուրն կողոպտեն զտունս եւ այլ: Պատասխանեց թագաւորն եւ ձեռն ցգեց առ նախարարս եւ ասէ, թէ՝ որ սպանանեմ զգողս զամէնն ի յերկրի իմմէ, մէկ ես եւ մէկ դու մնամք, տեսանե՞ս սոքայ, ասաց, ամենեքեան գող են, ապա թէ կորագլուխ յելանէ կաթուղիկոսն ի թագաւորէն[43]:

— Որ այլ առաւել հաստատ հաւատաս զրուցից իմոց, յայտնեցից նորոգ գործ մի, որ եղեւ ի ժամանակս հզօր թագաւորին Ռուստաց Մեծին Պետրոսի[44]: Ի աւուրս տօնից միոյ գնայ թագաւորն ի ատեան, անդ պատրաստէ քսան հազար ըռուպլ գանձս, որ լինի տասն հազար ոսկի առ ի առաքել ուրեք ի թօշակս զօրացն իւրոց: Զկնի ճանապարհորդելոյն զգանձս, յելանէ ի ատենէն հանդերձ ամենայն նախարարիւքն գնալ ի եկեղեցին, տեսանել զպատարամ: Մինչ թագաւորն մտանէ ընդ դուռն եկեղեցւոյն, առժամայն զմի ի նախարարացն առնու զսպա-

42 Իմա՝ Իւան Դ. Ահեղ (1533-1584)

43 Խօսքը Իւան Ահեղի կատարած բարեփոխումների եւ յատկապէս 1550 թ. ընդունուած Դատաստանագրքի նախորդած դէպքերի մասին է: Այս Դատաստանագրքի գործունէութիւնը շարունակուեց մինչեւ Պետրոս Մեծի անցկացրած իրաւական փոփոխութիւնները:

44 Իմա՝ Պետրոս Ա. կամ Մեծ (1672-1725):

© National Library of Armenia

սաւոքս իւր եւ անտի գնաց զկնի գանձին հասանէ ի մեղ մայրո[յ] միոջ, անդ կողոպտէ զգանձն եւ առաքէ ի տուն յիւր եւ ինքն փութանակի դարձեալ հասուցանէ ի դուռն եկեղեցւոյն: Զկնի աւարտման պատարագին յելանէ թագաւորն, առժամայն գայ տասնապետ վիրաւոր եւ տայ բօթ թագաւորին, թէ այնիղ մայրու մեկն զարկին զգանձն: Զարմացմամբ հիանայր թագաւորն, թէ զիարդ կարէ լինել այսպիսի գործ: Սկսեց հարցանել ցտասնապետն, թէ զիարդ կամ որպիսի լինիլն եւ թէ ոյք էին գողք եւ թէ ճանա/218a/չես զնոսա, ակնարկեց տասնապետն առ նախարարին, իսկոյն ճանաչեց զնայ, բայց երկնչէր յայտնել: Առժամն զգաց թագաւորն զխորհուրդն տասնապետին, սպառնայր տանջանս, եթէ ոչ ասիցէր զճշմարիտն: Անճար մնաց տասնապետն, ցոյց ետ, թէ ահայ այս նախարարն էր: Երդուաւ թագաւորն, թէ շնորհեցի զքոյ մեղն, միայն թէ ասաց զճշմարիտն, թէ արդարեւ դուն արարէր զայտ գործ: Խոստ եկաւ, մինչ զարմանայր թագաւորն, թէ՝ դուն միշտ ընդ յիս էիր, յե՞րբ գործեցեր զայտ եւ կամ որպէ՞ս եղեւ, որ արդ այժմ պատրաստ կամ: Պատմեց ամենայն ճշմարտութեամբ, թէ մինչ մտէր դու ընդ դուռն եկեղեցւոյն, առժամայն պնտեցի զկնի զարկի եւ առաքեցի զգանձն տուն իմ եւ ես եկի այսր: Ապայ թէ հրամայէ դարձեալ առաքել զգանձն ուր պարտէր գնալ եւ այլ:

Հ. Խոստացար զերիս բանս յայտնել ի Ռուստաց: Ուրեմն շնորհէ յայտնել զմնացեալ զերկրորդ եւ զերրորդն, թէ նմանին այս զարմանալի գործոցն, թէ՞ ոչ:

Պ. Ասացիր մնացեալ երկրորդն ոչ է երկրորդն, այլ անթիւք են, բայց թէ ես միայն յանձն առայ յայտնել զերրորդ բան, որպէս որ ձերն, մնացեալն ըստ այսմ օրինակի յիմանան մեր ազգն եւ զարմանան ձեր գործոցն վերայ:

— Երկրորդ բանն այսպէս լինի ի քաղաքն Մօսկօֆ: Այր ոմն վաճառական է ընդունելութիւն վասն բարեկամաց իւրոց, /218b/ նոյն օրն կորնչի ի դրացեացն, սուգ մի: Աղախինն, վաճառականին որոնելով, գայ հասանէ ի դուռն այն ընդունելութիւն անօղ վաճառականին, գտնէ զթեպուրն սագին ի մեղ աւիլուք եւ ի տանն դեքին: Սագի տէրն գնայ առ դատաւորն, գանկատէ, թէ այնիղ վաճառականն իմ սագն գողացել է: Ածեն այրն առ դատաւորն. ուրանայր, թէ՝ իրաւ որ ես զենի սագ մի, բայց գնեցի զնայ: Այսպէս մնան երկոքեանն ի բանտի յեօթն ամ, իւրաքանչիւրն երկիցս մտանեն ի տանչանս. ոչ նայ խոստ գայ, թէ՝ գողացայ եւ ոչ միւսն ներէ նմայ, քանզի այսպէս սովորութիւն է ի մեղ Ռուստաց. նախ տանչեն զգողն, որ ոչ խոստ գայ, ապայ թէ սկսեն նոյն տանջանքն տալ գանկատօղ ապրանաց տիրոջն, թէ գուցէ ի զուր մատնեաց եւ որ նայ պնտանայ եւ ոչ խոստ գայ, ապա թէ թոյլ տան յերկոցունցն մնալ այնպէս մինչ որ առողջանան վերքն երկոցունցն, զորս ընկալան ի տանջանացն. որպէս որ վերո[յ] յայտնեցաւ տանչանքն նոցա, զկնի ցեօթ ամաց փոխի դատաւորն այն ատենատանն եւ տան ի ձեռն Եւրօբացի լօթերանի[45] միոջ, իբր գայ եւ հասանէ իշխանութիւն: Սկսէ քննել զամենայն կարելոց բանն, մինչ հասանէ այս երկու վաճառականաց դաւն, զարմանայ յոյժ, առժամայն կոչէ երկոքին յառաջի յիւր, յանդիմանէ զնոսա եւ ասէ՝ որովհետեւ գիտէք ձեր դպրաց ստութիւն եւ ձեր դատաւորաց անաստուածութիւնն, մի՞թէ ոչ էր /219a/ պարտ խնայել ձեզ, զձեր ապրանն, ձեր տունն եւ ձեր ընտանիքն, յաւել զձեր զանձն եւ հաշտիլ ընդ յիրար ի միջի ձերում, որ մերկացայք ամենայն ընչից ձերոց եւ յետ մնացիք ի գործոց ձերոց եւ այնքան տանչանս կրեցիք իզուր եւ այլ. եւ ապայ թէ հարցանէ, թէ քանի յէ սագի գինն այս յերկիրն: Պատասխանեն՝ վեց կօպէք, որ լինի 60 դիան պարսից 12 փող եւ օսմանցւոցն՝ 5 փարայ: Առժամայն հանէ դատաւորն իւր քսակէն 6 կօփիկ եւ տաց կորուսանօղ սագին եւ արձակէ զնոսա ի տունս իւրեանց:

Հ. Ասացիր, թէ Եւրօբայ դատաստան չկայ, ապայ տես, որ եւրօբացին ողորմեցաւ եւ արձակեաց այն երկու վաճառականն:

45 Լութերական:

Պ. 'Ի Եւրօբայ ազգ շատ կան, ես միայն թէ վասն փափապաշտից ասի եւ ոչ վասն լօթերանաց եւ կալվինացն[46] ասի: Ես բաւուք գիտեմ, որ նոցա մեչն ուղղութիւն կայ, թէպէտ նոքա յել յերկարեն փոքր ինչ եւ ոչ որպէս զձեզ, բայց հատանեն վճիռն ուղիղ:

Հ. Շնորհէ պատմել զերրորդ բանն Ռուստաց, որպէս որ խոստացար:

Պ. Յամի Տեառն 1724, յորժամ որ կապեցին զիս ի քաղաքն Ղասիմօվ[47] եւ ածին ի բանտ ընդ մահապարտսն, իբրեւ երեկոյացաւ, լուցին ճրամ, նայեւս ճրագ մի եւս տարան ներքսագոյն բանտն: Անկարծ տեսի անդ կին մի, զարմանք կալաւ զիս, թէ ինչ պատճառէ կայ կինս այս աստ: Բայց ոչ աւատայի աչացս, բազում անգամ աստ եւ /219b/ անդ հայեցի թէ միգուցէ երեւոյթք իցէ, դարձեալ պշնուի անդ, տեսանէի, որ էր ստոյգ կին. մանանէր մատմանաւ վուշ եւ տղա մի՛ի գրկին, որ յիշեցուցանէր եւ այր ոմն առ ընկեր: Դեռեւս ոչ [հ]աւատացի աչացս, մինչ որ հարցի բանտարգելոցն եւ ստուգիւ յիմացայ, թէ էր կին, առ որ հարցի զպատճառն, պատմեցին, թէ այր եւ կին են սոքայ: Յաւուր միում վիճին ընդ յիրար, աստ ոչ կրեմ զստոյգն գրել, քանզի մոռացայ, ոչ գիտեմ թէ այրն գայ գանկատիլ ի կնոչէն, թէ ի առնէն, ինչ եւ իցէ, ասացին, թէ ահայ երկու տարի յէ, որ աստ կան ի բանտիս: Առաջին տարին ոտաներն էր շղթա[յ], ահայ մէկ տարի յէ, որ շղթայքն բացան: Բացի այս գրկի մանկանեն գոյ այլ եր[ե]ք եւ շորք, որք են ի տան իւրեանց անտէր: Եւ մէկ օր այրն գնայ մուրանալ եւ տանի ի լուսամտէն հացն տայ մանկացն եւ աւելորդն բերէ աստ եւ ուտէ ընդ կնոչն, միւս օրն նոյն օրինակաւն առնէ կինն՝ գնալով ի մուրանալ, ահայ զայս զարհուրեալ զայրացաւ հոգի իմ ի փորի յիմում, ասի՝ այլ ուրիշ պատճառ չկա՞յ, ասին՝ ոչ: Ասի՝ ապայ ընդէ՞ր ոչ հաշտին, պատասխանեցին՝ վաղուց հաշտիլ են: Ասի ապայ ընդէ՞ր ոչ արձակեն զդոսայ ի բաց: Ասացին՝ պարտ է, որ գրեն մին հաշտացու զեկարան, որ նորա վերայ ձեռնագրէ դատաւորն, որ ապայ թէ թողուն զնոսա, գնալ ի բաց, ասի՝ ապայ ընդէ՞ր ոչ /220a/ գրեն զեկարան: Ասին՝ ըստակ չունին, որ զայտ առնեն, հարցի՝ որչանք ստակ պիտի, համարեցին, թէ՝ 120 դիան, որ լինի պարսից 24 փող, օսմանցւոցն՝ 10 փարայ: Իբրեւ լուայ զայս, պակաւ լեզու իմ, հարկեցայ լռել, ո՜հ տարի մի՞թէ ոչ՝ գոյր անդ ի քաղաքին աստուածասէր ոք, որ այն փոքրիկ ծախն առնէր՝ ազդելով այր եւ կինն, հանգերձ չորս եւ հինկ մանկամբքն եւ կամ զինչ էր, եթէ այն դպիրն ոչ առնոյր վարձ զզեկարան գրելոց եւ այլ: Ապայ թէ շնորհեցի 200 դիան, որք զերծան, եթէ Աստուած ոչ էր այցել նոցա, որ ես ոչ էյի պատահել անդ, կարծեմ թէ մինչ ի ցայսօր կային անդ՝ ի բանտի ողորմելիքն այն: Ահայ վասն այսպիսի այլ իրաց ես ասեմ, թէ չիք դատաստան ի Եւրօբայ, ուրեմն ամաչի եւ լուռ լե՛ր:

Հ. Այտ քու ասածն մեծ անողորմելիութիւն է, ի մեր Եւրօբայ այտպիսի գործ քաւ լիցի, ռուսք եւրօբացի չեն:

Պ. Ռուսք եւրօբացի չեն, ապայ ի՞նչ են: Մի ամաչել եւ մի ուրանալ զնոսա, թէ եւրօբացի չեն, խրատ տամ քեզ՝ ասայ եւրօբացի յեն, բայց են այլ ազգ եւ ոչ ի մերմէ: Իրաւ որ, այլ ազգ են, բայց Լէօփոլ կայսրն[48] յորժամ որ յընկալաւ զՊետրոս թագաւորն Ռուստաց եւ շնորհեց նմայ իւր երկգլխեայ արծիւն[49], այն ժամ մինչի Յարեցին համարեցան յերկիր Եւրօբայ եւ կալ մինչ ի ցայսօր եւ այլ մանաւանդ, որ յընկալան ի ձէնճ ամենայն կարգ եւ սահման, յաւել որ յուսան դատաստանն /220b/ի ձենճ, որ համանման է դատաստանն նոցա ձեր դատաստանին եւ ոչ յաւել մազ մի[50]: Միայն թէ դուք տաք զլեղին

46 Կալուինական:

47 Քաղաք Ռեազանի մարզում:

48 Լեոպոլդ Ա (1640-1705) - Սրբազան Հռոմէական կայսրութեան միապետ:

49 Իրականում Ռուսական կայսրութիւնում երկգլխանի արծուի պատկերն աւելի հին կիրառութիւն ունի:

50 Եղիա Մուշեղեանն ակնարկում է Պետրոսի իրաւական բարեփոխումների հիմքում համաեւրոպական արժէքների որդեգրումը:

© National Library of Armenia

ռամկաւ՛ց ըմպել ոսկի բաժակաւ, նոքա՝ տան փայտեայ ամանաւ: Դուք, որ խորամանկ էք, պաճուճէք զձեր պակասութիւնն, բայց նոքայ, որ միամիտ են, ոչ կարեն պաճուճել:

Հ. Եթէ ի մեզ չիք դատաստան, ապայ յո՞ւր գտանի ուղիղ դատաստան, զի եւ մեք յուսանիմք ի նոցանէ առնել ուղիղ դատաստան:

Պ. Ոչ ուրեք չիք ուղիղ դատաստան ի վերայ յերկրի, բաց ի դատաստանէն Աստուծոյ: Բայց կերպիւ իմն փոքր ի շատէ լինի ուղիղ դատաստան ի մէջ Թուրքաց եւ պարսից եւ ոչ այլ ուրեք, զոր ես տեսի եւ լսեցի:

Հ. Որպէս ոչ է ամօթ քեզ, որ այսքան քրիստոնէութիւնն քամահեցիր եւ Թուրքի դատաստանն գովեցիր, որք են անօրէն:

Պ. Ասաց Եսայեայս, Թէ՝ վայ է այնոցիկ, որ ասիցեն խաւարին լոյս, լուսին՝ խաւար, *եւ Տէրն մեր պատուիրեց Թէ՝* մի՛ սուտ վկայել[51]: *Մի՞Թէ կամիս, որ վասն քոյ անցանիցեմ զպատուիրանաւն Աստուծոյ եւ ընդունիմ վայ ի մարգարէէն: Զի՞նչ Թգուտ է ձեզ անուանիլ քրիստոնեայ, որ երբեք ոչ եղեւ գործ ըստ անուան ձերում, որպէս որ ասաց Տէրն՝* ծառ ի պտղոյ յիւրմէ ճանաչի[52], *կամ* արարէք ծառ բարի եւ զպտուղն նորա բարի, *եւ դարձեալ Թէ* ծառ՝ *չար եւ այլ: Եթէ դուք բարի եւ ճշմարիտ քրիստոնեայ լինէյիք, զգործն ձեր համեմատէյիք ըստ /221a/ անուան ձերոյ: Ընդէ՞ր դառն Թուեցաւ քեզ զբանն իմ, որ ճշմարտութեամբ ասի, Թէ դատաստանն Թուրքաց լաւ էր, քան զձերն, այնպէս եւս դառն Թւէր հրէյից ճշմարիտ խօսն Յիսուսի, որժամ որ կուրութիւնն նոցա յայտնէր նոցա, բայց նոքա որ ոչ կամէյին ուղղել զինքեանս գայթակղեալ գնային ի բաց, որ պարտ էր նոցա մտածել, Թէ զոր ինչ որ ասէ ի վերայ մեր՝ ճշմարիտ է եւ Թէ սուտ: Եթէ ճշմարիտ է, ապա ուրեմն բարեկամ մեր է, լփցուք նմայ սիրօվ եւ փարիցուք զնովաւ եւ եթէ սուտ է՝ ապա Թէ հակառակիցուք: Նմանապէս դուք տեսէք, եթէ իմ ասածն սուտ է, հակառակեցէք, եթէ ճշմարիտ է, ընդէ՞ր ոչ ուղղէք զձեզ մատուցանելով Աստուծոյ փառս, որ յայտնեաց ձեզ եւ կամեցաւ, զի ուղղիցիք:*

Հ. Զի՞րդ ոչ դառնանամ, որ գովես զկաշառ առնօղ Թուրքն: Ուր որ կաշառ առնանի, անդ ոչ կարէ լինիլ ուղիղ դատաստան:

Պ. Այտ իրաւ է, կաշառն կուրացուցանէ զաչս դատաւորաց: Թուրքն առնու կաշառ, ոչ ամենայն ոք, այլ ուրեք ուրեք, տասանցն հազիւ Թէ մեկն, նայեւս անտէրունճ արանցն եւ ոչ ի յամենեցունց: Մի՞Թէ դուք ոչ առնուք, բազումս տեսի եւ ի անթիւցն լսայ, որ դուք առաւել առնուք, քան Թէ տաճկացն, որ ես վկայեմ, որ ոչ կամիմ յերկարապատում լինիլ, քանզի դուք ինքնին գիտէք, որ կառնուք եւ բաւ է տաճիկն, եթէ կառնու կաշառ, փութօվ հատանէ զբանն եւ զրկեալն գնայ աշխատի /221b/: Աստուած հասուցանէ այն զրկանքն, բայց դուք առնուք զկաշառն, ոչ ուղիղ եւ ոչ Թիւր դատաստան առնէք եւ ոչ արձակէք, որ գնայն դարձեալ աշխատիլ եւ լցուցանեն զզրկանաց տեղն, ողորմելիքն այն ատոր ինչ կասես: Ասացիր, Թէ մեք կաշառ չեմք առնուլ, ասայ ինձ ապայ, այն Հռոմայու կարտինալաց 75 ոսկին ո՞ւր գնաց, որ ոչ Թէ վասն գողութեան եւ կամ Թէ վասն այլ ինչ մեծ իրաց, համարէր այլսն միո[յ] ճուլու, որոց մեկն ասէր, Թէ՝ պարտ է ինձ եւ միւսն պատասխանէր, Թէ՝ ոչ այտպիսի Թեթեւ դաւիցն վերայ ծիծաղին տաճիկքն, նայ եւ ոչ հասուցանեն առ դատաւորն, դռան սպասաւորքն հատանեն զվճիռն եւ վարեն ի բաց եւ կամ Թէ ո՞ւր գնաց այն վանատիկցուն ամենայն փարթամութիւնն, որ միայն Թէ մնաց տունն միայն:

Հ. Այտ քու ասածն ծախս է, որ գնա[յ] վասն դպրաց եւ վասն նօտարաց եւ վասն փաստաբանից եւ այլոց, այդ ոչ է կաշառ:

Պ. Ես կամաչէյի այտպիսի խօսք արտաբերել. կա՛մ դուք խելք չունիք, որ դատաստան անէք եւ փութօվ հատանէք զվճիռն եւ կա՛մ կարի անողորմ ագահ էք: Քոյ զրուցօվ քեզ այպանեմ, եթէ դուք ճշմարիտ եւ ուղիղ քրիստոնեայ էք, ընդէ՞ր ոչ փութանակի հատանէք զդատն, որ ոչ լինի այն ծախսն, ասես վասն

51 Հմմտ. Մատթ. ԺԵ 19, Մարկ. Ժ 19, Ղուկ. ԺԸ 20

52 Հմմտ. Ղուկ. Զ 44, Մատթ. Է 17-20

այն յերկարեմք, որ ուղիղ լինի: Յերբոր փութանակի հատանէք, զվճիռն ոչ լինի ուղիղ, յերբոր երկու կողմանց երկու տուն աւիրէք, այնժամ ուղղին ջայ եղուկ /222a/, որ ոչ ունիք խիղճ մտաց: Ուրեմն զմի ի երկուցս այսցանէ պարտիս ընդունիլ. կամ ասել, Թէ ոչ ունիք գիտութիւն, որ փութօվ վճռէք եւ կամ ասել, Թէ՝ հոգուծի այնպէս առնեմք, որ դպիրքն եւ դատաւորքն շահին ինչ, որով ապրին: Դուն ամաչես եւ ոչ զօրես տալ ճշմարիտ պատասխան, բայց ես պատասխանեմ ի տեղի քոյ եւ ասեմ, որ երկունն ալ կ[ը]նդունիս:

Հ. Մեր դատաւորքն ոչ կարեն առնուլ քրբմ[53], քանզի բազումք են եւ ոչ որպէս տաճկաց, որ ամէն իշխանութիւն լինի միոյ ձեռին որպէս որ կամի այն կողմն Թիւրէ:

Պ. Այտ արդար ասացէր, Թէ մերն բազում են, դուն նսեմացուցիր, այլեւս Աստուծով պարզեմ: Կամէյիր ասել, Թէ՝ մերքն բազումք են, մինչ ի որ ոչ յագին ամենեքեանն ոչ հատանեն զվճիռն. ձերոց նման մին չէ, որ փութօվ յագի եւ փութօվ հատանէ զվճիռն:

— Հարցնեմ քեզ, ընդէ՞ր եւ դուք եւս ոչ տաք զդատն մի մարդու, որ փութօվ յագի եւ փութօվ կտրէ զվճիռն: Ասես, Թէ մեք ոչ հաւատամք միոյ, երկուսի եւ երեքի, այլ տամք բազմաց, որ ոչ կարենան Թիւրել զդատն եւ առնուլ զկաշառ, այլվի նսեմացուցէր, այտ պատճառն երեւելին է եւ ոչ ներքին աներեւոյթն: Ահայ ես յայտնեմ զներքինն, ոչ ապաքէն վասն ապրելոց բազմացուցիք զդպիրքն, զի նովաւ ունիցին զկեանս, որպէս որ վերո[յ] գրեցի, Թէ երկու ստինք ունի Եւրոբայ: Մինն ծրծէ Թա[գա]ւորն, /222b/ զմիւսն՝ կրոնաւորքն փափին: Զիք այլ գործ, որօվ ապրին ողորմելի ժողովուրդն, անճար մնան: Ոմանք յակամա[յ] լինին զինուորք եւ ոմանք յակամայ կրոնաւորք եւ ոմանք դպիրք եւ դատաւորք եւ այլք:

— Այս ամենայն շնորհեմ քեզ եւ հարցանեմ ի քեն բան մի, ընդէ՞ր ձեր բանտարգեալքն բազումք են եւ կապեցեալքն անթիւք, ի՞նչ նշան է այս: Ամաչես պատասխանել: Ես ասեմ, կա՛մ ձեր մարդն կարի յոյժ չարագործ է եւ կա՛մ Թէ չունիք դատաստան: Այս յայտնի երեւի ամենեցուն, Թոյլ տամք, եթէ չարագործքն բազումք լինին, եթէ գոյին դատաստան, ոչ այնքան աճէր բազմութիւն կապելոցն: Ժողովէ ամենայն կապեալն ի ամենայն Թագաւորութեանն Տաճկաց եւ Պարսից ի մի վայր եւ տես, Թէ կարէ՞ գտանել այնքան, որքան է ձեր մին քաղաքի կապեալն: Այս եւս ի՞նչ նշան է եւ կամ ի՞նչ պատճառաւ: Ոչ ապաքէն վասն դատաստան չը լինելոյն այտքան բազմանան կապեալքն: Դուն քեզէն տուր իրաւն, եթէ ունենայիք դատաստան, ուստի՞ աճէր այնքան բազմութիւն կապեցելոցն:

Հ. Վերո[յ] գրեցիր ի կողմանէ դատաստանաց: Երեք բան ի մերոցն եւ երեք բան ի Ռուստացն. այն ամենայն պատմութենէ երբեմն շատ սուտ [յ]օրինէն եւ պատմեն:

Պ. Բարի յէ, լինի այնպէս, Թէ բազմիցս [յ]օրինէն սուտ, բայց դատաստանի բանն այլոց պատմութեանց նման չէ, որ [յ]օրինէն սուտ, ասին յառակաց, Թէ երեւելեօքն ճանաչի աներեւոյթն եւ անցելեօքն /223a/ ապառնին, քանզի ամէն օր կերեւի նշանն յայտնապէս եւ ոչ ի Թագստեան: Ես վերո[յ] գրեցի վեց բան: Իրաւ որ, չորսն ի նոցանէ լսեցի, գիտեմ, որ ոչ է սուտ, քանզի ոչ Թէ լուա[յ] ի օտարաց, ի այլ ազգաց եւ ի Թշամեաց, այլ ի ազգէն ձերմէ: Բայց երկունն ես տեսի աչօք իմօք, մինն՝ Հռոմ գալօղ յոյն վաճառականին որդին, որ եկաւ մտանել ի դատաստան ի տեղի հօրն եւ զմիւսն՝ Ղասիմօվ քաղաքին առն եւ կնոչն դատն, որ ես իմ ձեռօվն ազ[ա]տեցի: Ասո[ն]ց ի՞նչ կասես, իրա՞ւ են, Թէ՝ ոչ:

Հ. Ատոք իրաւ են, կ[հ]աւատամ ատոց:

Պ. Եթէ այս երկունն իրաւ է, այն ամենեքեանն են իրաւ եւ դուն գիտես, որ այնպէս է: Թողումք այս ամենայն, ապա իմ բանին համար ի՞նչ կասես, որ ոչ անցեալ պատմութիւն է եւ ոչ ապայգայ մարգարէութիւն, այլեւ անցանք իսկ չարչարեցայ երեք տասան ամ ի ձեռն Ռուստաց եւ երկու տարի՝ ձեր յերկիրն եւ մինչ ի ցայսօր

53 անընթեռնելի

© National Library of Armenia

չարշարէմ իզուր եւ ի տարապարտուց: Ի՞նչ չար էյի արարել, եւ ի՞նչ վնաս գտին ի յիս եւ կամ ի՞նչ դատաստանաւ վճիռ հատին, որ պարտական լինէյի այնքան անտանելի չարշարանքն կրելոյ:

Հ. Ձքեզ այլ ինչ պիտոյ էր դատաստանաւ դատել, քանզի ամենայն աշխար[հ] յարեան ի վերայ քո, թէ մահապարտ է, բայց ողորմեցան քեզ, որ ոչ սպաննին, այլ միայն չարշարեցին զքեզ, որ քաւիս ի մեղաց:

Պ. Հրէյեայքն եւս ամենայն ի մի բերան աղա/223b/ղակեցին առաչի Պիղատոսի վասն Յիսուսի, թէ՝ մահապարտ է, մի՞թէ յիրաւ էր: Գիտեմ, որ ամենայն աշխար[հ] յարեն ի վերայ իմ, թէ՝ մահապարտ է, բայց յո՞ւր էր ձեր գիտութիւն եւ յիմաստութիւն, որ պարծիք, թէ մեր դատաստանն արդար է եւ ուղիղ, ապայ ընդէ՞ր վասն իմ եղեւ սուտ:

— Պողոս առաքելոյն վերայ ամբոխեցան քաղաքն ամենայն, բայց բազումք ի նոցանէ ոչ գիտէյին, թէ վասնորոյ իրաց ամբոխեալ էր ամենայն քաղաքն: Նմանապէս ինձ վերայ: Մի՞թէ ամենայն ամբոխումն իրաւ գլնի կռապաշտ հայրապետն, ցրվեց ամբոխն եւ ազատեց զՊողոս, միայն թէ ոչ էր արժան պատժել զոք մինչ որ ընդդէմ ամբաստչի տեղի պատասխանւոյ առնու դատախազն եւ այլ: Եթէ ունիք դատաստան, ընդէ՞ր ոչ անդիման կացուցէք զիս ընդդէմ ամբաստչին իմոյ, զի լուիցէյիք յինէն պատասխան եւ ապայ թէ հատանէյիք զվճիռն չարշարելո[յ] զիս: Ո՞ ոք առանց պատասխան տալւոյ մեղապարտին չարշարեցին: Ոչ ոք՝ բացի ձէնջ:

Հ. Քրիստոս վկայեաց, թէ՝ յերկու եւ երեք վկայիւ հաստատի ամէն բան: *Քեզ վերայ վկայօղքն անթիւք էյին, այլ ի՞[ն]չ դատաստան պարտէր առնել վասն քոյ եւ հարցանել ի քեն պատասխան, մի՞թէ դուն կամէյիր զքեզ խայտառակել առաչի ամենեցուն եւ խոստովանիլ զմեղն քոյ, որ այտ անհնար է, սակաւունս գտան ի մէկ աշխարհի ի մեղապարտից, որք յանձն առին յիւրեանց մեղն եւ խոստովանեցան առաչի յամենեցուն, թէ են մեղապարտ:*

/224a/ *Պ. Ի՞նչ մեղ դրին ի վերայ իմ թշնամիքն իմ եւ վկայեցին վասն իմ մահապարտ գոլ:*

Հ. Ռուսք կամէյին բարեկամութեամբ, առանց պատերազմի տիրել յերկրին Պարսից. բայց դուն յայտնեցիր Պարսից, թէ Ռուսքն ձեր թշնամի յեն, այնուհետեւ Պարսք եւ ոչ այլ յաւելին լսել դատաստանացն:

Պ. Ոչ բարւոք ասի, թէ չիք ի ձեզ դատաստան, այտ զրուցն ինձ ոչ էր վնասակար, որ ոչ խոստովանեցի առաչի ամենեցուն, թէ ասի Պարսից, թէ Ռուսքն ոչ են ձեր բարեկամ, այլ թշնամի, քանզի ամենայն ոք պարտ է հաւատարմութիւն պահել իւր մեծաւորացն, բարեկամացն եւ ազգականացն յիւրոց:

— Այս է իմ գանկատն, թէ ընդէ՞ր ոչ հարցին յինէն, թէ դուն այտ բան ասացիր, թէ խո[ս]տանայի հարցանէյին զպատճառն, թէ ընդէ՞ր կամ ի՞նչ պատճառի ասիր: Դուցէ այնպիսի մին մեծ եւ ծանր պատճառի վասն ասած լինէյի, որ արժանի լինէյի պսակի եւ ոչ մահու, եթէ ուրանայի եւ գաղէյի զայտ բանն, ապայ թէ լսէյին վկայից: Արդ տեսիր, որ չիք ի ձեզ դատաստան եւ կամ ընդէ՞ր այն չարախոսիցն ոչ հարցին սկսեալ յառաջնոյն մինչի վերջն, թէ ուստի՞ գիտացիր, թէ Էլիաս Մուշեղն այտ բան ասաց: Տեսանէյին, թէ այն անթիւ արանցն գոնէ գտնիւր մի միայն հոգի, որ լսած լինէր ի բերանւոյ իմմէ զայտ բան, բացի քափուչին յընկերէ իմմէ: Արդ ապայ ո՞ւր է երկու եւ երեք վկայն, որ դուն ասացիր, թէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասաց, թէ երկու եւ երեք վկայիւ հաստատի ամենայն բան, *արդ ուրեմն այն երկու /224b/ եւ երեք վկայքն եւ կամ այն անթիւքն, միայն թէ մնաց մին քափուչին Օվանէսն: Այն մին քափուչինի զրուցաւն գլնի չարշարել զոք, ոչ, ապայ ոչ ունիք քննութիւն եւ ոչ դատաստան: Եթէ ունենայիք դատաստան, այն քափուչինն պարտ էր այրել, որ այտ խոստովանանքն եւ խորհրդո[յ] բանն յայտնեց ձեզ եւ ոչ զպարագայսն նորին: Եթէ ճշմարիտ քրիստոնեայ լինէյիք, պարտէյիք պատժել զնայ եւ զիս փառաւորել: Որ ոչ ունէիք ուղիղ դատաս-*

տան, այնպէս արարիք, Հայս, որ թագաւորութիւն ունէր, փառաւորիցիք, ես անտէր հայկիկ մէյի՝ պատժեցիք իզուր: Ինձ ասացիր, թէ դուն բացայ յայտեցիր Պարսից, թէ Ռուսքն թշնամի էյին, վաղուց սկսել էյին Ռուսքն այտ գործն, բայց յայտնեցին իւրեանց թշնամութիւնն զկնի յերկրաժարժին, իբրեւ որ յաճախեցին զօրքն Ռուստաց գալ ի յերկիրն Պարսից եւ Պետրոս թագաւորին գալն ի Դարպանտ էր թիւն 1720: Ես այն զրուց, որ ասի եպարքոսին, էր թիւն 1723 նոյեմբ[ե]րի ամսոյ, որ կամէյի յելանել յերկրէն Պարսից եւ գնալ ի Կիլան ի մէջ Ռուստաց, ապա ուրեմն անցել էր երեք տարի, որ ռուսք տիրել էյին առ ծովեզերն Պարսից սկսեալ ի Սուլաղու մինչ ի Կիլան: Ապա այս երեք տարվան մէջն, որ այնքան պատերազմն, որ եղեւ ի միջի նոցա, օ՞վ էր պատճառն: Այն ժամանակներն շահն ի Սպահան էր եւ ես՝ ի Դավրէժ: 1721 թիւն գնացի ի Սպահան, որ պաշարեցաւ ի Աղուանից քաղաքն, մնացի անդ /225a/ պաշարած, մինչ ի թիւն 1722 եւ ապայ եկի ի Դավրէժ, տեսի, որ Ռուսքն տիրել էյին ամենայն ծովեզերն: Ապայ տեսի՞ր, որ չիք ի ձեզ քննութիւն եւ դատաստան: Այնքան անխելք համարեցաք ազգն Պարսից, որ այնքան երթեւեկութիւնն Ռուստացն ոչ յիմացան, թէ Ռուսքն թշնամի յեն: Մինչ ի ցայն օրն, որ ես ասի, թէ Ռուսքն թշնամի են ձեզ, իբր թէ քնած էյին ջայ. յերբոր ես ասի, այն ժամանակն զարթեան:

Ես ո՞ւր էի այն ժամանակն, որ Մուստաֆա խան զօր[ա]վարն[54] վեց հազար արամբ առաքեցին ի Կիլան, որ ոչ թողու Ռուստացն յառաչել եւ մտանել յերկիրն յիւրեանց: Ես որ գնացի Կիլան, զօրավարն նստէր ի Աստառայ եւ իւր փոխանորդն՝ ի Կասկար, նոր փարատել էր պատերազմն ի քաղաքէն ըՌաշտայ, յորում նստէր զօրաւարն Ռուստաց Լեւաշովն[55]: Ես որ գնացի, հաստատեցի ի միջի նոցա խաղաղութիւն, որքան որ ես Կիլանն էյի մնացի, խաղաղութիւն, երթեւեկութիւնն էր ի միջի նոցա, զկնի փոխելոյն իմ անտի եւ գնալոյն ի Հաշթարխան, ապայ թէ դարձեալ շփոթին:

Ես յո՞ւր էյի այն ժամանակն, որ թագաւորն առաւ զԴարբանտ[56] եւ պատերազմաւ առին զՊաքուլեա ամրոցն[57] եւ այլքն, որ կարգաւ առին:

Հ. Արդ այժմ հաւատացի զոր ինչ որ ասացիր, է ճշմարիտ եւ ստոյգ, որ ի այտ կողմանէ եղել է քեզ մեծ անիրաւութիւն վասն քոյ. արդարեւ ես վկայեմ ընդ քեզ, որ այտ բանիտ համար չիք դատ/225b/աստան ի մեզ, բայց աղաչեմ, զի ասես ինձ զճշմարիտն, թէ ի՞նչ պատճառաւ կամ ի՞նչ դիտաւորութեան վասն ասացիր Պարսից, թէ Ռուստն ձեր թշնամին է:

Պ. Այտ հարցունքն ոչ պատկանի քեզ հարցնել եւ ոչ ինձ՝ քեզ ասել, քանզի անցաւ ժամանակն, եթէ քափուչին Օվանէսն այս խոստովանութեան խորհուրդն յայտնած չը լինէր Ռուստաց, որ ես ամբողջ գնացած լինէյի ի Եւրոբայ, անդ յայտնեցի թագաւորացն ձերոց եւ առնէյի ի նոցանէ պսակ, արդ այժմ ի՞նչ օգուտ է ինձ իմ ասելն քեզ առ ի աղէկիզիլ, բաւական է, որ ես տիւ եւ գիշեր այրիմ եւ տոչորիմ, մի՛ լիցի վասն քոյ, լուեսցուք:

Հ. Ասացիր, թէ ձեր թագաւորացն, մի՞թէ ոչ են եւս վասն քոյ թագաւորքն:

Պ. Ոչ են իմ. եթէ իմն լինէին, ոչ թողէյին զիս այնքան չարշարիլ ի Ռուստաց եւ կամ յորժամ որ զերծայ եւ դիմեցի առ նոսա, այնքան չէյին անարգել զիս, զոր ինչ որ կամէյի վասն նոցա եւ կամեցայ առնել, փոխարէնն հատուցէ ինձ Աստուածն իմ եւ ինչ որ նոքայ արարին ինձ, մի համարեցի նոցա Տէրն մեր եւ Աստուածն մերո[յ] նմանապէս, զոր ինչ որ վասն

54 Աստարայի սարդարը, որի հետ Եղիան նամակագրական կապ ունէր:

55 Левашов Василий Яковлевич (1667-1751) — Պետրոսի Պարսկական արշաւանքի մասնակից, հետագայում՝ Ռուսաստանին միացուած Գիլանի մարզի կառավարիչ: Մինչեւ 1734 թ. կառավարում էր նաեւ ռուսների կողմից գրաւեալ մերձկասպեան տարածքներում:

56 Ռուսական զօրքերը Դերբենտը գրաւեցին 1723 թ. օգոստոսի 23-ին:

57 Ռուսների կողմից Բաքուի գրաւումը տեղի է ունեցել 1723 թ. յուլիսի 28-ին:

© National Library of Armenia

Ռուստաց կամէի եւ կամեցա[յ], փոխարէն հատուցէ ինձ Աստուածն իմ եւ զոր ինչ որ նոքա չարչարեցին զիս, իզուր թողցէ նոցա Տէրն մեր եւ մի՛ համարեցի մեղ:

Հ. Ի՞նչ կամեցիր առնել վասն թագաւորացն մերոցս եւ զի՞նչ վասն Ռուստաց, ասայ, զի տեսից եւ լուայց ի քէն:

Պ. Եխպա՛յր, այտ խնդիրն խիստ է ինձ, քանզի յերկար պատմելն ձանձրանամ, կարճ բանիւ ոչ առնուս /226a/ քաղցրութիւն: Եթէ ոչ էր իմ կամն բարի վասն նոցա, ոչ խնդրէի ի Աստուծոյ փոխարէնն իմ յանձէն եւ ոչ կամէի գնալ յերկիրն նոցա, քանզի ես թագաւորի պէս կապրէի ի յերկիրն Պարսից: Հաշուէ, թէ ես եղի թագաւոր: Արդ ընդէ՞ր թողի եւ գնացի, կամէին գնալ, որ անդ այլ առաւել մեծութիւն գտանիմ ոչ, քանի Աստուած զիս մեծացու[ց]ել էր յոյժ այնքան, որ ոչ ոք ի նախարարացն բազմէր ընդ շահին բացի յինէն: Վասն սիրոյ եւ վասն բարեկամացն նոցա, մանաւանդ վասն օգտի ազգին իմոյ, թողի զայն ամենայն փառքն, պատիւն եւ մեծութիւնն, գնացի անդ, քանզի այնպէս կհաւատայի, թէ իմ թագաւորք են, եթէ ոչ համարէի նոցա թագաւորք իմ ոչ գնայի եւ այլ: Միայն թէ որքան որ կամէի վասն Ռուստաց այս բանիւս յիմայու այսու կարես յիմանալ այլոցն եւ իմ պատրաստած բարին վասն նոցա:

— Թէպէտ վաղուց գիտէի, թէ Պետրոս թագաւորն գալոց է փրկել զազգն մեր, բայց առաջի անգամն, որ գնացի Շամախի եւ հաստատապէս լսեցի, թէ ամենեւին Ռուստ թագաւորն գալոց է առնուլ յերկիրն Պարսից վասն փրկելոյ զմեզ, առժամայն ուխտ եդի յանձին իմոյ ասել ամենայն յաւուր հինկ Հայր մեր եւ հինկ Ողջոյն Մարիամ, յիշատակաւ սրբազանից հնկից վիրացն Յիսուսի Քրիստոսի:

Այսու դիտաւորութեամբ, թէ Տէր Աստուած զմի ի տասանց կենացն իմոց հատ յինէն եւ դիր ի վերայ կենացն Պետրոս թագաւորին, Տէր, տուր նմայ առաւել կարողութիւն, զօրութիւն, որ ամենայն յաջողութեամբ գայ եւ ազ/226b/ատէ զմեր ազգն եւ այլ այս աղօթքն սահմանել էի տուել ի դէմ սուրբ պատարագին. յորժամ որ քահանայն ասէր առէ կէրէմն, առժամայն բարցրացուցանէի զերկոսիմ բազուկս իմ եւ ամենայն մտադրութեամբ եւ ջերմ արտասուօք երգէի վերոյ հինգ Հայր Մեր եւ Ողջոյնն մինչի վերջն: Եթէ ոչ լինէր տեսանել զպատարամ, առանձին ասէին ամենայնն, աւուրս կենաց իմոց, մինչի այն օրն, որ հրամանաւն նոյն Պետրոս թագաւորին կապեցին երկաթեաւ զերկոսին զբազուկսն իմ. այնուհետեւ այլ ոչ կարացի բարձրացուցանել բազկունքս իմ, դադարեցայ այլ առաւել աղոթելոյ, քանզի յընկալա[յ] զարիտուրն, բայց Աստուածն իմ արդարադատն վաղվաղակի արար արդար դատաստան այն աւուրն, որ կապեցին զբազուկն իմ. զկնի չորս ամսոյ նորա կենացն հատեց Աստուածն իմ. նայ առաւ վախճան եւ յաւելեաց Տէրն իմ զկեանն իմ, որոյ մատուցանեմ անդադար գոհութեամբ եւ փառք ի մի յաւիտեանս յաւիտենից. ամէն:

— Տես, եխպա՛յր, թէ գոյր ի մէջ Ռուստաց եւ կամ ի մերոցս, որ այր ոք հատանէր իւր կենացն եւ գայր Ռուստ թագաւորին. ոչ ոք. բայց ես ետու, տես եւ վասն Աստուծոյ լաւ քննէ: Այր ոք որ այսքան ջերմեռանդ սէր ունենայ ընդ ումեք, գլնի հաւատալ, որ հակառակ գործէ ըն[դ]դէմ սիրելոյն այն: Եթէ ես այլ ազգ լինէի, եւ ոչ հայ, կարելի յէր [հ]աւատալ, թէ ես հակառակ նորա գործէի, այլ ես էի ազգաւ հայ եւ որ վաղուց /227a/ գիտէի այտ գործն, թէ ռուս թագաւորն կամի ազատել զազգն իմ տառապեալ: Զի՞րդ կարէի զայդ գործ գործել, որ ոչ էր արժան եւ անհնար վասն իմ: Ոչ թէ միայն ես գիտէի զայտ գործն, այլ եւ ամենայն ազգն իմ, այր եւ կին, ծեր եւ տղայ, եւ ամենեքեանն յայտնապէս խոսէին, եւ ոչ ի ծածուկ, որպէս ես զօրէի գործել հակառակ ռուստաց, որ ամեն օր տեսանէի զտառապանն, զթշուառութիւնն եւ զգերիլն ազգին իմոյ: Եթէ ես մէկ այլ յուրիշ հասարակ արանցն հաւասար շինէի, կարելի յէր հաւատալ այտ գործ, բայց ես զիս դրել էի մէկ բարի քրիստոնէի նման, բամպասես, թէ զիս գովեցի, ես եմ քան զամենայն ոք

անարժան եւ մեղաւոր յոյժ, սակայն ոճ բանին այնպէս պահանջէր ասացի:

— Ինչ այլ առաւել ասեմ քեզ, որ այլ առաւել լաւ [հ]աւատաս. ես զիս յում նմանէցուցանէմ, ոչ նախա[ն]ձայոյզ եղիայի, եւ ոչ Մովսէսի, այլ առաւել քան զնոսայ: Նոքայ ջանային միայն բարութիւն ասգին իւրեանց եւ ոչ կամեցին տալ զանձն փրկանս փոխանակ ազգին յիւրեանց: Բայց ես յօժարեցի եւ իմ յօժար զանձն իմ մատուցանելոյ ի փրկանս փոխանակ վասն ազգին իմոյ եւ ոչ խնայեմ, եթէ Աստուած այժմոյս առաքէր վասն իմ հրեշտակ եւ ասէր ինձ, թէ՝ տուր զքո յանձն ի մահ վասն ազգին քոյ, ես շնորհէմ քո ազգին ազատութիւն, եւ թագաւորութիւնն /227b/ առժամայն, պատրաստ լինիմ եւ յօժար կամօք զուարդագին դիմօք մատուցանեմ զանձն իմ: Տես, թէ գո՞յ այր ոք ի ազգի մերում, որ տայ զանձն իւր. ոչ ոք. եւ կամ թէ կա՞յ այր ոք ի մէջ ազգին մերոյ, որ իւր կենաց տասն տարի մէկն շնորհիցէր թագաւորին Ռուստաց. ոչ ոք: Եւ այս իմ կենաց շնորհումն ռուստ թագաւորին վասն յէր էր, եթէ ոչ վասն փրկութեան ազգին իմոյ. այս էր իմ դիտաւորութիւնն թէ, եթէ կարճէլին կեանն թագաւորին, իմն լինի վասն նորա, որ սկսած գործն կիսատ չը մնայ. մինչ որ ամենայն բանն կատարէ եւ հասցուցանէ ի աւարտ:

— Եթէ ոչ էր իմ վասն Ռուստաց բարի կամիլն եւ բարի խորհիլն, ոչ մատնէր զիս քափուչինն, քանզի՝ յորժամ որ ռուսք յաճախեցին յելանել ի վերայ Պարսից, մանաւանդ որ բազմանային օր[ը]ստօրէ ի գաւառին Կիլան, բազում անգամ գանկատէին ինձ իշխանքն պարսից ի Ռուստաց, թէ դուն կասես, թէ ռուսք վասն բարեկամութեան եւ վասն օգնութեան ձերոյ եկին այսր: Արդ որպիսի՞ բարեկամութիւնն է այս, որ տիրէցին ամենայն տեղ առ ծովեզերս, մանաւանդ ի Ռաշտ, շինեն զբերթորայս եւ ամրացեալ հաստատեն զինքեանս, այս ինչ նշան է. ամենայն զրուցից պատասխանն, ըստ պատշաճին, տայի եւ սրտագիւր հեշտ առնէի զնոսա, մանաւանդ վասն շինութեան բերթորէիցն ասէի նոցա՝ սովորութիւն եւ ծեսն Ռուստաց այնպես է, որ յորժամ /228a/ որ զօրքն նոցա բանակին իւրեանց երկիրն քարշեն շուրջանակի զպատնէշս վասն զգուշութեան, արդ ասա, որ յերկիր օտար է. կամի՞ք, որ առանց պատնէշի բնակին: Պատասխանեցին՝ յիւրեանց յերկիրն քարշէն փայտեա[յ] պօզտունս, մինչ յելանեն, դարձեալ փակեն եւ տանին, բայց ասա ոչ է փայտեայ. այլ քարշէն հողէ պարիսպ որպէս զբերթ, պատասխանէի՝ միթէ կարելի յէր անցուցանել զծօվն այնքան բազմութենէ նոցա պօզտունացն եւ ածել, այսր տեսիք, որ ձի եւս ոչ ունին, որ հարկաւորագոյն, քան զամենայն ինչս: Եթէ դուք ունենայիք ասա մայրի, շինէին զփայտեա[յ] պօզտունս, որ ոչ գոյ, հարկաւորին շինել հողէ պարիսպս, եւ այլ նմանս սոցայ բազում ինչս ասէի, որ ասա անտեղի չէ ամենայն բանն մի ըստ միոչէ գրել, որ ոչ եմ բաւ. այսքանս գրեցի վասն հաւատարմացուցանելոյ զքեզ, որքան որ ես անդ էի ընդ շահ Թահմազին եւ ի Կիլան ոչ թողէի պատերազմիլ, ասէի դուք կարօտ էք օգնչի, հատիր եկածն ոչ ընդունիք այտ ինչպէս բանէ ոչ ամաչէք եւ այլ: Եթէ ես ոչ լինէի անդ, ճշմարտապէս հաւատայ, որ ոչ թէ շինել զբերթ, որ այս եւ կամ տիրել ծովեզերացն կարէին տիրել ռուսքն, եւ ոչ թէ յելանել ի ցամաք եւ ըմպել զջուր միայն եւեթ, այնպես յիմանաս: Զոր ինչ որ ես կամեցայ վասն նոցա, ժամանակին այն եւ արարի վասն նոցա, դարձեալ ասեմ հատուցէ ինձ Տէրն իմ եւ բաւէ, որպէս որ վերո[յ] ասի, թէ իբրեւ որ տեսանէր զայս ամենայն արարն իմ քափուչին Օվանեսն եւ իմ ջեր/228b/մեռանդ սէրն վասն Ռուստաց, նախա[ն]ձեցաւ եւ անկաւ ի կարծիս, թէ միգուցէ ի յայտնին ծառայեմ Ֆռանցիգաց, եւ ի ծածուկս՝ Ռուստաց, ոչ կարաց հանդուրժել եւ լուել անիմաստն այն, որ ամբողջ հաստանէի առ թագաւորսն քրիստոնէիցն, այլ խառնեաց զբանն իմ եւ մատնեց զիս Ռուստաց, թէ եմ բարեկամ պարսից եւ Ֆռանկացն, մատնեց, թէ եմ բարեկամ յՌուստաց եւ թէ խաբէ զմեզ, թէ ծառայէ մեզ եւ այլ:

© National Library of Armenia

— Քանզի իբրեւ զկնի յերկրաշարժին[58] գնացի Խսպահան եւ խոստացայ ծառայել ֆռանցիզաց եւ ապա թէ անտի եկի ի Դավրէժ: Այսքանս բանս, որ վերո[յ] գրեցի, այն ժամանակին էր, որ Սպահանա[յ] դարձել էյի եւ եկել ի Դավրէժ, ես անդ սբաղէյի ի գործս ֆռանցիզաց: Ես միամիտ կարծէյի, թէ ամենից քրիստոնէյից թագաւորքն միաբանեն վասն այս գործոցն յսկութեան վասն Ռուստի գալն ի վերա[յ] Պարսից եւ այլ:

— Զանձրացուցի զքեզ շատախօսութեամբ իմով, թողութիւն շնորհէ, ուստի բանից ոճն այնպէս պահանչէր: Բայց ասեմ քեզ ճշմարիտն եւ ոչ ստեմ, [հ]աւատայ, եխպայր, որ եթէ քափուչին Օվանէսն իմ բանն խառնած չը լինէր, որ ես ամբողջ գնացած լինէյի ի Եւրօբայ, այժմ ամենայն յերկիրն Պարսից քրիստոնէյութիւնն էր եւ ոչ յարիր այս Նատիր շահն, եւ ոչ կորնչէր այսքան իմ տառապեալ ազգն, որ կորան խսպառ, որպէս որ պատճառ եղեւ, քափուչինն պատասխան տայ Աստուծոյ, ապայ /229a/ ուրեմն, այսինքն բարեաց խաբանումն եւ այսինքն չարեաց բողբոջումն պատճէն է ձեր անդատաստան լինիլն, եթէ վաղվաղէյիք եւ փութայիք ազատել զիս, ճաշակէյիք այն ամենայն դատաստան լինիլն, եթէ վաղվաղէյիք եւ փութայիք ազատել զիս, ճաշակէյիք այն ամենայն քաղցրութիւնն, որպէս որ զրկեցիք զմեզ, նոյնպէս դուք զրկեցաք եւ զրկիք:

Հ. Առաջ, քան թէ հարցանելն զքեզ մեր սկսած բանին վերայ, հարցանեմ քեզ, թէ դու զո[հ] առնես զքեզ, որ վերո[յ] ասացիր, թէ յում նմանեցուցանեմ զիս, ոչ Եղիայի եւ ոչ Մովսիսի, այլ առաւել քան զնոսայ:

Պ. Ի սկսբանէ դուք այդպիսի ազգ էք, որ թողուք ուղիղն, պարզն եւ միշտ հետեւիք թիւրոցն եւ զթիւր կողմն առ հակէք: Զիա՞րդ կարեմ ես զիս նմանեցուցանել Եղիայի եւ Մովսեսի եւ առաւել, քան զնոսա, որ նոքա սուրբ էյին, եւ ես՝ մեղաւոր, եւ անարժան: Երանի թէ արժանի լինէյի համբուրել միայն պատուանդան ոտից նոցայ: Ես ասի, թէ թէպէտ նոքա կշանային բարութիւն, բայց ոչ տային զանձինս յիւրեանց վասն ժողովրդեանն, այլ ես յօժարեմ ի տալ, Տէրն մեր հրամայեաց լինիլ միամիտ եւ գովեց զմիամտութիւն եւ ոչ պարզամտութիւնն տղայոց եւ հրաւիրեց մեզ լինիլ պարզամիտ որպէս որ մանկտիս: Բայց դուք միշտ հետեւէք խորամանկութեան, վասնորիկ պղծելի ամենայն միտն եւ զխորհուրդն ձեր, վասն զի ոչ կարէք դատել եւ ի դատելն ոչ հաճիք փութանակի հատանել զվճիռն /229b/, կարծկոտէք, երկնչիք, թէ միգուցէ լինիցի այսպէս այլ այնպէս, որպէս որ էք դուք, կարծեք զայլս որպէս որ զձեզ: Որպէս որ վկայեաց Տէրն մեր թէ՝ որպիսի կարէք խորհիլ բարի, որ դուք սաստէք[59] եւ այլ:

Հ. Տարակուսութիւն էր ինձ յորժամ որ խոսէյիր ի վերո[յ] դատաստանացն մերոց, քանզի անցեալ պատմութիւնն ոչ է ամենեւին հաւատալի, բայց վերո[յ] երկու բանն, որ դուն տեսիր, մանաւանդ որ քո բանն ամենայն, որ ճշմարտութեամբ յայտնեցէր ինձ, յոյժ հաւատացի եւ ես, միաբանեալ ընդ քեզ, վկայեմ վասն այդորիկ, թէ չիք ի մերոցս դատաստան. մեղանչեցին մեր պետքն, որ ոչ ջանային եւ ոչ փութացան քննել զայտ իր՝ հաւատալով միայն քափուչինացն. պարտ էր եւ լսել քեզ. բայց հարցանեմ քեզ այս մէկ բանն, զի ասես ինձ զճշմարիտն, թէ իրա՞ւ է յորժամ, որ ոչ թողին ռուսք զքեզ գալ ի մերս, այլ ի Փէթրպօռքու դարձուցին զքեզ ի յետս, թէ գնայ ի Հաշթարխան ծառայէ մեր թագաւորին, իբր թէ որպէս որ աւերեցիր մեր բարեկամութիւնն ընդ Պարսից, նոյնպէս դարձեալ հաստատէ, որպէս որ առաջն:

58 Նկատի ունի 1721 թուականի ապրիլի 15-ին Թաւրիզում եւ շրջակայքում տեղի ունեցած ուժգին երկրաշարժը: Ժամանակագիրը յատկապէս նշում է երկրաշարժի երկար տեւողութիւնը եւ զոհերի հսկայական քանակը. «... այնպէս աճագին երերեալ եւ տատանեալ մինչեւ ի ՃԽՌ (140.000) մարդ մեռեալ եւ բազում տեղ երկիր պատառեալ եւ բազում տունս մարդկամբ փլեալ» (Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրութիւնը,- տե՛ս *Մանր ժամանակագրութիւններ ԺԳ.-ԺԸ. դդ.*, հտ. II, կազմեց Վ. Յակոբեան, Երեւան, 1956, էջ 430):

59 Հմմտ. Մատթ. ԺԲ 30

Պ. Այդ ամենայնին սուտ է, ոչ կամեցան յերկար պահել զիս ի Փետրբօռք, զի մի չփցեն դեսբանքն Եւրօբայու եւ յարին խնդրել զիս, եւ լիցի յաղմուկն եւ խռովութիւն: Այտպիսի պատրանօք առաքեցին ի յետս, բայց ոչ ասեն, թէ գնայ եւ հաստատէ բարեկամութիւն եւ այլ: Այլ միայն թէ ասին ինձ, թէ յառաջ մեք ինչ որ գրէաք Պարսից, ընդունեցին մեր զրուցն, դուն պատճառ /230a/ եղար, որ այլ ոչ ընդունին: Մեր թագուհին շնորհեց քեզ քոյ մեղն, ունէյիր եւ թէ ոչ, արդ գնայ ի յԱշտարխան, զոր ինչ որ մեր սպառապետ Մաթուշքինն[60] քեզ բանի վերայ դնէ, այնպէս արայ: Թէ որ լաւ անես, քեզ համար լաւ գլնի, թէ որ վատ անես, քեզ համար վատ գլնի: Այսպէս դարցուցին ի յետս եւ դրին ի կալանս ի բերթն Կրասնայեարա, մնացի անդ մօտ երեք ամ, ո՛չ սպառապետ տեսի եւ ո՛չ գործ ինչ, զի գործէյի:

Ուր էր, թէ այնպէս արած լինէյին, Աստուծով փութանակի յայտնէյի նոցա իմ անմեղութիւնն եւ առժամայն որոշիւր ճշմարտութիւնն ի ստութենէն. հպարտացն ազգն Ռուստաց ինձ վերայ երախտիք բարձին, թէ շնորհեցաք քեզ. իբր թէ մեղապարտ եւ մահապարտ էի, վասն Պետրոս թագաւորին հոգւոյն շնորհեցին ինձ ի կեան, եթէ անիմաստքն այն այտպիսի պարզ բանիւ ինձ ասէյին, թէ ահա՛ քեզ վերա[յ] այսքան մեղ դրին. արդ տես եւ խորհեայ դուն ի քեզ վասն քոյ, եւ մեզ հաւատարմացուոյ զքո ճշմարտութիւնն: Եթէ այս ամենայն մեղ, որ քո վերա[յ] բարդած է, եթէ ճշմարիտ է, որ դուն գործած լինիս՝ մահապարտ ես, եթէ ոչ՝ փառաւորեմք զքեզ: Ոչ ասին այնպէս, այլ արկին յանձն իմ ի չարչարանս եւ օր աւուր նորոգէյին, վասն նոցայն նոքայ ոչինչ կարացին առնել առանց ինձ, եւ ես անկայ ի զանազան խոկմունս, այսպէս ոչինչ եղեւ ամենայն բանն եւ զվաստակն իմն եւ նոցայն, եւ ես իզուր կրեցի զչարչարանս եւ զրկեցայ ի կենաց. պատճառն, որ /230b/ դատաստան չունիք. Վնասեցին ինձ եւ վնասեցան ինքեանք, որպէս որ մեղուն ամենայն մերձեցողաց առ փեթակն յիւր առհասարակ հարու զկիճն իւր մարդոց, կարծէ, թէ վասն մեղեր հպին առ ինքն, ոչ ճանաչէ, թէ ոյք են, որ կթեն զմեղրն եւ ոյք են, որ միայն վասն հայելւոյ մերձենան առ ինքն: Վասն այն անզանազան հարու զկիճն վնասէ մարդուն եւ մեռանի ինքն:

Հ. Մեղանչեցիր, որ ոչ յայտնեցիր յՌուստաց զճանապարհն բարեաց, որ ոչ վնասէյին, որպէս որ ասէ Տէրն մեր, թէ՝ բարի արարէք ատելեացն ձերոց[61], որ թոյլ եւտուր ոչ լինիլ այն ցանկալի բարին վասն նոցա եւ վասն ազգն քոյ եւ քեզ:

Պ. Թէպէտ բազումք են պատճառքն, բայց ես աստ յայտնեմ քեզ հինգ բան.

— Նախ որ խիստ անարգեալ չարչարեցին զիս եւ տառապեցուցին զանձն իմ, այնքան բազմացուցին ի վերայ իմ նեղութիւն եւ վիշտն, որ մոռացա[յ] ամենայն ինչ, եւ հոգացի միայն վասն կենացս եւ սբաղէյի ի զանազան խոկմունս:

— Երկրորդն, որ խաբեցին զիս, խոստացան դնել զիս ի վերա[յ] գործոց եւ ոչ դրին:

— Երրորդն, որ տեսի՝ իմ ազգն ամենայն յարուցեալ էյին ի վերայ իմ, եւ հակառակ ինձ, որոց վասն աշխատէյի, որպէս որ հակառակեցան իսրայէլացիքն Մովսէսի, թէ՝ ո՞ կացոյց զքեզ դատաւոր ի վերայ մերո[յ][62], որ նայէր նոցա փրկիչն, ասի՝ որովհետեւ այտպես է թոյլ տամ եւ տեսանեմ, թէ ռուսք ազատեն զնոսա եւ թէ իսպառ կորուսանեն:

— Չորրորդն, /231a/ որ եթէ ես առանց հրամանի զիս ներխառնէյի ի գործս, ոչ գայր համեմատ գործոց եւ օրինաց, քանզի վատահամբաւեցայ, եւ որ ռուսք կարծկոտեն որպէս որ ձեզ, եթէ ի մէջ գործոցն, յանկարծ անկանէր սխալ ինչ ամենեւին ինծանէ գիմանային, եւ

60 Матюшкин Михаил Афанасьевич (1676-1737) - գեներալ, մասնակցեց Պետրոսի պարսկական արշաւանքին: Պետրոսի վերադարձից յետոյ գլխաւորում էր ռուսական զօրաբանակը ամբողջ մերձկասպեան շրջանում:

61 Ղուկ. Զ 27

62 Հմմտ. Եղ. Բ 14

© National Library of Armenia

զիս իսպառ կորուցանէին, որպէս որ վերո[յ] գրեցի, թէ ասացին ինձ նախարարքն, թէ՝ եթէ վատ անես՝ քեզ վատ գլնի եւ այլ:

— Հինկերորդն, որ առանց հրամանաց Ֆռանցիզ թագաւորին ոչինչ կամեցայ առնել, որպէս որ օրէն էր եւ հարկն պահանջէր, քանզի ես նոցա անուամբն էյի եւ այլ: Գոն բազում պարագայս, այժմ կարես ասել, թէ մեղանչեցիր, ոչ այնքան զգուշութեամբ պահէին զիս, որ եթէ թռչուն ոք մերձենար առ յիս, կարծէք անկանէին եւ սպանանէին այն թռչունն, զի միգուցէ գիր եւ կամ լուր ինչ հասուցանէմ ի յունկն շահին: Այնքան հաստատեալ էյին ի միտս իւրեանց, թէ եմ բարեկամ շահին եւ թշնամի յիւրեանց, վասն այսորիկ թոյլ ետու եւ սկսայ հայիլ ի հեռաստանէ որպէս օտար ոք: Տէ՛ս էսպայր, ասաց Տէրն մեր հրեից, թէ՝ եթէ ոչ նախ կապիցէ զիզօրն եւ ամենայն տուն նորա աւարի հարկանիցէ[63]: Արդ զիս կապեցին, ասէյին, թէ առիթն ես եմ, զի ոչ կամէյի, թէ ռուսքն գան: Ապա, յո՞ւր է նոցա աւարն եւ նոցա առած տունն: Իմ ժամանակին ինչ որ առել էյին, զկնի մետասան ամաց զայն ես յետ տվին պարսից եւ ի յետս չոքան:

Հ. Այդ ամենայն պարագայսն, որ ասացիր, է արդար պատճառ, բայց զօրանայիր բանիւ Տեառն, մերժէյիր ի բաց այտ ամենայն պատճառն ի բաց, զբանիւ Տեառն յաղթէյիր բարեաւն /231b/ չարին, գերազանց աստիճանաց արժանի լինէյիր:

Պ. Որովհետեւ իմ ասածն ոչ մտաւ ի յունկն քոյ, հարկաւորեմ լռել, ուստի լար, թէ առանց խնդրանաց, մեծաւորոք բռնութեամբ շնորհեց ինչս ուրուք, կամ ընկեր՝ ցընկերոջն, ոչ, այն Տէրն, որ ասաց, թէ՝, բարի արարէք ատելեաց ձերոց, նայեւս ասաց, թէ՝ մի արկանէք զմարգարիտս ձեր առաչի խոզանց[64]: Պիտի ատելին խնդրէ ի յէն, որ դուն հարկաւորիս առնել նմայ բարի, այտ բան Տէրն մեր ինքնին ոչ արար, զի բռնութեամբ տայր արքայութիւնն իւր հրէյիցն, այս հարցմունքն յաւելորդ եղեւ է՛ քեզ, է՛ ինձ պատասխանելն աշխատեն:

Հ. Այտ բան առաւել հաւատարմացուցնէ զքեզ, քան զամենայն բան, զայտ արդար ասացէր եւ որ ասացիր, թէ զիս կապեր են, արդ յուր է նոցա աւարն եւ կամ առած տունն եւ ապրանն: Արդ, հարցանեմ քեզ բան մի, որ ոչ մնայ տարակուսութիւն ի մեր զրուցիցն վերայ, զի շնորհես ասել ինձ զճշմարիտն: Գուցէ դուն խորհրդաբար հաստատե՞լ էյիր ընդ շահին զքո բանն եւ ասել, թէ պիտ կաց մինչ որ յինէն հասանէ քեզ լուր ինչ, ապայ թէ՝ այնպէս գործեայ զգործն քոյ, վասն այն յամառեցան ընդդէմ Ռուստաց:

Պ. Այտ յամառումն Պարսից պատճառ եղեն ռուսք ինքեանք, քանզի ի ներքուստ խոստանային բարեկամ Պարսից եկեալ վասն օգնութեան նոցա եւ արտաքուստ գործովն յիւրեանց յայտնէցին թշնամութիւն, որ խելահար եւ աչացու լինօղն ես յիմանայր, թէ են /232a/ խաբեայ եւ հաստատ թշնամի, վասն այսորիկ յետս խրտեցան պարսք ի Ռուստաց եւ սկսեցին պատերազմաւ ընդդիմանալ յՌուստաց եւ ասէյին Պարսք, թէ՝ եթէ մեր բարեկամ էք, եւ թէ վասն օգնութեան մերո[յ] եկիք այսր, արդ ընդէ՞ր շինէք զբերթորայս եւ ամրանայք ի նոյնն եւ վնասէք եկամտին մեր թագաւորին, յառաջ մատիք, ոչ կոչեցաք զձեզ վասն շինելո[յ] զբերթորայս, այլ միաբանիլ ընդ մեզ եւ պատերազմիլ ընդ թշնամիսն մեր: Մեր թշնամին ահայ Իսպահան է, շնորհեցէք յառաջ մատիք: Բայց ոչ անսային, այլ օր աւուր ամրանային եւ հաստատէյին ի վերայ տիրած յերկրին: Արդ, դուն տուր ի քէն յիրաւն, եթէ դուն շինէյիր անդ ի տեղի պարսից թագաւորին, ի՞նչ կառնէյիր անդ, այլ ինչ պիտոյ էր, յաւել ոք, զի ասիցէր շահին, թէ ռուսք ոչ են ձեզ բարեկամ, յաւելին ողորմելի պարսք ասել յՌուստաց, թէ յիւրաքանչիւր զօրականի տամք ամէն ամսէն մին թուման, տուք մեզ երկոտասան այրս, զի ընդ մեր զօրացն երթիցեն Իսպահան: Ոչ ետուն եւ ոչ քայլ մի ոտից առին: Արդ օ՞վ է այժմ մեղապարտ: Ոչ առաքեն ռուսք ինքեանք: Այտ քու

63 Հմմտ. Մարկ. Գ 27

64 Մատթ. Է 6

կարծած բանն կարելի յէր լինիլ եւ կարէր պատճառ տալ կարծեաց, եթէ երբոր ես ըմբռնեցայ առժամն իմ ամենայն բանն ճշմարտութեամբ, իմ լուրն եւ իմ գիրն հասուցած լինէյին շահին, թէ կալանաւորեցաւ Յեահիյեայ բէկն[65]: Բայց ասին շահին, /232b/ թէ Յեահիյէ բէկն ապստամբեցաւ եւ դառնցաւ ի քէն եւ միաբանեցաւ ընդ Ռուստաց եւ քոյ տված նոմայքն մատուց Ռուստաց թագաւորին: Արդ այլ որո՞յ յուսոյ շահն յամառէր, որ լսեց, թէ ապստամբեցայ ես յիւրմէն: Այտ ամենեւին սուտ է եւ կարծիք յունայն:

Հ. Զամենայն եւ զորքան որ գանկատեցիր իմ ազգին, իրաւունք ունիս, եւ զամենայն զոր ինչ որ տարակուսութիւն ունէյի, լուծիր: Մին բան մնաց հարցանելւոյ, ապայ ընդէ՞ր այտքան հակառակ կացին քոյ ազգն նայեւ պարսք եւս:

Պ. Մի՞թէ պատճառն ոչ լար վերո[յ], որ ասացի, թէ՝ պատրեցիք զազգն իմ եւ թելադրեցիք զնոսա այնպէս առնել հակառակ ինձ, որպէս որ յուսան, այնպէս արարին եւ համարեցան բարեգործութիւն: Եթէ իմ ազգն միամիտ եւ պարզամիտ չլինէր, ոչ այնպէս հակառակէյին, որպէս որ վերո[յ] գրեցի, թէ նոքա՝ պարզամիտ եւ դուք՝ խորամանկ, խաբեցիք զնոսա: Նոցա արած հակառակութիւնն ոչինչ համարեցայ, զի ներեցի նոցա, քանզի ոչ գիտեն, թէ զինչ գործեցին, եւ կամ թէ զինչ գործեն եւ յայս ունիմ յԱստուծոյ, որ Աստուած ոչ համարի նոցա՝ մեղ, քանզի միամիտ են: Բայց վայ ձեզ, որ դուք չարչարեցիք եւ ուսուցիք այլոց, զի չարչարեն զիս: Ապաշաւեցէք, գուցէ Աստուած թողցէ եւ ձեզ, որպէս որ ես թողի ձեզ, թէպէտ զրկեցիք զիս ի մարմնաւոր եւ ի հոգեւոր բարեացն իմ, բայց Աստուծով արդիւնաւորեցայ հոգեւորն: Յոյժ շնորհակալ եմ ի ձենն, որ /233a/ յակամայ արդիւնաւորեցուցիք զիս: Բայց եթէ դուք գիտենայիք, թէ զրքան դուք զրկեցիք զձեզ ի հոգեւորաց եւ ի մարմնաւորացն, որ լինելոց էր վասն ձեր, այժմ ես ոչ կարեմ [յ]այտնել ձեզ: Բայց աղաչեցի Տեառն իմոյ, որ շնորհիցէ անարժանիս այնքան կեան, որ յայտնեմ ձեզ վասն մարմնաւոր բարեացն: Այնժամ եղուկ կարդաք եւ կոծէք զանձն ձեր, բայց վասն հոգեւորացն ոչ է պիտո[յ] լինիլ ձեզ վարդապետ վասն ձեր, քանզի դուք ինքնին յիմանաք այնմ ժամանակի ամենայն բան:

Հ. Ապա Պարսք ընդէ՞ր հակառակեցան եւ վնասեցին քեզ ...

Պ. Ո՞չ ամաչես կրկին յանդիմանել: Մի՞թէ ոչ լսեցիր եւ ոչ էր բաւական քեզ, որ լար վերոյ պատճառն, որ գրեցի, թէ խաբեցիք զնոսա, եւս եթէ օրինաւոր եւ հաւատացեալ ազգն հայոց խաբեցիք, որ ազգ իմ էին, ապայ ինչ զարմանք է, թէ խաբէյիք ազգն օտար եւ անհաւատն, որ ոչ էյին ազգ իմ, եւ ոչ ցաւէր զսիրտն նոցա վասն իմ:

Այսքանս բաւեսցի վասն սոցայ:

* * *

/253b/ Հ. Դուն մեր երկրի հրաշն ոչ ինչ համարեցար, նայեւ խաբեբայ եւ սուտ ասիր:

Պ. Ապա ընդէ՞ր դուն մեր աչաց շիւղն քննեցիր, որ ես հարկաւորէյի քննել զձեր աչաց գերանն: Դուն զանց արարէր պատուէրն Յիսուսի, որ թողիր զքոյ աչաց գերանն եւ քննեցիր զմեր աչաց շիւղն: Ես հարկաւորեցայ պատասխանել ձեզ եւ զնետս ատելութեան դարձուցանել ձեզ, քանզի դուք ջանաք մեր կրոնաւորքն ատելի առնել մեր ազգին, որ մեր ազգն ատէ զնոսա եւ սիրէ զձեզ, հեռանան ի նոցունց եւ մերձենան առ ձեզ, որ եկամուտն կտրի ի մեր վարդապետացն եւ գայ առ ձեզ: Բայց ես գիտացի ձեր հնարն եւ ձեր խաբէյութիւնն [յ]այտնեցի մեր միամիտ ազգին, որ ոչ պատրեալ անկանին դարձեալ ի ցանս ձեր, որ այսու բանին աչքն իւրեանց, դարձեալ դառնան առ ծնօղ եւ հոգաբարձու մայրն իւրեանց: Ընդէ՞ր խաբէք զմեր ազգն, եթէ ճշմարտութեան ծառա[յ] լինէյիք, ոչ խրատէյիք մերոցն, թէ գնացէք ի յերուսաղէմ եւ տեսէք յաջոքն ձերօվք ձեր վարդապետաց խաբեբայ լոյսն, այլ առաչի աչացն ձերոց դնէյիք ձեր անթիւ եւ խաբեբայ հնարիւ հաստատած հրաշն եւ նստէյիք ի լռութիւն,

65 Եղիա Մուշեղեանի գործածական անուններից մէկը պարսկական միջավայրում:

© National Library of Armenia

որպէս -որ դուք առաքեցիք զմերոնքն գնալ ի յերուսաղէմ տեսանելոյ /254a/ զլոյսն խաբեբայ: Նմանապէս ես առաքեմ զքեզ եւ ասեմ.

— Արդ գնայ դուն ի Անգօնայ եւ տես զտունն Լօրեթայ, թէ որպէս կախեալ կայ յօգս[66] *եւ անտի գնայ ի Հռօմ եւ տես զանթիւ խաբէյութիւնս, մանաւանդ զսիւն մարմօրեայ եւ նայեայ զնշխարի ծակած մարմօրեա[յ] սեղանն եւ այլ: Գնայ ի Փեռուչէ քաղաքն եւ տես զմատանին Մարիամու կուսին եւ գնայ ի Վանատիկ եւ տես զարտասուս Մարիամու կուսին եւ զայլ անթիւս, որ անտեղի յէ մեզ՝ մի ըստ միոջէ անուանեալ*[67]*:*

— Դուք ասէք, թէ յերուսաղէմ քանի որ հաւատացելոց ձեռին էր, լոյս ելանէր, յերբոր անկաւ ի ձեռն անօրինաց, այնուհետեւ խաբանեցաւ: Արդ ընդէ՞ր, այտ ինչ զարմանք է, որ ամենայն ինչ, որ ձեր ձեռին է, սուրբ է, բարի յէ եւ հրաշագործ, յերբոր անկանի ի ձեռն այլոց, ոչինչ լինի:

— Եթէ յիրաւ, որ յառաջմանէ գէլնէր, այժմ եւս հարկաւորագոյն էր, զի յելանիցէր. վասն անհաւատից, զի տեսանելով զլոյսն՝ հաւատային, ապայ ուրեմն ի սկսբանէ դուք սահմանել էյիք հնարիւք, քանզի որպէս որ տեսին ի ձէնջ յոյնքն, այնպէս յընկալան, տեսին մեր ազգն եւ հետեւեցան նոցա:

— Յերբոր յերուսաղէմ յելաւ ի ձեռացն ձերոց, այնժամ դարձաք եւ սահմանեցիք ի յերկրի ձերում զզանազան հրաշս, որպէս որ ի Հռօմ զմի եկեղեցո[յ] դրանցն յորմէք եւ ի պայմանեալ ժամանակին քակէք զնայ եւ ասէք՝ ահա՛ դուռն ողորմութեան[68]*, բացան եւ տվաւ ամենեցուն լիակատար ներողութիւն*[69]*:*

— Եթէ այս մեր /254b/ վարդապետքն առնէյին, որքան ծանակէյիք զնոսա, որպէս որ այժմ բամպասէք վասն յերուսաղէմայ լուսոյն, որ ի ձէնջ աւանդութիւն է մնացեալ առ մեզ:

— Որպէս որ դեռեւս միշտ հանէք ամենայն տարւոջ աւագ շաբթուն ի յամենայն եկեղեցիս ձեր զգեստաւորեալ անցուցանէք զամենայն ճրագարանս եկեղեցւոյն, յելանէք ի դուրս եւ փակէք զդուռն եկեղեցւոյն, նոր կրակ շինէք եւ օրհնէք զնայ եւ ապայ թէ բանաք զդուռն եկեղեցւոյն եւ մտանէք ի ներս եւ ապայ այն օրհնեալ հրօվն լուցանէք զմոմն եւ, ծուոր յիջեալ, ասէք՝ Լումէ Քրիստի, որ թարգմանի՝ Լոյսն Քրիստոսի: Եւ այսպէս այն նոր ճրագէն լուցանէք զամենայն ճրագարանս եւ զկանդեղս եկեղեցւոյն:

— Ասայ ինձ, այտ ի՞նչ սահման է եւ կամ թէ օ՞վ սահմանեաց զսայ, ոչ ապաքէն դուք, ապայ ուրեմն մի՛ք բամպասել զմեր վարդապետք, թէ ի յերուսաղէմ լոյս հանեն, ոչ թէ միայն դուք ներհակ էք մեր ամենայն բանին եւ մեր ամենայն արարողութեանն, այլ եւ մեր սուրբ եւ զ[ը]նտիրս արանցն ոչ համարիք սուրբ եւ ոչ զնահատակսն եւ զմարտիրոսն մեր:

— Ընդէ՞ր յորժամ, որ Սուրխայն լազկոց տիրեց Շամախու[70]*, 75 հոգի ի հայոց սպանանեց. վասն քրիստոնէականի հաւատոյ: Դամք յերկուց դեռահաս մանկանցն: Այս մանկունքն յառաջմանէ գերեալք ի գիւղորէյիցն Շամախու եւ կային ի ծառայութեանն Սուրխային: Իբրեւ որ տիրեց Սուրխայն Շամախու /255a/ եւ հաստատեցաւ, այս մանկունքն խնդրեցին հրաման տեսանել զասկականս իւրեանց, որ եւ գնացին: Մինչ դարձան անտի, մատնեցան, թէ ոչ կան օրինօքն տաճկաց, մինչ ստուգեցաւ ի Սուրխայէն, թէ են հաստատ ի վերայ հաւատոյն Քրիստոսի, հրամայեաց սպանանել զնոսա: Զկնի վճռոյն ամենայն մեծամեծքն յարեան ի վերայ սոցայ: Ոմանք խրատէյին, ոմանք խոստանային փառք եւ մեծութիւն եւ ոմանք սպառնային տանջանք եւ զկնի բազում բանից ածին զնոսա ի հրապարակն քաղաքին: Անդ կայր պատրաստ պատիրի Լութովիկոսն Պաշօտ*[71]*: Մինչ չոքեցուցին զմինն, վասն հատանելոյ զգլուխն. միւս յընկերն յորդորէր եւ ասէր նմայ՝ գնա՛յ, եխպայր, գնա՛յ, ահայ ես ալ գու գամ զկնի քոյ եւ հասանիմ քեզ: Զկնի կատարման սոցայ դարձաւ պատրին առ անդի եղեալ հայոցն, ասայ՝ շատ մարտիրոսաց պատմութիւն կարդացի, բայց ոչ լուա[յ] նման սոցա ջեր[մ]եռանդ մարտիրոս:*

— Մինչ դեռ էյի ես ի Սպահան յաւուր միում, պատմեցի զայս գործ անդ եղեալ ճեզուիտ պատրոցն եւ հարցի, թէ՝ պատրի՛, դուք ի՞նչ ասէք վասն սոցայ: Պատասխանեց վանուց մեծաւորն եւ ասայ՝ հահ, նոցա համարել Աստուած մին տեղ է պատրաստել:

— Ո՜հ, զարհուրելի եւ սարսափելի կամապաշտութիւն. ոչ թէ միայն ոչ համարի մարտիրոս, այլեւ ոչ ասեն, թէ գնացին արքայութիւնն: Ընդէ՞ր, զի ոչ ծանեան զփափն եւ ոչ պաշտե-

66 Կոչւում է նաեւ Սանթա Գազա, բառացի՝ «Սուրբ Տուն»: Գտնւում է կենտրոնական Իտալիայի Լորէթոյ քաղաքում: Ըստ՝աւանդութեան՝ սա եղել է Նազարէթի մէջ Յիսուսի եւ Աստուածամօր բնակարանը, որ հրեշտակների կողմից փոխադրուել է այս քաղաքը՝ դառնալով սրբատեղի (մանրամասն տե՛ս **I. Rinieri.** *La Santa Casa di Loreto, 2 Vol., Torino, 1911*, տե՛ս նաեւ Loreto բառայօդուածը *Enciclopedia Cattolica,* Vol. VII, Città del Vaticano, 1951, pp. 1556-1562): Միջնադարեան հայ ուխտաւոր-ուղեգիրներից Սիմէոն Լեհացին ԺԷ դարի սկզբին Անկոնայից Հռոմ ճանապարհին, հասնելով այստեղ, մանրամասն նկարագրում է սրբատեղին՝ աւելացնելով. «... այնպէս մեծ ուխտատեղ է, որ ամէն օր հինգ, վեց հազար հոգի կու գան ուխտ. եւ ցերեկի չկարես մտանել ի նա վասն բազմութեան ամբոխին...» (տե՛ս Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, էջ 78-81): Սիմէոն Լեհացուց քիչ աւելի ուշ Հռոմից Լեհաստան գնալիս Լորեթոյով է անցնում Նախիջեւանի հայ կաթողիկէ թեմի ապագայ առաջնորդ Աւգուստին Բաջեցին, որը եւս իր «Ճանապարհորդութեան» մէջ վերապատմելով քաղաքի հիմնադրման աւանդութիւնը եւ տալով ուխտավայրի նկարագրութիւնը, զարմանում է՝ «մարդի բերան չէ կարիլ պատմել» (տե՛ս **Աւգուստինոսի Բաջեցւոյ** *Ճանապարհորդութիւն յԵւրոպիայ.* - Ք. Պ[ատկանեան], Նշխարք մատենագրութեան Հայոց, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 21):

67 Թուարկուած են աւանդութիւններ ունեցող Իտալիայի նշանաւոր սրբավայր-ուխտավայրերը:

68 Կաթողիկէ եկեղեցում Սուրբ Դռան բացումը կապուած է Յոբելեանական տարուայ հետ (տե՛ս **Virgilio Card. Noé.** *The Holy Door in St. Peter, Roma: Ats Italia Editrice, 1999*): Դեռեւս ԺԷ դարի սկզբին Սիմէոն դպիր Լեհացին իր «Ուղեգրութեան» մէջ, պատմելով Հռոմի Ս. Պետրոսի տաճար իր այցելութեան մասին, Սուրբ Դռան մասին գրում է. «... գնացաք զՈղորմութեան դուռն համբուրեցաք: Եւ ասին թէ Ողորմութեան դուռն յիսուն տարին ապա բացվէր ըստ յոբելինի ազատութեան. եւ տեսան որ հազարէն մէկն չի հասնիլ այն օրն. խնդրեցին կարճել. իսկ Փափն քսանուհինգ ամ արար: Եւ յայնմ ամի, յորում բացվի, յոքնախումբ աշխարհաժողով լինի. զի ամէն երկրէ գան: Եւ տարի մի կամեցաւ Փափն իմանալ զթիւ ուխտաւորացն. եւ եդ մարդիկ ի դրունս քաղաքին եւ գտաւ ՃԼ ընտաւոր» (տե՛ս **Սիմէոն դպրի Լեհացւոյ** *Ուղեգրութիւն տարեգրութիւն եւ յիշատակարանք,* Ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 99):

69 Կաթողիկէ եկեղեցում կանոնաւորուած որոշակիութեամբ նշում են Յոբելեանական տարին, երբ ինդուլգենցիա է տրւում պապի կողմից այն բոլոր ուխտաւորներին, որոնք Սուրբ կամ Յոբելեանական տարուայ ընթացքում գալիս են Հռոմ եւ այցելում յայտնի սրբավայրերը: Բոնիֆացիոս VIII-ի դեկրետով 1300 թ. նշուեց առաջին յոբելեանը: Կղեմէս VI-ը 1349 թ. այն արձանագրեց իւրաքանչիւր 50 տարին մէկ: Պօղոս II-ը՝ 1475 թ. այն արձանագրեց իւրաքանչիւր 25 տարին մէկ: Պապը իրաւասու է հրամանագրով բացառիկ

70 Շամախու 1721 թ. գրաւման մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Եսայի Հասան Ջալալեանց, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի,* Երուսաղէմ, 1868, էջ 22-35:

71 Շամախիում գործող Արեւելահնդկական ընկերութեան գործակալ հոգեւորականներից:

Յոբելեաններ յայտարարելու (մանրամասն տե՛ս **Fr. Gligora-Biagia Catanzaro,** *Anni Santi. I Giubilei dal 1300 al 2000. Città del Vaticano, 1996*): Կաթողիկէ եկեղեցում Յոբելեանական տարուայ արարողութիւնների եւ Հռոմի նշանաւոր ուխտատեղիների մասին տե՛ս նաեւ Հռոմում հայ ուխտաւորների համար հրատարակուած հետեւեալ աշխատութիւնները՝ ա) *Յոբելեան Սուրբ տարի թողութեան, հոչակեցեալ ի Հայրապետէն սրբազանէ Բենեդիքդոսէ երեքտասան երորդէ. ի լեզուն հայոց եղեւ շարադրեցեալ աշխատութեամբ Յօնանու եպիսկոպոսին,* Հռոմ, տպ. Ուրբանեան, 1725, բ) *Նորագոյն ուղղեկցութիւն հրեշտակային հոմէական եւ մշտատեւ, սակս այց առնելոյ զեկեղեցիս ի ներքս եւ ի արտաքս Հռոմայ, ուր հոչակին ուխտք եւ տօնախմբութիւնք: Եւ ի լեզուէ իտալիականէ ածանցեցեալ եւ շարադրեցեալ ի հայկական բաբառն, աշխատութեամբ Թովմաթեցւոյ տեառն Յօնանու վարդապետին եւ եպիսկոպոսին:* Հռոմ, 1725:

© National Library of Armenia

ցին զնայ: Մարտիր/255b/ոս ասէլն ի՞նչ է, որ ապաքէն. այնպէս ունիմք աւանդութիւն ի նախնեաց, թէ այր ոք, որ հրաւիրի ի անօրինաց, թէ դարձիր առ մեզ, տամք քեզ այս եւ այն փառքն, եթէ ոչ՝ սպանանեմք զքեզ: Իբրեւ որ ոչ ընդունի՝ մերժէ յիւրմէն ամենայն փառքն վասն սիրական փեսային Յիսուսի, յանձն առնու զմահն եւ մեռանի, այն է կատարեալ մարտիրոս:

— Արդ [դ]ուք ոչ ընդունիք: Ընդէ՞ր, զի ոչ էր ձերն: Եթէ ձերն լինէր, ոչ թէ միայն մարմինն նորա փառաւորէյիք, այս եւ այն հողն շաղախեալ արեամբն քերէյիք եւ տարեալ հանգուցանէյիք զեկեղեցւոյն եւ ամենայն յաւուրս հնարէյիք զպէսպէս հրաշս: Որովհետեւ մերն է, ոչ ասէք մարտիրոս:_ Նայ եւ ոչ զօրէք ասել, թէ գնաց արքայութիւնն: Վասն է՞ր հակառակիք, վասն [հ]աստատելւոյ ձեր բանն, թէ մեր մէջն հրաշք չի լինիլ:

— Կուռնելիոս ինքն հեթանոս էր եւ էր ի մէջ հեթանոսաց: Ապայ որպէ՞ս եղեւ, որ յանկարծ շարժեցաւ տունն, լցան հոգւով սրբով, նոքա ոչ թէ միայն ոչ էյին քրիստոնեայ եւ ոչ աստուածապաշտ, այլ լոկ հեթանոս: Արդ ընդէ՞ր Հոգին Սուրբ յիշաւ ի վերայ նոցա: Աստուած նախ Պետրոսի յայտնեաց, թէ՝ զամենայն, զոր ինչ, որ ստեղծեց Աստուած, սուրբ են եւ չիմ խոտան ի նոսա[72] եւ ապայ թէ առաքեաց առ հեթանոսն, զի մի խոտան համար/256a/եսցէ զնոսա: Եթէ Աստուած ամենայն կենդանեացն եւ ժըժմանցն սուրբ ասաց, ապայ դուք որպէ՞ս զօրէք մեր ազգին հերետիկոս ասել եւ գարշիլ զմէնջ, որ ոչ եմք անբան անասուն եւ ոչ ժըժմունք, ոչ հեթանոս, այլ եմք մարդ, որդի Ադամայ, պատկեր Աստուծոյ, նայեւ հաւատացեալ ի Քրիստոս եւ եմք քրիստոնեայ եւ եխպայր ձեր:

— Տէրն մեր ասաց, թէ՝ եթէ եխպայր եխպօրն ասէ Մօռոս, պարտական լիցի գեհենն հրոյն[73]: Արդ, դուք ո՛չ առաքելոց արածն եւ ասածն ընդունիք եւ ո՛չ ի Քրիստոսի սպառնալեացն յերկնչիք: Արդ, դուք որո՞յ հոգւո[յ] էք՝ ոչ գիտեմ:

Հ. Ամենայն ոք գովէ մեր կրոնաւորն եւ ձերն պարսաւէ, բայց դուն պարսաւեցիր մեր կրոնաւորն եւ գովեցիր զձերն:

Պ. Ինձ քաւ լիցի թարց պատճառի պարսաւել ումեք եւ կամ թարց պատճառի գովել զոք: Որովհետեւ հարկեցուցիր զիս, վասն այսորիկ որպէս որ են յայտնեցի ձեզ եւ անդիման կացուցի:

— Յորժամ որ տեսանեմք գործ ինչ գործեցեալ ի մեք է գովութեանց արժանի, հարկաւորիմք գովել զնայ, որ փառաւորի Աստուած այնվիկ, որ այնպիսի շնորհ պարգեւեց նմայ եւ որ գործօղն առաւել ջանայ գործելւո[յ] զբարին եւ լսողքն եւս ջանան եւ յուսանին այնպիսի բարին գործել, զի արժանի լինին գովութեանց:

— Վասն այնորիկ պարսաւեմք զչարագործն, որ հրաժարի ի չարեաց, /256b/ նայեւ լսողքն փախչին ի գործոց չարեաց:

— Զայս բան յուսաք ի Տեառնէ, վասն այսորիկ այնպէս առնեմք քանի զի Տէրն մեր եւս, յորժամ որ տեսանէր բարի առժամայն, ուրախանայր եւ զառնօղն բարեաց գովէր եւ վատն պարսաւէր, որպէս որ գովեց զկինն քանանացին եւ այլ, նայեւ պարսաւէր զփարիսեցիս եւ այլ:

— Որովհետեւ ձերքն միայն անուամբ են կրոնաւորք եւ ոչ գործովք, վասն այն յանդիման կացուցի ձեզ զներքին գործն նոցա: Ասացիր, թէ ամենայն ոք գովէ մեր կրոնաւորքն, որպէս որ երեւին արտաքուստ, ամենայն ոք կարծէ, թէ են ի ներքուստ: Այնպէս վասն այսորիկ գովեն զնոսա, որպէս որ ես, յերբոր տեսի արտաքին վարքն նոցա, ամենայն զօրութեամբ իմօվ հետեւեցայ նոցա եւ մայլէի զնոսաւ, քանզի կարծէյի, թէ են ի ներքուստ այնպէս: Բայց զկնի ժամանակաց, յերբոր ողորմեցաւ ինձ իմ ամենաբարի Տէրն եւ խելամուտ արար զիս, տեսի զներքին կերպարանն նոցա, կերպարան սատանայի եւ քննեցի զներքին

72 Հմմտ. Ա Տիմ. Դ 4

73 Մատթ. Ե 22

գործն նոցա, որ ոչ էր համեմատ արտաքնոցն, առժամայն փախա[յ] եւ փախչիմ:

— Մեր կրոնաւորքն, որ ոչ գովին նայեւ ոչ սիրին ի յամենեցունց, պատճառն է այս, որ ձերոց նման ոչ շողոքորթ են, այլ են պարզ, միամիտ. որպէս որ են ի ներքուստ, այնպէս երեւին արտաքուստ: Ոչ են կեղծաւոր եւ խաբեբայ, այլ են հեզ, համբերօղ եւ ժուժկալ եւ այլք:

— Մերքն, եթէ մերձենան ի կին, միայն թէ մին /257a/ մեզ գործեն, զի անցանեն զպատուիրանաւն Աստուծոյ: Ձերքն, յորժամ որ մերձենան ի կին, երկու մեզ գործեն: Նախ, որ անցանեն զ[պ]ատուիրանաւն Աստուծոյ, երկրորդ, որ լինին ուխտազանց: Մեր, որ գործէ բարեգործութիւն, մի՞թէ լսի վասն հոգւո[յ] նորա, ձերն, որ բարի գործէ, միայն թէ պարտականութիւն լցուցանէ, քանզի այնպէս ուխտեաց: Մերն, որ գործէ բարի, իւր արդիւնքն է, լինի վաստակ հոգւոյ յիւրոյ: Բայց ձերն, որ գործէ բարի, լինի վասն նոցա, որք տվին ձեզ կերակուր եւ զամենայն պիտոյսն ձեր:

— Ապայ վասն իւրեանց ի՞նչ մնաց: Ոչինչ, եթէ ոչ միայն եւեթ պատիժ ի պարտականութենէն, որ կերաւ զհացն նոցա եւ մեղանչեց: Ահայ այս է մեր եւ ձեր կրոնաւորաց զանազանութիւն:

Հ. Մի՞թէ ձեր վարդապետքն ոչ ապրին տրօքն ժողովրդեանն: Մեք գիտեմք, որ ամենայն ժամ շրջին քաղաքէ քաղաք եւ ժողովեն զողորմութիւն:

Պ. Իրաւ որ, շրջին եւ առնուն ողորմութիւն, բայց վասն հարկաւորութեան եւ կարեաց վանուցն եւ ոչ վասն յիւրեանց: Քանզի յիւրեանց ձեռագործ վաստակն բաւական լիցի վասն իւրեանցն կելւոյ: Եկէք եւ տեսէք, թէ որպէս վարեն, հնձեն եւ այլ, որպէս որ Պաղոս ասաց, թէ՝ ոչ ումեք ծանրացայ ի վերայ ձեր, այլ ձեռագործօքս կեցի եւ այլ:

Հ. Այտ ամենայն ընդունեցի, բայց դուն գիտես, որ բամպասանքն մեղք է, ընդէ՞ր այդքան /257b/ բամպասեցիր եւ վատհամբաւեցիր մեր եւ ռուստաց ազգն:

Պ. Ապայ դուք ընդէ՞ր բամպասեցիք եւ վատահամբաւեցիք զիս իզուր եւ զոր ինչ որ ասի վասն ձեր, ամենայն ինչ ճշմարտութիւն է եւ ոչ մի ինչ սուտ ասի, նայ եւ անթիւս թողի եւ զսակաւս գրեցի:

— Բայց դուք ի՞նչ տեսիք ի յիս, որ այտքան բարուրանս եդիք ի վերայ իմ, բամպասեցիք, վատահամբաւեցիք, անարգեցիք, վնասեցիք, ատեցիք, նայ եւ ատելի ցուցիք զիս աշխարհի: Եթէ մեղուցեալ լինէյի, տակաւին ոչ էր արժան այնքան շարշարել զիս, քանզի ասացաւ՝ սաստեայ, յանդիմանեայ եւ դարձեալ մխիթարեայ[74], բայց դուք սաստեցիք, յանդիմանեցիք զիս ի զուր եւ ոչ յետոյ դարձեալ մխիթարեցիք զիս:

— Դուք ի՞նչ էք, քրիստոնեա՞յ: Ո՛չ: Աստուածապա՞շտ էք, քաւ լիցի: Ոչ այլ ինչ կրօնի կարացի նմանեցուցանել զձեզ, եթէ ոչ միայն եւեթ չիք [յ]արութիւն, քանզի չիք ի ձեզ խղճմտանք: Եթէ յայտնի եւ երեւելի մեղապարտին հրամայէ մեր Տէրն ներել, արդ դուք զի՞րդ անմեղ շարշարեցիք զիս, արդեօք ոչ հաւատա՞ք յարութեան եւ յԱստուած:

— Երեքտասան ամ ի ձեռն ռուստաց կացի ի արգելանս: Զոր ինչ որ կրեցի ի նոցանէ, ոչ կարեմ պատմել, քանզի անտանելի, անպատմելի եւ ան[հ]աւատալի: Երկու տարի ձեր մէջն շրջեցայ, միայն թէ ոչ էյի կապեալ, տակ/258a/ափն նոյն նեղութիւնն ունէյի, այնուհետեւ յելի յերկրէն ձերմէ, մինչ ի ցայսօր տառապանօք կեամ ի ձէնճ, դեռ եւս ոչ ամաչես հարցանել յինէն եւ կասես, թէ ընդէ՞ր վատահամբաւեցիր զմեզ:

— Իմ գիտաւորութիւն այն չէր, թէ վատահամբաւեմ զձեզ, այլ թէ զգուշացուցանեմ զազգն իմ, քանզի պարտական եմ նոցա:

— Բայց լուր, որ այս կարճառօտ բանիւս առնեմ վերջ, եթէ ես մեղապարտ էյի, երանի ինձ, որ կրեցի ապաշխարան եւ վայ ձեզ, որ դատեցիք զիս եւ ոչ ներեցիք, որպէս որ պատուիրէ Տէրն՝ ոչ դատել: Եթէ անմեղ շարշարե-

74 Հմմտ. Բ Տիմ. Դ 2

© National Library of Armenia

ցիք զիս, դարձեալ վայ ձեզ եւ երանի ինձ, որ համբերութեամբ իմօվ եղէ կենդանի մարտիրոս:

— Մի մեզ Տէր, մի մեզ, այլ անուան քում տամ զփառս, վասն զի շնորհեցիր անարժանիս այնքան համբերութիւնն, որ կարացի տանիլ:

Հ. Ընդէ՞ր ձեր կրոնաւորքն ոչ շրջին քարոզել ընդ ամենայն աշխար[հ], որպէս որ զմերն. վասն զի են պղերգ եւ անհոգ:

Պ. Մերքն ոչ են ծով, բայց պարտական են վասն յիւրոցն, քանզի մեր ազգն է ի մէջ անօրինաց, հազիւ թէ կարեն հօվվել մերոցն, որ պահեն զնոսա հաստատուն ի վերայ քրիստոնէականի հաւատոյն մերոյ: Մի՞թէ ձերքն, որ շրջին ընդ ամենայն տեղիս, ոչ թէ միայն վասն հաւատոյ է, այլ ժողովելոյ զգանձս եւ լրտեսելո[ւ]: Եթէ միայն վասն հաւատոյ լինէր, գնային ի մէջ կռապաշտից եւ ոչ ի մէջ հայոց:

Հ. Դուն ասացիր, թէ ի զուր չարչարեցաք զքեզ: /258b/ Բազումք լան ի բերանոյ քումմէ, որ ասացիր, թէ Աստուած մի արասցէ, որ ռուսք գան եւ բռնեն յերկիրն մեր:

Պ. Այտ իրաւ է, որ բազմիցս ասացի: Բայց յե՞րբ սկսեցի զայտ բան ասել: Յերբոր ըմբռնեցին զիս եւ սկսեցին ի զուր չարչարել, այն ժամանակն ասի: Առաջին իմ սէրն եւ իմ կամեցածն վասն ռուսաց մի՞թէ ոչ լար, որպէս որ գրեցի ի վերո[ւ]: Մի՞թէ այտ բանտ չարչարանքի, պատժոյ եւ պատուհասի արժանացուցանէ, ինչ ասի՝ Աստուած մի՛ արասցէ մի՞թէ Աստուած լսեց ինձ: Ոչ: Ծնօղքն, յորժամ որ բարկանան, ասեն զաւակացն իւրեանց՝ Աստուած զքեզ մահ տայ եւ այլ: Մի՞թէ պատժելի է այն ծնօղն, որ ի ժամ բարկութեանն այնպէս ասաց եւ կամ թէ Աստուած լսեց այն բարկացած ծնօղի զրուցին մահացոյց զորդին:

— Ոչ, ո՞ք է, որ ոչ բարի կամի ազգին յիւրոյ: Ի սկզբանէ ես կարծէի, թէ ռուսքն քրիստոնեայ եւ էխպայր մեր են, որպէս որ մեր ազգն կարծեն, բայց յերբոր տեսի եւ տեղեկացայ, որ ոչ են քրիստոնեայ եւ ոչ զմեզ էխպայր համարին յիւրեանց, միայն թէ անուն ունին քրիստոնէյութեան, մեր ազգն ատեն եւ անիծեալ համարին եւ զկնի մերոցն հրէյեայ ասին եւ այլ անթիւս, որ ոչ եմ բաւ թուել զամենայն բանս տգեղս, զորս ասեն վասն մեր: Տեսնելով իմ զայս ամենայն՝ ասի՝ Աստուած մի արասցէ, որ սոքայ գան տիրեն մեր ազգին, քանզի խնայեցի զազգն իմ, միայն թէ բանիւ ասի եւ ոչ թէ գործով կատարեցի:

— Ես ոչ կարեմ եւ ոչ կամիմ պատմել զամենեքեանն ռուստաց /259a/: Օվ որ կամի փորցել, գնայ անդ եւ տեսանէ զնոսա, յետոյ երանի տայ ինձ, որ զուր չարչարեցայ, եւ զամենայնն, զոր ինչ որ ասի, էր ճշմարիտ եւ ոչ սուտ:

Հ. Դուն ասացիր ինձ, թէ քափուչինքն ինձ վնասեցին: Ի՞նչ վնաս եւտուն քեզ:

Պ. Մի՞թէ դուն ոչ լար վերոյ, որպէս որ պատմեցաւ եւ կամ թէ ոչ բաւական եղեւ վասն քոյ, կամիս այլ առաւել լսել, կամ թէ կամիս, որ ամենայն ծածկեալն բանամ, որ յետոյ ինձ մեղադրես: Այնքան որ վերո[ւ] գրեցաւ, յիմաստնոց բաւ է եւ յիմարաց՝ ցաւ:

— Քան զայս առաւել այլ ինչ առնէին ինձ քափուչինքն, որ ունեցած բարիքն իմ հանին յինէն եւ որ գալացուկներ զրկեցին զիս: Սիրելի էյի ամենեցուն, ատելի արարին, ունէյի բարի համբաւ, վատահամբաւ արարին, աշխար[հ] ամենայն թշնամի արարին ընդ իս, տունս աւերեցին, երեքտասան ամ ի բանտ պահեցին: Ահայ մետասան ամ եղեւ, որ տառապանօք կամ, եւ միշտ չարչարեն զիս, ծարաւին արեանս, պատճառեն, որ դեղակուր եղէ ի ռուստաց, մատնեցին զիս թագաւորին Վրաց եւ Պարսից, զի կորնչիմ ի ձեռանէ նոցա: Այլ Աստուած փրկեաց զիս եւ մինչի ցայսօր նոյն դիտաւորութեան վերայ են: Պատճառ եղեն, որ մարմնաւոր գործս կորաւ, յի միասին եւ զոգեւորսն: Պատճառ եղեն, որ կորաւ ազգն իմ եւ կորնչին օր[ը]ստօրէ: Պատճառ եղեն, որ ոչ կարցի տեսանել զծնօղս եւ զեխպայրսս իմ, քանզի մեռան՝ կարօտ ի յինէն:

— Ոչ ցաւիմ իմ այնքան, թէ զրկեցայ ես իմ բարեացն, այլ մեծապէս ցաւիմ զայն, որ կորաւ ազգն իմ, նայեւ /259b/ զրկեցան թագաւորքն քրիստոնէյից ի բարեացն իւրեանց եւ այլ:

— Մի՞թէ սատանայն կարէ քան զայս առաւել վնասել ումեք, որք արարին ընդ իս ձեր սրբակրօն քափուչինքն: Ոչ:

Հ. Այդ ամենայն, որք արարին ընդ քեզ, Աստուծով էր. առանց Աստուծոյ հրամանին ոչինչ չի լինիլ:

Պ. Ծիծաղիմ աստ յոյժ ի վերայ քոյ, որ գործն սատանայի դնես ի վերայ Աստուծոյ: Ուրեմն, ամենայն մեղ, որ գործի ի վերայ աշխարհիս, այն ամենայն Աստուծով է, եթէ այտպէս է, որ զամենայն չարութիւնն, զոր գործեցին քափուչինքն Աստուծով էր, ապայ իմ արարն ինչո՞վ էր, որ ասի Պարսից, թէ յռուսքն ձեր թշնամի յեն, նայեւ որ ասի, թէ Աստուած մի արասցէ, որ ռուսք գան տիրել ազգին հայոց: Եթէ ամենայն ինչ Աստուծով է, ապայ ընդէ՞ր հալածէք զիս, թէ մեղանչեցի:

— Արդ ընդէ՞ր ամենայն արարն ձեր Աստուծով գլնի, այլոցն՝ ոչ: Մատնութիւն, չարութիւն, զրկանք, նախանձն, որք գործեցին քափուչինքն ընդ իս, Աստուծով էր եւ իմ երկու սնոտի զրուցն ո՞չ էր Աստուծով, զարմանամ:

Հ. Մի զարմանալ, Տէրն մեր ասաց, թէ՝ չարն չարեաւ կոռուսից, այգին տացից այլոց մշակաց[75], եւ Պողոս ասաց, թէ՝ այնպիսին մատնել սատանայի, զի հոգին ապրեսցի[76], յաւել ասաց, ամենայն ոք, որ իշխանութեան հակառակ կայ, Աստուծոյ կամացն հակառակ կայ[77], ապայ դեռեւս ոչ գիտացիր, որ ամենայն իշխանութիւն եւ պետութիւն Աստուծոյ են կարգեալ առ ի դատել զչարագործսն:

Պ. Այդ ամենայն գիտեմ եւ գիտացի: Ես ոչ եմ հակառակ իշխանութեանց եւ Աստուած մի արասցէ, որ լինիմ, քանզի գիտեմ, որ Աստուծոյ սպասաւոր են: Բայց իմ լացն /260a/ այն է, թէ այն իշխանքն եւ այն պետքն ընդէ՞ր ոչ դատեցին զիս եւ իմ արած չարութիւնս ոչ յայտնեցին ինձ եւ ամենայն աշխարհի եւ ապայ թէ չարչարէյին զիս ըստ գործոց իմոց, որ ինձ եւ ամենայն աշխարհի լինէր դիւրին: Այտպէս խաբեցիք ամենայն աշխար[հ], թէ չարագործ էյի, ապայ ընդէ՞ր ոչ ցուցիք իմ արած չարութիւնն: Եկէք յայտնի դատեցէք զիս, որ ամենայն ոք լսէ իմ եւ ձեր պատասխանն:

Հ. Քափուչինն ասաց, թէ չարագործ էյիր. [հ]աւատացին նմայ եւ նորա բանիւն չարչարեցին զքեզ:

Պ. Այն իմ երկու սնոտի բանն այսքան տուժանս առբերէ, ոչ հաւատամ: Ասացեր, թէ քափուչինի բանիւն զիս չարչարեցին ռուսքն: Աստուծոյ փառք, որ քո բերանօվն վկայեցիր՝ այտ բանն պատկանէր ռուստացն եւ ոչ քափուչինին:

Հ. Ռուսք այտ բանդ ոչ գիտացին՝ բացի քափուչինէն, քանզի նայ էր ընդ քեզ. յորժամ որ խորհրդակցէյիր ընդ էհտիմա գօվլային Պարսից, որպէս որ լսեց, այնպէս ասաց ըՌուստաց, թէ դուն ասացիր, թէ ռուսքն ձեր թշնամի յեն:

Պ. Այտպէս վայել է կարգաւորին, որ լսած խորհուրդն յայտնէ այլոց, ոչ տաս պատասխան, լռեցիր:

— Ամենայն բան Տեառն մերոյ եւ Պողոսի ասածն, որ վերո[ւ] յայտնեցիր, զընդունիմ, բայց պարտ էր նախ դատել, որպէս որ վերո[ւ] գրեցի եւ ապա տեսանել, թէ արժանի գլնէյի պատժոյ, թէ պակի:

Հ. Դուն ասացիր, թէ չիք ի ձեզ քրիստոնէյութիւն, /260b/ այտ մեծ հայհոյանք չէ՞:

Պ. Ապայ դուն ընդէ՞ր հայհոյէյիր մեր ազգն եւ այնքան պակասութիւն դրիր ի վերայ մեր ի կողմանէ հաւատոյ եւ օրինաց: Ես ոչ ասի եւ ոչ ասեմ, թէ դուք ոչ էք քրիստոնեայ, այլ թէ չիք ի ձեզ քրիստոնէութիւն, քանզի ոչ ունիք գործ համեմատ անուանցն ձերոց, միայն թէ անուն ունիք քրիստոնէութեան:

Հ. Ի՞նչ գործ ունիմք, որ ընդդէմ է մեր հաւատոյն քրիստոնէութեան:

Պ. Այն ամենայն, զոր ինչ որ վերոչ տեսիր եւ կարդացիր, բաւակա՞ն չէր քեզ, կամիս որ այլ առաւել ասեմ: Զամենայն, զոր ինչ որ ածիք

---

75 Հմմտ. Մատթ. ԻԱ 41

76 Հմմտ. Ա Կորնթ. Ե 5

77 Հմմտ. Հռոմ. ԺԳ 2

© National Library of Armenia

ի վերայ իմ, այն գո՞րծ էր քրիստոնէութեան, դուն տես եւ դատ արայ:

Հ. Դուն մատնեցար ի ձեռս մեր վերթ չարագործ. ըստ արժանի գործոցն քոց արարին, այլ խնայեցին քեզ եւ զբազումս ներեցին: Եթէ զչարագործսն ոչ դատէյիք, ոչ մնայր աշխար[հ]ս շէն:

Պ. Մի՞թէ ես չարագործ էյի, արժանի պատժոյ: Թողում զայտ քեզ, թէ զիս իբրեւ զչարագործ չարչարեցիք:

— Բայց յԱմթեցի Թասպազանց մահտեսի Բաղդասարի կին Ամասիայ խաթունն յիւր Դասպար որդւօվն եւ յիւր դուստր Ղուցիօվն, որ խաբեցիք տար[ա]ք ի Փարիզ, առիք ամենայն գանձն նորա եւ թշուառապէս կեայ: Այն ի՞նչ մեղ ունէր, ի՞նչ չար էյին գործել նոքա:

Հ. Այտ բանես ոչ լայ: Պատմէ ինձ, թէ որպէս խաբեցին զնայ եւ ածին ի Փարիզ:

*Պ. Տիկինս այս մեծ եւ անուանի փարթամ վաճ/261a/առականի կին էր, մեծ եւ անուանի ընչեղ խօճա Թումաճանին քոյր, որ յերբոր այս Թումաճանն մեռաւ, թողեց հազար եւ հինկ հարիւր քեսայ: Լսեցին տաճիկքն եւ զարմացան, տարան այն ամենայն գանձ առ թագաւորն տաճկաց: Վասն այս պատճառէս կեղեքեցին վերո[յ] տիկինն, թէ դուն քո եխպօր գանձէն պահած ունիս: Վասնորոյ հարկեցաւ տիկինն յելանել յԱմթայ հանդերձ որդւօվն եւ դստերօվն գնալ յերուսաղէմ: Մինչ անտի դառնայ եւ գայ ի Հալապ մնայ: Իբրեւ լսեցին քափուչինքն, թէ այսքան ընչեղ է տիկինն, յարեան ի վերայ նորա եւ ասեն, թէ՝ կայ աստ առ պալիօզն մանուկ մի ազնուազարմ, տուր զքոյ դուստրն նմայ եւ գնայ ի Ֆռանսա, անդ ապրիս ապահով: Այնքան շողոքորթեն եւ յորդորեն զնայ, որ հաւանի տիկինն եւ հարսնցուցանէ զդուստր իւր ընդ այն մանկանն եւ ասէ նմայ՝ օվ որդեա՛կ, ես ունիմ երկու հարիւր քեսայ, 40 քեսան՝ իմ դստեր բաժինն եւ 160 քեսան՝ իմ Դասպար որդւոյն բաժինն, բայց դեռեւս որ իմ որդին ոչ է խելահաս յարգել, արդ այժմ ամենայն իշխանութիւն քոյ ձեռին լինի մինչեւ որ զարգանայ մանուկն իմ: Այնուհետեւ դուք յի միասին ապրեցէք եխպօր նման: Այսպէս անցնեն գծօվն եւ գան հասանին ի Մառչիլիայ: Իբրեւ յելանեն ի նաւէն, տեսանեն, թէ այն ազնուազարմ փեսայն է աղքատ եւ գծուծ ազգէ, փոխանակ դարպասացն ոչ ունի տուն բնակութեան, ինչեւիցէ զկնի բազում աւաղելոյ /261b/ վարցեն տուն մի եւ նստին: Այնուհետեւ սկսէ փեսայն ծեծել զհարսն Ղուցցին, թէ այսուհետեւ հոլանավար լեր, որպէս որ կանայքն տեղւոյս: Նոքա պատասխանեն, թէ՝ մեք հայ՝ եմք ամօթխած, ոչ կարեմք այնպէս լիպո եւ հոլանի կալ եւ այլ: Բայց փեսայն ոչ անսայր: Այնպիսի ատելութեամբ եւ դառնութեամբ մնան ժամանակ մի, յետո[յ] մեռանի փեսայն: Այնուհետեւ սկսէ տիկին որոնել զդրամն իւր, գտանէ զնոսա առ ի աղքատ ազգականքն փեսային, բազում ժամանակս աշխատի առնուլ ի ձեռանէ նոցա իւր բարին, բայց ի զուր, հարկաւ որ ի ծանուցանել թագաւորին զկնի անցանելոյ բազում ամայ: Ես որ գնացի ի Փարիզ, տեսի զտիկինն, եւ բերանօվն յիւրով պատմեց ինձ: Նայեւ ասայ՝ ձանձրացայ ի հեռաստանէ, այսինքն ի Մառչիլիու, զէկարանօք խօսիլ ընդ թագաւորին, որ չեղեւ ապայ թէ եկի ի Փարեզ, մնացի անտէր, յօտար յերկիր եւ բարեկամ՝ չիք, մնացի քաղցած, հարկաւորեցայ ընդ այս օսկերիչ Օվանէսիս ամուսնանալ: Նախ, որ իմ քաղցն լցուսցէ եւ որ տիրութիւն անէ մեզ՝ աշխատելով զդրունս թագաւորին: Տե՛ս, ասայ, իմ ինչ ժամանակն է ամուսնանալոյ. ահայ մազս ճերմակել է: Նայեւ ասայ՝ այնմհետէ մինչի ցայսօր աշխատիմք ի զուր, սոքայ ո՛չ հաւատ ունին եւ ո՛չ դատաստան: Երկու հարիւր քէսայէն այնքան չեն ի տալ, որ հացի գին /262a/ անեմք: Նայ եւ ասայ՝ յաւուր միում ես գնացի խօսիլ ընդ եպարքոսի թագաւորին, կարդինալ Ֆլորուն: 'Ի մէջ զրուցից ասի, թէ պարոն տէր, մէկ քափուչին պատրի ի քաղաքն յԱմիթ, փաշայն տեղոյն կամէր կախել զնայ, ես այս կանացի կարիօքս չորս քեսայ տվի փաշային եւ ազատեցի այն քափուչինն: Արդ ես եկի աստ, այսօր օտար եմ եւ պանդուխտ, մի՞թէ ոչ էր արժան, որ իմ արդար ապրանքն առնուս ի ազգականացն նորա եւ տաս ինձ, որօվ ապրեմ եւ ազատիմ

այս թշուառութենէս: Ինձ պատասխան տվեց, թէ՝ ընդ վայր տվիր այն չորս քէսան վասն ազատութեան քափուչինին, դուն ի՞նչ բան ունէյիր, թող կախէյին մեր մարդն, անխելք հա՛յ: Այն չորս քէսէն պահած լինէյիր. այժմ քեզ պետ գուգար:

— Արդ տես դուն եւ դատ արայ եւ տես, թէ գո՞յ ի ձեզ քրիստոնէութիւնն, տես մեր ազգին արածն եւ ձերոցն:

— Դարձեալ պատմեց ինձ տիկին այն, թէ՝ մինչի Մառչիլիու գայեաք աստ, ի կրպակի միոջ կերաք ճաշ եւ հատուցաք զգինն կերակրին: Մինչ նստաք ի կառս, սիրտս ջուր յուզեց ըմպել: Խնդրեցի եւ ըմպեցի, գաւաթ մալ իմ դուստրն յուզեց, կրկին ես ըմպեցի: Յետ այնորիկ յելաք ի գնալ, իբրեւ հեռացաք փոքր ինչ, տեսի, որ աղախինն զկնի մեր ձայնէր կայ առնուլ: Մինչ ժամանեաց՝՝ առ մեզ, սկսեց այպա/262b/նել մեզ, թէ՝ ընդէ՞ր ոչ հատուցաք զվարձն: Պատասխանեցի, թէ հատուցի զգինն կերակրին ամենայն անթերի կրպակապետին: Ասաց աղախինն՝ ոչ խնդրեմ ի ձէնջ զգինս կերակրոց, այլ այն երեք գաւաթ ջրի վարձն, որ ետու ձեզ ի ըմպել: Իբրեւ լայ զայս, հիացեալ ապուշ մնացի: Ապայ թէ տվի երեք ըստակ, որ թոյլ եդ զմեզ ի գնալ: Տեսիր զայս եւ լսեցիր: Մի՞թէ այսպիսի իրս գործողացն զկնի ասել, թէ գոյ ի նոսա ի քրիստոնէութիւն:

— Դուն մեր յերկիրն շատ ես կացել: Երբեք տեսի՞ր ի մէջ հայոց զայսպիսի գործ: Մեր մին կինն չորս քիսա[յ] դրամ տվեց ձեր մին քափուչինն ազատելոյ, ձեր մին կինն երեք գաւաթ ջուր տվեց, առաւ երեք ըստակ:

— Մեր տիկինն չորս քեսա[յ] վասն ձեր մին մարդու: Եթէ մեր բովանդակ հայոց ազգն տանէյին ի սպանումն, ասայ ինձ ճշմարիտն, թէ վասն ազատութեան համօրէն ազգին մերոյ դուք՝ ոչ: Բայց փափ ձեր կուտա՞ր չորս քեսայ: Ո՛չ: Կարե՞ս ասել, թէ այոյ եւ ամաչե՞ս ասելն, թէ՝ ոչ: Վասն որո՞ն դարձար ի լուութեան:

— Դարձեալ պատմեց ինձ հայ մի, թէ՝ յաւուրս ձմեռան եղանակին գնայի այլ իմն քաղաք: Տեսի այր երեք, որ ի վերայ ճանապարհին խարոյկ արկեալ ջեռնին: Ողջունեալ նստայ ընդ նոսա առ ի ջեռնուլ: Ջկնի ջեռանելոյս յելի, որ գնամ, կալան զիս, թէ՝ տուր մեզ զվարձս հրոյն որով ջեռար, /263a/ քանզի մեք այս փա[յ]տս դրամօք ստացաք: Հատուցի նոցա, զոր ինչ որ խնդրեցին եւ ասայ, թէ թոյլ ետուն: Տես, մի՞թէ այս գործ է քրիստոնէյութեան: Մի՛ ամաչել, ուրեմն, լուէ յաւել հարցանելոյ. որքան որ շատ հարցանես, այնքան առաւել զարմանք լսես:

— Քանզի զամենայն ինչ, որ արարին ընդ իս որպէս որ վերո[յ] ճառեցաւ, այն ամենայն գործ է անօրէնի եւ ոչ քրիստոնէյի: Այնու ոչ բաւականայր, սկսեցիր դարձեալ հարցանել:

— Այր ոմն իստանպօլցի գայ ի Փարիզ քաղաքն առեւտուր առնել: Ջամենայն ինչ գործ. որ կամի առնել, ոչ թողուն քաղաքացիքն: Սկսէ նստիլ ի պողոտայս եւ յանձս ճանապարհաց եւ ի վերայ կարմնճոց վաճառել զջերմակեղէնս: Այն եւս ոչ թողուն: Սկսէ սեղան տախտակեայ շինել եւ սփռել ի վերայ նորա յիւր ջերմակեղէնն եւ կախել զնայ ի պարանոցէն եւ սկսէ այնպէս շրջիլ առ քաղաքաւն եւ վաճառել: Այն եւս արգելուն: Անճարակ մնայ հայս այս: Գնայ յարի առ դուկ Տ Օռլէանն՝ ազգականն ֆռանցիզ թագաւորին[78], մատուցանէ նմայ զեկարան, որով յայտնէ զորպիսութիւն իւր: Իշխանն այն այնքան կարաց շնորհաբաշխութիւն առնել առնն այնորիկ, որ ասաց նմայ, թէ՝ գնայ իմ այնիղ դարպասի սրահն նիստ եւ վաճառք արայ: Այն նշանակած դարպասն ունէր երկու դուռն. միօվն մտանէյին եւ զմիւսօվն յելանէյին: Մինչեւ ցե՞րբ նայէր /263b/ այրն այն, թէ այն սակաւ անցորդացն վաճառել իր ինչ: Տեսի ես այն դարպասն եւ այրն այն, որգան կատարեցաւ:

— Ասացիր ինձ, թէ դուն չարագործ էյիր, վասն այն չարչարեցին զքեզ: Արդ այս վերո[յ] արքն չարագործ չէյին, քէմ ընդէ՞ր այնպէս արարին: Այսպիսի գործ գործողացն գկնի՞ ասել, թէ են քրիստոնեայ, կամայես ասել՝ ո՛չ:

---

78 Խօսքը, հաւանաբար, Օռլեանի դուքս Ֆիլիպի (1674-1723) մասին է, որը Ֆրանսիայի ռեգենտն էր մինչեւ 1723 թ.:

© National Library of Armenia

— Կարիճ ոմն եխպայրացաւ ընդ գորտի միոջ: Աւուր միում եկաւ կարիճն առ աբն լճին տեսանել զեխպայրն: Զկնի բազում զրուցից ասաց կարիճն ցգորտն, թէ՝ կամիմ, որ տանիս զիս ի ներքս ի լիճն զբօսնուլ: Առաւ շալակն եւ խաղացոյց ի ներս: Զկնի զբօսանացն ասաց կարիճն գորտուն, թէ՝ եխպա՛յր, կամիմ խայթել զքեզ: Պատասխանեց գորտն եւ ասաց՝ ինձ հետ եխպայրացել ես եւ խոստացար ընդ իս բարեկամութիւն պահել, քեզ հակառակ ինչ ոչ գործեցի, յաւել, առի քեզ ի շալակս եւ բերի աստ զբօսնուլ, փոխանակ բարութեանս կամի՞ս տրիտուր տալ: Պատասխանեց կարիճն եւ ասաց՝ իրաւ, որ եխպայրացայ ընդ քեզ եւ դուն ապերախտ ինչ ոչ գործացիր ընդ իս, բայց իմ բնութիւն այնպէս է մինչեւ ոչ խայթեմ ոչ լինիմ: Ի ասել բանին պօստվեց գորտն ի տակէն կարճին եւ լողաց, բայց կարիճն եղեւ խեղտամահ: Նմանապէս դուք հանգոյն կարճոյ խայթէք ամենեցուն անզանազանաբար յի միասին բարին եւ զչարն անխտիր: Ո՞ ոք լաւ եւ /264a/ տեսաւ ի ձէնջ բարութիւն: Ոչ ոք: Բայց չարութիւն, խաբէութիւն եւ վնաս տեսանողքն անթիւք են:

Հ. Ասացիր բազում տեղիս, թէ ձեր ազգն խաբեբայ են: Մի՞թէ ամենայն ոք խաբեբայ են եւ կամ թէ ի՞նչ խաբէութիւն արարին ընդ ի քեզ:

Պ. Մի՞թէ ունիմ զայս ամենայն խաբէութիւն ձեր ամենայն յաւուրն իմ մի ըստ միոջէ գրել, որ ի սկ[զ]բանէ խոստացայ համառօտել, եթէ վերո[յ] գրեցեալն ոչ եղեւ բաւական:

— Դարձեալ յիշեցուցանեմ: Այն խաբէութիւն չէ՞ր, որ նաւի քափիթանն ի Դանցքայու մինչ ի Մսրդամ արար ընդ իս:

— Այն խաբէութիւն չէ՞ր, որ Ֆրանցիզ դեսբանն ի Աքայու առաքեաց զիս ի Ռօթուտամ առ Փօթեյն[79] պալիօզն: Յառաջ քան իմ ժամանելն անդ առաքէ առ նայ գիր, թէ՝ մի՛ ընդունել:

— Այն խաբէութիւն չէ՞, զոր ինչ անցքն որ անցուցին ընդ իս ի քաղաք Պռուսել, մանաւանդ որ իմ թուրս պահեցին:

— Այն խաբէութիւն չէ՞ր, որ ի Փարէզ քաղաքն մեծաւորքն վաճառին. նախ ասին թէ կ[ը]նդունիմք զքեզ, յետո[յ] ոչ ընդունեցին:

— Նախ խոստացան գրել նամակ, որ յետ առնում իմ դրամն ի Պարսից, յետո[յ] ոչ արարին:

— Այն խաբէութիւն չէ՞ր, որ Ֆռանցիզայ թագաւորն ասաց, թէ Իստանպօլու դեսպան մուսիու Վիլնօվն[80] քեզ ամենայն հեշտութեամբ կառաքէ ի Պարս, բայց ամենայն թշուառութեամբ առաքեցայ:

— Այն խաբէութիւն չէ՞ր, որ Հռօմա[յ] նստող Ֆռանցիզայ դեսբան դուք Մէնթայնանն[81] գիր հրա/264b/մանաց գրեց խաբեբայ եւ տվեց ինձ:

— Այն խաբէութիւն չէր, որ փափն տվեց ինձ հասարակ ոսկերաց մեռելոցն ի տեղի մասանց, յետո[յ] զկնի գրեց, որ վկայական գրեանքն գողանան յինէն:

— Այն խաբէութիւն չէ՞ր, որ Ֆռանցիզ թագաւորի նախարար մուսիու Մօփայն[82] գրեց մին խաբեբայ հրաման անուամբն թագաւորին, որ չէր այնպէս, որպէս որ բերանօվն ասաց:

— Այն խաբէութիւն չէ՞ր, որ ի Իստանպօլ նստող վերոյ դեսբան մուսիու Վիլնօվն զամենայն, զոր ինչ որ արար ընդ իս եւ այլ անթուելեացն զանձն արարի եւ զբազմիցն, որ դեռեւս են ի ծածուկ, որ ոչ կամեցա[յ] ի յայտ ածել, քանզի այսքանս բաւական է:

— Արդ, տե՛ս այսպիսի գործ գործողացն գլնի՞ ասել քրիստոնեայ: Վերոյ ասացիր, թէ՝ մի՞թէ ամենեքեանքն խաբեբայք են: Աստուծոյ փառքն, որ ահայ տեսիր զգործն կանանցն, աշխարհականացն, կրոնաւորացն, փափին, պարոնացն, իշխանացն եւ թագաւորինն:

— Այլ օ՞վ մնաց ի ձէնջ, որ ոչ խաբեցին զիս: Ոչ ոք, եթէ միայնն եւեթ մանկունքն: Ուրեմն լուռ լե՛ր:

Հ. Դուն վերո[յ] ասացիր, թէ մեր փարթամն որ ձեր երկիրն գու գայ, տզրուկի նման քարշէք զարիւնն եւ չորացնէք եւ զաղքատն՝ կորնչի: Ձեր յո՞ր փարթամն չորացուցաք՝ ծծելով զարիւնն նորա:

Պ. Անթիւք են, բայց ես յայտնեմ քեզ զմինն եւ լիցի բաւական վասն այլոցն, քանզի այս մինն յայտնի յէ, որ ոչ կարէք ուրանալ: Ի հայոց ոմն, որ մաք/265a/սապետ էր ի քաղաքն Իզմիր, եղեւ ամբաստանութիւն զնմանէ առ թագաւորն Օսմանցւոց, որ եւ թագաւորն կամեցաւ սպանանել զնա: Այլ նայ փախաւ ամենայն ընջիւքն եւ գնաց յԱլիկօռնայ, որ եւ շինեց անդ պատուական բաղանի մի, որ եւ կայ մինչի ցայսօր: Բայց յերբոր մեռաւ, ոչ ունէր պատան, որով ամփոփիւր զմարմինն նորա: Վասն չքաւորացն ով որ կամի ստուգել, ամէն օր կարէ տեսանել եւ փորձել:

— Ըխտաւորն մեր գնայ ի Հռօմ. իբրեւ պակասի զդրամն, հազիւ թէ փախստեամբ զերծանի անտի: Այն եւս ունեւոր ըխտաւորքն փոխ տան պակասաւորացն: Որ ով կարող լինին գալ, եթէ ոչ գտանին ի մերոցն, որ փոխ տային, կորնչէր ողորմելին, այն եւ լինէր թշուառ:

Հ. Որ ոչ ունին բաւական դրամ, ընդէ՞ր գնան յուխտ ի Հռօմ:

Պ. Ի՞նչ անեն ողորմելի եւ միամիտ ազգն Հայոց: Հաւատացուցիք նոցա, թէ փափն միայն ունի լիակատար իշխանութիւն եւ թէ մայր է ամենեցուն, որ ոչ թողու ումեք՝ ոչ կարէ գնալ արքայութիւն: Վասն այս պատճառաց աճապարեն գալ առ ձեզ վասն շահելո[յ] զայն լիակատար ներողութիւնն, որ արժանի լինին գնալո[յ] արքայութիւնն:

— Ամենայն ոք բերէ ընդ ինքեան բաւականօրէն դրամ, բայց դուք զոմանս գողանայք ի զոմանցն, յաւելի պահանջէք, քան զոր պարտի վասն այսորիկ սպառի թօշակն եւ չքաւորի, մանաւանդ, որ ամենայն ինչս ձեր է թանկագին: Այն թօշակն, որ մեր չքաւորքն /265b/ բերեն ընդ յիւրեանս վասն այտ կարճ ճանապարհին, կարէին այնու գնալ ի Հնտիկսն եւ դառնալ:

Հ. Մեր յերկիրն գող չկայ, եւ մեր մարդն ի սահմանածէն յաւել ոչ առնուն, այտ իզուր ասիր:

Պ. Ասացիր, թէ մեր յերկիրն գող չկայ: Ձեր յերկիրն յո՞րն է, յԵւրօբա՞... Ի յԵւրօբայ ազգ բազում են, դուն յո՞ր ազգէն էս:

— Մեր ազգն է Իտալիան:

Առաւել վատթարագոյն եւ յոռին, քան զամենայն ազգն Եւրօբայու, ոչ ուրեք առաւել վնասեցաւ այնքան, եթէ ոչ միայն եւեթ ի մէջ Իտալիու, քանզի են գող, խաբեբայ, խորամանկ, քան զսատանայ. իբրեւ գտանեն զպանդուխտ ոք, եթէ կարէին առնուլ ի նմանէ մէկ փողի տեղն մէկ ոսկի, ոչ խորէին, նմանապէս՝ կառավարք նոցա:

— Բազում տեղիս առին յինէն յաւելի ինչս. նայեւ գողացան, բայց ի Ալիկօռնայ երկու անգամ գողացան, մին անգամ ի կրպակն եւ զմիւս անգամ ի տունն: Այնքան հնարիւք բացել եւ դարձեալ կողպել էլին զսնտուկն իմ, որ ոչ կարացի յիմանալ: Թէպէտ թոխաթցի Օվանէս վարդապետն, որ բնակէր ընդ իս, նայ ազդեաց ինձ եւ ասաց, թէ տանն տիկինն ինձանէ գողացել է, քանզի պակասածի իմ դրամն, տես եւ զքոնն, իբրեւ տեսի, որ այսքան ոսկի պակասէր ինձ: Ոչ կամեցա[յ] [հ]աւատալ, նայեւ բամպասեցի զվարդապետն, թէ զուր ասէ, մի՞թէ կարելի լինել, որ արքայութեան հրեշտակք գողանան: Ես զիս ստէի եւ դառնայի մխիթարել զիս,

79 Robert Joseph Pothier (1699-1772) - ֆրանսիացի իւրիս-կոնսուլ, որի աշխատութիւններն են ընկած ֆրանսիական քրէական իրաւունքի օրէնսգրքի հիմքում:

80 Նկատի ունի Օսմանեան կայսրութիւնում 1728-1741 թթ. Ֆրանսիայի դեսպան Louis Sauveur, Marquis de Villeneuve-ին: Վերջինս կարեւոր դեր խաղաց 1735-1737 թթ. ռուս-թուրքական պատերազմը հրահրելու եւ ապա՝ 1739 թ. Բելգրադի հաշտութեան պայմանագիրը յօգուտ օսմանցիների լուծելու գործում:

81 Նկատի ունի ֆրանսիացի դիւանագէտ, ասպետ, յայտնի Saint Aignan-ի կոմս Paul-Hippolyte de Beauvillier-ին (1684-1776), 1731-ից արտակարգ դեսպան Հռոմում:

82 Maurepas Jean Fréderic Phélypeaux (1701-1781) - Ֆրանսիացի պետական գործիչ, Լուդովիկոս ԺԵ-ի օրօք ծովային պետական քարտուղար (1723-1749), Լուդովիկոս ԺԶ-ի օրօք՝ գլխաւոր խորհրդական եւ պետական նախարար:

© National Library of Armenia

ասելով գուցէ կորուցիր եւ կամ թէ մսխեցիր /266a/ այլ բանի վերայ, որ ոչ գրեցիր ի մատենի:

— Ես ինձ ասէի՝ մի՛ [հ]աւատալ վարդապետին, գուցէ կամի փորձել զքեզ: Իբրեւ դարձայ ի Հռոմայու, դարձեալ եկի ի Ալիկօռնայ, լսեցի, թէ վարդապետն յարոյց դաւ ի վերա[յ] տիկնոջն: Ահա այսպիսի պատճառացն չքաւորին մեր յ[ը]խտաւորքն:

— Մինչ դեռ էի ի Հռոմ, յաւուր միում ասաց ինձ իստանպօլցի Սուքիաս վարդապետ[83], թէ սոքայ ձանձրանան ի մեր չքաւոր ըխտաւորացն:

— Զարդիք ի քնոյ, պարզամիտ ազգտ հայոց, եւ տեսէք զմայրն քրիստոնէիից, յաստուածն յերկրի, փոխանորդն Քրիստոսի, բացօղ եւ փակօղն արքայութեան, թէ որպէս ձանձրանայ ի աղքատ դիմողացն առ նայ, զի ոչ կամի ի յաւելորդացն տալ նոցա: Տեսէք, թէ որպէս վարուք եւ գործօվքն նմանի Յիսուսի, քանզի Յիսուսն մեր բռնէր գանձանակ ի դրան տաճարին եւ տայր աղքատացն: Բայց սայ ոչ կամի ի յաւելորդացն եւ ի մթերիցն տալ նոցա, որք են պանդուխտ օտար եւ որք եկին առ նայ:

— Քրիստոս իւր քարօզն լսողացն գթացաւ եւ ասաց՝ ոչ կամիմ արձակել զդոսա նօթս գուցէ նմտիցին ի ճանապարհայն[84]: Ոչ ունէր գանձ, զի բաշխիցէր նոցա եւ հաց, զի կերակրիցէր: Բայց զի՞նչ արար: Օրհնեաց զհացն եւ կերակրեաց զնոսա եւ ապայ, թէ արձակեաց, զի մի նքտիցին:

— Սայ ի մթերիցն ոչ կամի տալ, ոչ թէ յամենայն եկեղոցն առ նա, այլ միայն թէ ոմանց, որք կարի չքաւորք են:

— Այսուհետեւ մի՛ք ասիլ, թէ փափն գանձատար չէ նեռան:

/266b/ Հ. Ինչեւիցէ, մեք եմք ձեր բարեկամն: Կամիմք, որ դուք զօրանայք: Երբեմն վասն օգտի ձերո[յ] ձեզի խրատ կուտամք: Այն մեր խրատն ձեզ դառն թի, վասն զի ոչ յիմանայք զձեր բարին:

Պ. Ի՞նչ բարութիւն տեսաք մեք ի ձէնջ ի սկսբանէ մինչի ցայսօր: Կամի՞ք, որ մեք զօրանամք: Մինչի ցայսօր այնպէս պատրեցիք զմեզ, քանզի մեր ունեցած զօրութիւնն առիք: Այժմ կամիք իսպառ կորուսանել զմեզ:

— Ասացին յիմաստունք, թէ անցելօքն ապագայն յիմացեալ լինի: Ընդէ՞ր ոչ զօրացուցիք մեր հարիւր հազար տուն հայքն, որ ի ժամանակս Թէմուր Լանկին եկին առ ձեզ եւ բնակեցան ի յերկիրն Լեհաց[85]: Ահա մօտ հինկ հարիւր տարի յէ ի նոցանէ պարտ էր մինչի ցայժմ: Սակաւս ասեմ, զի լինէին հինկ կամ վեց հարիւր հազար տուն: Արդ, ուրեմն, նոքա յո՞ւր գնացին. հապիւ սակաւ եւ նազունս գտանին ի նոցանէ, որք այժմ բնակին ի քաղաքն Իլվով:

— Այնուհետեւ մինչի ցայսօրէն եկածին ոչինչ ասեմ, որ միշտ անհեթեթ գան:

— Յորժամ, որ թուրքքն առին Իստանպօլ[86], 300 տուն հայ գնացին ի քաղաքն Անկոնայ: Յո՞ւր են նոքա: Այն ժամանակէն մինչի ցայսօր պարտ էր նոցա, զի լինիցէին հազար տուն: Ասեմք, թէ ոչ յաւելան, արդ յո՞ւր են բնիկ գնացողքն, ոչ եթէ 300 տուն, այլեւ ոչ գոյ երեք տուն: Միայն մնացեալ է /267a/ մին եկեղեցի նշանակ, այն եւս դուռն փակ[87]:

— Ես որ էյի ի Հռոմ վասն պատրելո[յ], զիս հրաման արար փափն հայ քահանայի միոջ, թէ գնայ ի Անգօնայ, բաց հայոց եկեղեցին: Պատասխանեց քահանայն՝ յո՞ւմ համար գնամ բանալ եկեղեցին:

— Այն ժամանակէն, որ մեր թագաւորութիւնն վերչացաւ, սկսեց ստէպ մեր ազգն գալ ձեր յերկիրն: Մանաւանդ այնուհետեւ յաճախեցին գալ, յորժամ որ թուրքն առաւ Իստանպօլ եւ մինչի ցայսօր միշտ եւ անդադար գան եւ գան: Արդ ո՞ւր են նոքայ, ապայ ընդ՞էր ոչ զօրացուցիք զնոսա: Ասաց ինձ, կա՞յ այնպիսի գաւառ ի յամենայն կալուածս Եւրօբայու, որ ոչ կոխեց յոտն Հայոց: Արդ յո՞ւր են նոքայ, ապայ ընդէ՞ր ոչ զօրացուցիք զնոսա: Փոխանակ զորանալոյն՝ ոչ թոյլ ետուք, որ գոնէ մնայր յիշատակն նոցա:

— Շնորհակալ եմք ի Լեհաց. թէպէտ կոտորել տվին մեր ազգն ի շէթացն, զկնի կոտորվածոցն մնացեալքն յիւրացուցին, բայց թողին փոքր ինչ յիշատակ, որք գտանին զոմանս ի քաղաքունս նոցա: Տակաւին կասէ՞ս, թէ կամիմք, որ զօրանայք: Այսուհետեւ եթէ այս բանիւս ոչ զարթնու ազգն մեր ի քնոյ, ոչ է ննջեալ, այլ է մեռեալ:

Հ. Ապայ յԱլիկօռնայու[88] եւ ի Վանատիկու[89] հայքն ոչ յիշատակեցիր, որք ունին զքահանայս եւ զեկեղեցիս:

---

83 Իմա՛ Սուքիաս եպիսկոպոս Ղասավէթեան (ծննդեան թիւն անյայտ է) կիսասարկաւագութեան, սարկաւագութեան եւ քահանայութեան աստիճանները ստացել է Մալաթիայի եպիսկոպոս կոչուող Յակոբ Քիլիսցուց, այնուհետեւ ինքն իրեն անուանել է եպիսկոպոս՝ առանց ստացած լինելու ձեռնադրութիւնը: Ըստ Յովհաննէս Պատկերահանի, որին պարտական ենք Սուքիաս Եպիսկոպոս Ղասավէթեանի մասին մեր հիմնական տեղեկութիւնների համար, երբ Հռոմ է գալիս ապագայում Կիլիկիայի հայ կաթողիկէ պատրիարք կոչուող Աբրահամ-Պետրոս Արծիւեանը, պապից լիազօրութիւն է ստանում Հռոմում քննել տեղի հայ հոգեւորականութեան ունեցած կարգավիճակը: Կարգավիճակից զրկուած միակ մարդը լինում է Սուքիաս եպիսկոպոս Ղասավէթեանը: 1743 թ. օգոստոսի 3-ին Պատկերահանը հաղորդում է, որ Հաւատասփիւռ Ժողովի նախագահը՝ կարդինալ Պետրան, ցանկացաւ, որ տէր Սուքիասը վերստին ձեռնադրուի եպիսկոպոս, սակայն պատրիարքը տեղեկացնում է պապին եւ «հրաման էառ՝ ոչ օծել զնա եպիսկոպոս: Եւ կարտինալ Փէթրան այս բանի վերայ բարկացաւ, բայց դալիանի փուլիթիքայով (իմա՝ իտալական քաղաքականութեամբ) առանց արտաքսապէս ցոյց տալով»: Այդ օրերին սաստկանում է Սուքիաս Ղասավէթեանի հիւանդութիւնը՝ «մանաւանդ ջրվանթի կողմանէ, անկաւ ի հոգեւորութիւն»: Վերջին օրերն անցկացրեց մարոնիտներով շրջապատուած, «ի Հայոց ոչ ոք կար» եւ վախճանուեց 1743 թ. մարտի 31-ին: «Թէպէտ քահանայի կարքիւ մեռաւ, բայց թաքով իբր եպիսկոպոս արարին զթաղումն նորին» (**Յովհաննէս Պատկերահան**, *Նամականի*, Վենետիկ-Ս.Ղազար, 1988, էջ 96, 100, 103-104):

84 Մատթ. ԺԵ 32

85 Լեհահայոց պատմութեան վերաբերեալ հնագոյն գրական յուշարձանները բազմիցս են հրատարակուել: Նրանցից շատերի թուականային

օրինակները ներկայումս մատչելի են նաեւ գլոբալ ցանցում՝ Լեհահայոց մշակոյթի եւ ժառանգութեան հիմնարկութեան կայքէջում: Լեհահայոց պատմութեան վերաբերեալ հնագոյն փաստաթղթերից Կազիմիր Մեծի՝ 1367 թուականի փետրուարի 4-ին Լուովի Գրիգոր արքեպիսկոպոսին տրուած արտոնագրի թուային հրատարակութիւնը տե՛ս http://dziedzictwo.polska.pl/katalog/skarb,Przywilej_Kazimierza_Wielkiego_dla_arcybiskupa_ormianskiego_Grzegorza_z_dnia_4_II_1367_roku,gid,109932,cid,177.htm: Սկեւռայի աւետարանի էլեկտրոնային հրատարակութիւնը տե՛ս http://www.dziedzictwo.ormianie.pl/Ewangeliarz_Lwowski) կամ Լեհաստանի Ազգային թուային գրադարանում (http://www.polona.pl/dlibra/doccontent2?id=2835&from=&from=generalsearch&dirids=1&lang=pl):

86 Կ. Պոլիսը թուրքերի կողմից գրաւուեց 1453 թուին:

87 Անկոնայի հայ գաղութի եւ Ս. Հոգի եկեղեցու վերաբերեալ տեղեկութիւնները շատ աւելի վաղ շրջանից են: Մանրամասն տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, *Հայերը Իտալիայում* (անտիպ, Ս. Ղազար, Ալիշանի անձնական դիւան, անտիպ), **L.B. Zekiyan**, *Le colonie armene del Medio Evo i Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la storia degli Armeni in Italia)*,- Atti del primo Simposio internazionale di Arte Armena, Venezia, 1978, pp. 803-946; **Claudia Bonardi**, *Le colonie armene in Italia (Milano, Ancona, Genoa, Venezia)*,- Roma-Armenia, a cura di Claude Mutafian, Roma:De Luca, 1999, pp. 222-227.

88 Լիւոնոյի հայ գաղթօջախի մասին տե՛ս Մ. Ուղուրլեանի աշխատութեան իտալերէն թարգմանութիւնը Ա. Օրենգոյի հմուտ ծանօթագրութիւններով եւ յաւելուածով (**Mesrop vardapet Owl'owrlean**, *Storia della colonia armena di Livorno e della construzione della sua chiesa (con appendici)*, Presentazione, traduzione e note Alessandro Orengo, Livorno, 1990): Նաեւ *Gli armeni lungo le strade d'Italia.* Atti del Convegno internazionale (Torino, Genova, Livorno, 8-11 marzo 1997). Giornata di studi a Livorno. Pisa-Roma, 1998.

89 Այս շրջանում վենետկահայոց վերաբերեալ գրականութիւնը տե՛ս **Մերուժան Կարապետեան**, *Հայերը Վենետիկում 1750 թուին (Ա)*,- «Հանդէս Ամսօրեայ», 2008, էջ 211-226 շարունակական յօդուածը:

© National Library of Armenia

Պ. Մի՞թէ նոքայ տեւելոց են մինչի վերջ աշխարհիս: Զկնի փոքր ինչ ժամանակաց բարուրանս ինչ օրի/267b/նէք ի վերայ նոցա եւ առնէք՝ որպէս հայքն Անկօնայու:

— Ճշմարիտ հայն այն է, որ ոչ իցէ պղծեալ ձեր փոփոխական օրինօքն, այլ մնայ այն աւանդութե[ա]մբն, զոր աւանդեցաւ ի Գրիգորէ Լուսաւորչէ մերմէ եւ ի սրբակրօն նախնեաց մերոց, որ յորժամ որ մտանէ ոք եկեղեցին, իսկոյն ճանաչէ զնոսայ եւ ասէն, թէ են հայ: Ամենայն արարողութիւն փոխարկել էք զձեզ, նայեւ ժողովուրդն միայն ունին անուն հայի: Այնք, որ նոր են եկել առ ձեզ եւ քանի որ կենդանի յէն, պահեն անուն հայի: Յերբոր մեռաւ, բարձաւ յիշատակն, քանզի ի նմանէ ծնեալն ոչ դաւանի, թէ են հայ: Նորն գայ եւ պահէ անուն հայի, հինն մեռանի, եւ բառնի յիշատակն նոցա:

— Եթէ դուք ճշմարիտ բարեկամ մեր լինէյիք եւ կամենայիք, որ մեք զօրանամք, ոչ կորուսանէյիք մեր ազգի յիշատակն ի յերկրի ձերում: Հպարտ էք, նայեւ՝ նախանձոտ: Գիտէք, որ մեր ազգն որ զօրանայ եւ յառաջ գայ, այնժամ նսեմանայ ձեր անունն, քանզի մեր ազգն զօրեղ է, յաղթանդամ, քաջ, գեղեցիկ եւ պարզ: Վասն այն ձեր ցուցանէք մեր ազգն, որ ձեր անունն փառաւորի: Բայց Աստուած գիտէ զամենայն ինչ:

— Շնորհակալ եմք ի կայսերէն, որ շինեց վասն մեր փոքրիկ Հայաստուն մի ի յերկրին Ունկարիու[90]: Ի մէջ սակաւ ամացս տեսիք, թէ որքան բազմացան, որովհետեւ նայ այս բարերարութիւն արաւ ընդ մեզ: Այ/268a/սուհետեւ մեք ճանաչեմք զնայ մեր ճշմարիտ բարեկամ, հայր եւ մայր, նայեւ թագաւոր մեր եւ ամենայնէ զօրութենէ մերմէ սիրեմք զնայ եւ ծառայեմք զամենայն յաւուրս կենաց մերոց:

— Արդ ասացէք ինձ, օվ փափապաշտ իտալացի՛ք, թէ քանի հարիւր ամօք յառաջ քան Ունկարիու Հայաստուն հաստատիլն մեր ազգն եկին առ ձեզ եւ բնակուեցան ի միջի ձերում, ի Վենետիկ, ի Ալիկօռնայ եւ յայլ բազում տեղիս: Արդ յո՞ւր են նոքայ, ընդէ՞ր ոչ աճեցան, այլ կորան: Վասն որոյ աղաչեմ եւ խնդրեմ ի ապենիազ արարչէն, որ առաւել եւս յաւելցէ կայսեր թագաւորութիւն եւ հաստատ հիմն արասցէ մինչի վերջ աշխարհին, ամէն:

— Եւ որպէս որ դուք կամեցաք եւ կամիք վասն մեր ազգին, փոխարէնն լիցի ձեզ ի Տեառնէ Աստուծոյ մերմէ, եւ որպէս որ կայսրն կամեցաւ բարի առնել մեր ազգին, նմանապէս հատուցէ նմա Տէրն ամենակալ. ամէն:

— Բարւոք ասաց Տէրն մեր, թէ՝ ծառ չար ոչ կարէ առնել բարի պտուղ: *Ահա յայտնի եղեւ ամենայն աշխարհի ձեր եւ ալէմանաց բարերարութիւնն ի յաւիտենից այնպիսի նախանձոտ, չարահնար: Խորամանկէյիք եւ ամենայն ինչս ձեր խաբէյութեամբ եւ խարդախութեամբ էր: Հաստատեցիք կայսերութիւնն ձեր հնարիւք եւ ոչ թէ պարզ զօրութեամբն ձերովք: Պատրէցիք զօրաւոր ազգացն եւ /268b/ ձերացուցանէյիք եւ նովաւ յաղդէյիք զմիւսն եւ դարձեալ յաղդեցեալքն յակամայ միաբանեցուցանէյիք ընդ ձեզ եւ նովաւ յարէյիք ի վերայ միւսոյն: Ի սկսբանէ այս օր[ի]նական հաստատեցաւ ձեր իշխանութիւնն, որ հիմն պատրանօք եղեւ եւ խարդախութեամբ: Ոչ հանդուրժեաց Ամենակալն, քակեց զնայ ի հիմանց եւ ետուր իշխանութիւնն այլոց. այսպէս, որ ոչ ունիք թագաւոր, ծառայէք այլոց մեզ նման, որովհետեւ զրկեցաք ի իշխանութեանց:*

— Յետ այնորիկ այլ իմն հնար յիմացաք. շինեցէք ի միջի ձերում փափութիւն մի, որ կոչէք զնայ յերկրի Աստուած, զի կամիք նոքօք իշխել այլոց: Բայց զնայեւս Աստուած ոչ հանդուրժեաց, քակեաց ի ձէնճ ի ինկլիսն, դանիմարքն, շըվէթն, փռուսն եւ այլք:

90 Նկատի ունի Գեղա հայաքաղաքի հիմնադրումը (մանրամասն տե՛ս Հ. Գրիգոր Գովրիկեան, *Դրանսիլուանիոյ հայոց մետրապոլիսը կամ նկարագիր Կեղլա հայաքաղաքի*, Վիեննա, 1896, տե՛ս նաեւ նոյնի, *Հայք Յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ*, հտ. Ա, 1680-1779, Վիեննա, 1893, հտ. Բ, 1780-1825, Վիեննա, 1899, հմմտ. *Հայ-հունգարական պատմական եւ մշակութային կապերի պատմութիւնից*, Երեւան, 1983):

— Այն արդար դատաստանաւն մնացեալքն եւս քակելոց են, բայց վերշապէս լինելոցք էք օցինքսն ամենայն ազգաց, որոց մեք բօշա անուանեմք եւ տաճիկքն՝ չինկանայ առձայնեն եւ լեհացիք ասեն ցիկան, քանզի ամենայն վարուքն ձերօվք նման էք նոցա: Քանզի ես, թէպէտ փոքր ժամանակս կացի ի միջի ձերում, բայց ոչ ուրուք այլոց ազգաց նմանոք Քրիստոսի: Նմանեցուցի զձեզ եթէ ոչ միայն եւեթ որպէս որ ասի, թէ բօշայի, եթէ ոք որ ոչ հաւատայ բանից իմոց, գնայ անդ եւ տեսնու զնոսա, բայց առաջ քան նոցա տեսնելն /269a/ տեսցէ զայլ ազգսն Եւրօբայու եւ ապայ թէ քննեսցէ զնոսա դիւրաւ:

Հ. Դուն ասացել ես, թէ լաւ է, որ մեր ազգն բնակին ի մէջ տաճկացն, քան թէ ի մէջ ֆռանկաց:

Պ. Ես այտպէս ասացել չեմ, բայց պատասխանն տամ այտմ: Թուրքն ջանայ մեր ազգն դարձուցանել առ յիւրեանց եւ դուք ջանաք դարձուցանել ի ձեզ: Այս կողմանէ չիք զանազանութիւն ձերն ընդ տաճկաց: Բայց ի կողմանէ հաւատոյ երանելիք եմք բանիւ Տեառն մերոյ, որ ասաց՝ յորժամ որ նախատիցեն զձեզ եւ ասիցեն բան չար զձէնճ սուտ վասն իմ, ցնծացէ՛ք եւ ուրախ լերո՛ւք, զի վարձք ձեր բազում են ի յերկինս: *Եւ այլ բազում տեղիս եւ որք վկայեն առաքեալքն, թէ պարտ է մեզ հալածանօք ժառանգել արքայութիւն երկնից, մեծ պնակաց ակն ունիմք ի Տեառնէ, որ մեք հաւատն Քրիստոսի պահեմք այս անօրինաց մէջն: Զանձրանամ մի ըստ միոջէ գրելն, բայց նրբաբար նկատօղքն տեսանեն, թէ հազար անգամ մեր գուեհիկն համարձակութիւն ունի ի մէջ տաճկացն, քան թէ ձերն ի միջի ձերում:*

Հ. Որպէ՞ս իշխեցիր հաւասարել մեր գուեհիկն ընդ տաճկաց, որ նոքա հարկս առնուն ի գուեհկացն եւ մեք՝ ոչ:

Պ. Իրաւ որ, մեր գուեհիկն տայ տաճկացն տարէնն հինկ մառչիլ եւ կէս՝ թագաւորին եւ կէս մառչիլ՝ քաղաքի փաշային, բայց զամենայն, զոր ինչ գործ որ կամին գործեն: Բայց ձեր գուեհիկս /269b/ թէպէտ ոչ տայ յայտնի հարկս, սակայն ծածկաբար այնքան ծրծեն ի նոցանէ, որ հազիւ թէ կան: Մերքն առնուն ի կարողաց, ձերն՝ մինչեւ եւ ի աղքատացն, քանզի ջուրն եւ ոչ տաք նոցա ձրի ըմպել: Մերքն թէպէտ տան հարկ, բայց համարձակ գործեն ամենայն ինչ, ձերքն ոչինչ կարեն գործել թարց հատուցման թագաւորին: Մեր գուեհիկն իւր աշ[խ]ատանօքն կարէ յառաջանալ եւ մեծանալ, բայց ձերքն կարէ աղքատանալ, բայց ոչ կարէ մեծանալ: Մեր տաճիկն զմեզ հաւասար ինքեան համարէ. ի մէջ դատաստանաց ոչինչ զանազանութիւն յիմանան թէ՛ հայ եւ թէ՛ տաճիկ, բայց դուք ատէք զհայն եւ պակաս համարիք ի ձէնջ: Եւ այլ անթիւք են բանք, բայց ոչ կամիմ գրել, սակայն այս մէկ բանիս յիմանի զայլ անթիւսն ի մերոցն. որք յարին առ պարոնացս տաճկացն, մեծանան եւ առաշանան եւ լինին պարոն: Ջանան եւս պարոնայքն տաճկաց. թէ մեծացուցանեն զնոսա, զի լինիցին ճրաՀն եւ [ն]իշատակ վասն նոցա ի յաւիտենից:

— Ո՞ ոք լաւ, թէ գոնէ այր մի ի մերոցն մեծացաւ ի ձէնջ եւ հասաւ ի աստիճան ի այնքան անթիւցն, որք ծառայեցին ձեզ: Ոչ ոք: Ես վկայեմ, որ բազումք վնասեցան ի ձէնջ, բայց շահողացն ոչ տեսի եւ ոչ լսայ, քանզի ամենայն ոք, որ ծառայեն զհոգով չափ եւ ամենայն հաւատարմութեամբ, վերչն որ յուսայ առնուլ զվարձն իւր, այնժամ օրինէք ի վերայ նորա բազում մեղս, փոխանակ վարձատրէ/270a/լոյ՝ վնասէք, փոխանակ շնորհակալութեան՝ վատահամբաւէք եւ վարէք ի ձէնջ ունայն, հանգոյն քաղցած առջուցն, քանզի յաչն, ցորժամ որ սօվի եւ տրոչ ինչ գտանէ ուտելի, խորհի ուտել զաւակն յիւր, բայց ենթադատէ ի մտի եւ ասէ՝ մեղադրեն զիս, թէ եկեր զզաւակն յիւր: Կալնու զքօթիթն իւր եւ թաւալեցուցանէ զնայ ի մէջ տղմից այնքան, որ այլակերպի, զկնի այնքան անարգութեամբ եւ չարչարանացն հայի դէպ ի նայ եւ ասէ՝ օ՞վ է սա: Դարձեալ դառնայ եւ պատասխանէ ինքն յիւրեան եւ ասէ՝ քոյ զաւակն է: Դարձեալ պատասխանէ՝ քաւ լիցի սայ ամենայն իրօք ոչ նմանի ինձ, այնժամ սակաւ է զնա պատռելն եւ ուտ[ելն]:

© National Library of Armenia

Հ. Ասացիր, թէ մեք հպարտ եմք, ի՞նչ հպարտութիւն տեսիր ի մեզանէ:

Պ. Բազում եւ զանազան հպարտութիւնս տեսի ի ձէնջ: Ի յամենեցունցն ոչ կարեմ յիշատակել, բայց զերկուսս ի նոցանէ յայտնեմ:

—Աստ, ի քաղաքն Շամախի, աւուր տօնից ժողովէին մեր ազգն առ ի տեսանել զպատարամ առ ճէզուիտ պատրի Ֆռանչիսքոսն Շամփիոն: Յաւուր միում շատ յամեց այն պատրին, ձանձրացան ժողովուրդն ի սպասելն, առաքեցին զիս առ նայ, թէ՝ ժամանակն անցաւ, մեք բան ունիմք, ոմանց հարկաւորութիւն կերակրոց եւ այլք այլ իմն: Պատասխանէ ճէզուիթն, թէ սպասեն մինչի որ մուսի Պօռէկարն գայ: Այնքան ժողովուրդն եւ այնքան վաճառականքն ոչինչ համարէր առչի այն մէկ ֆռանկին: Ոչ թէ մի անգամ, այլ ամենայն կիրակէի եւ տօնից այն/270b/պէս լինէր, քանզի այն մարմնապաշտ ֆռանկն անագան ուղղէր զինքն ի գալ, բայց յաւուր միում, որ արի շատ յամեց, որպէս թէ զիս առաքեցին առ նայ եւ այլ:

— Երկրորդն մինչ ազատեցայ ի Ռուստաց եւ գնացի Լեհաստուն ընդ այն քափուչինին, հանդիպէր, որ գնայէաք յիմիասին առ զիշխանս եւ առ վանորայս նոցա: Երբեմն պատուէյին եւ նստուցանէյին զիս ի յառաչին տեղւոջն: Յաւուր միում վիճեց ընդ յիս քափուչին Օվանէսն եւ ասաց՝ ինձ յոյժ դառն թուի եւ դիպի ի սրտիս, որ յորժամ որ տեսանեմ զքեզ բազմեալ ի վերայ իմ, որպէս որ պատմի ի գիրս Աստուածաշնչո[յ] ի Համանայ: Արդ տես, թէ այս արարն Աստուած կընդունի՞, որ զձեզ միայն արժանիս համարիք պատուոյ եւ զայլ ազգսն ոչ: Այս անտանելի հպարտութիւն չէ՞ մի:

— Եթէ այս զրուցն ինձ ասօղն մէկ աշխարհական պարոն լինէր, կարելի էր տանիլ, բայց մէկ հարբեցօղ քափուչին մի, նայեւս եթէ ես իմ կամօքն յօժարէյի բազմիլ ի վերայ նորա, այն եւս կարելի էր տանիլ, եւ ունէր իրաւունք, բայց տեսնէր իւր աչօքն, որ տան տէրն այնպէս բռնադատէր, մանաւանդ որ ես այն ժամանակներն պաշտէյի զձեր պատրիք, քաւ լիցի ի տեղի Աստուծոյ, երբեք ոչ նստայ եւ ոչ կամեցայ նստիլ ի վեր քան զպատրիսն:

Հ. Նայ իրաւունք ունէր, որ վիճեցաւ ընդ քեզ, քանզի նա կարգաւորէր քեզ: Ոչ էր պարտ բազմիլ ի վերայ նորա:

Պ. Քրիստոս ասաց, թէ՝ ես տէրս եւ վարդապետս ձեր յոտն լուանամ[91], օրինակ տվեց խոնարհութեան: Արդ նայ, /271a/ եթէ իցէր ճշմարիտ աշակերտն Յիսուսի, ոչ այնպէս հպարտանայր, այլ էր աշակերտ հրէյից. որպէս որ նոցա փարիսեցիք որոնեն բազմիլ ի յառաջին տեղն, նմանապէս նայ կամէր միշտ բազմիլ ի վեր, զի նմանեսցի փարիսեցւոյ:

— Ընդէ՞ր ես ոչ նստէյի ի վեր քան զնայ: Աշխարհօրէն ասեմ, որ որդի էյի մեծ վաճառականի եւ ի մեծ ցեղէ եւ անուն ունէի պալիօզի եւ դեսբան երեք թագաւորի եւ այլ: Եթէ ես որպէս որ ասի, թէ իմ կամաւս որ նստէյի, իրաւունք ունէր, այլ յակամայ, քանզի տան տեարքն ճանաչէյին զիս եւ զնայ: Ես, որ ամենայն ժամ պատուէի եւ մեծարէյի զնայ, մի՞թէ ոչ էր պարտ, որ երբեմն նայ մեծարիցէր զիս: Ինքն յիւր պարտութիւն ոչ առնէր, այլոց մեծ[ա]րանքն դառն թուէր նմայ: Ոչ թէ միայն այն քափուչինն էր այնպէս, այլեւ ամենայն ազգն ձեր նոյն բարօքն են: Կամիք, որ ամենայն ազգ պատուեն եւ մեծարեն եւ հնազանդին ձեզ, բայց դուք ոչ ումեք եւ ոչ ոք համարիք հաւասար ձեզ: Տես, թէ այս բարօքն կարէ՞ք ասել դուք ձեզ, թէ էք քրիստոնեայ:

Հ. Ասացիր, թէ մեք անողորմ ազգ եմք եւ ոչ առնեմք զողորմութիւն:

Պ. Եթէ դուք ողորմած լինէյիք, թագաւորն ձեր ոչ շինէյին զհիւանդանոցս եւ զօտարանոցս: Այտ կողմանէ նմանիք անասնւոյ եւ ոչ Ադամայ որդւոյ, քանզի ժողովուրդն ձեր ոչ յուսան տալ զողորմութիւն, մերքն՝ տան որքան որ կարեն, բայց միշտ ունին սիրտս գթած եւ գալարին զաղիս նոցա ի վերայ հիւանդաց եւ չքաւորաց եւ կսկծայն ի վերայ նոցա: Ոչ է զարմանք, /271b/ թէ աշխարհականքն ձեր ոչ են ողորմած, բայց մեծ զարմանք է, թէ ձեր կրոնաւորքն ընդէ՞ր են անողորմք այտքան: Աստ անտեղի յէ ամենայն տեսածս եւ լսածս գրել: Բայց զերկու իրս յայտնեմ ի անողորմելութենէն կրոնաւորաց ձերոց: Յամի Տեառն 1742 մինչ ես էյի ի Սպահանու Ջուղայ ի վանս ճէզուիթաց, յաւուր միում նստէաք առ դրան պարտիզին նոցա: Անդ էյին մանկունք հայոց, որ կարդացնէր զնոսա մեր մղդեսին ճէզուիթաց: Եկին երկու աղքատ խնդրել զողորմութիւն: Սայ ոչ կամեցաւ տալ: Նոքայ ստիպէյին ողոքական բանիւք եւ խնդրէյին վասն անուանն Աստուծոյ եւ Յիսուսի Միածնին: Իբրեւ նոքայ մի եւ երկու բանիւ ոչ դարձան, հրամայեց մղտսին մանկանցն, որք հայհոյելով զաղքատսն վարեցին ի դուրս:

— Ունէյին սոքայ շուն մի կարի անսպէտ, զատզ յաւելորդացն կերակրողն, որ տայր մղտեսին այն շանն յաւելոյր տայր ամէն օր երեք հաց: Այնքան յաւելորդ կերակրել էր, որ բորոտել էր շունն, բայց վասն աղքատաց խնայէր պատառ մի հացի:

— Ես կացի ի վանն այն մօտ երկու տարի: Երբեք ոչ տեսի, թէ յել ի դրանէ վանուցն նոցա փող մի վասն աղքատաց եւ կամ պատառ մի հացի: Պատահէր, որ երբեմն ի վերայ սեղանոյն նստած ուտէիք ճաշ, գային աղքատքն եւ խնդրէյին զողորմութիւն, ոչ զօրէյին ձեռս նոցա, թէ առաչի կայ հացէն պատառ մի հաց կտրէյին եւ առաքէյին վասն նոցայ, ոչ թէ միայն ոչ տային ողորմութիւն, այլ եւ տային /272a/ վաղվաղակի պատասխան, որ ողորմելիքն գնային ի բաց զկնի բազմիցս ձայնելոյ: Որ ոչ լսէյին պատասխան ինչ, կարծէյին, թէ տունն մարդ չկայ, դառնային եւ գնային: Բարւոքն ենթադատէյին ողորմելիքն, թէ մարդ ոչ գոյր ի տանն, քանզի նոքա, որ նստէյին ի սեղան՝ ոչ էյին մարդ: Սեղանատան պատուհանն բարձր էր եւ նայէր ի վերայ սրահին: Յորժամ որ գային աղքատքն եւ մտանէյին ի սրահն, որոյ միչի դուռն փակած ունէյին, որ ոչ կարէյին մտանել ներսի գաւիթն, հարկաւոր էին աղքատքն կալ առ ներքո[յ] լուսամտին. ոչ նոքա մեզ տեսնէյին եւ ոչ մեք՝ զնոսա, այլ միայն թէ նոցա ձայնն գայր: Երբեմն ես առնէյի ի սեղանոյն եւ գնայի տայի նոցա իր ինչ:

— Յաւուր միում մինչ հարցի զպատճառն, թէ ընդէ՞ր ոչ տաք աղքատաց հաց եւ կամ այլ ինչ կերակուր, այնքան կերակրեցիր այտ անպետ շունն, որ ի յաւելորդ ուտելոյն բորոտեցաւ, գոնէ շանն քիչ տուր, յաւելին տուր աղքատաց: Պատասխանեց՝ մեք յառաջ կուտէաք ողորմութիւն աղքատաց, բայց հայոց ազգն բամպասեցին մեզ, թէ մեր աղքատացն դրամ կուտան, որ իւրեանց ժողովուրդ շինեն, վասն այսորիկ հատաք տալ նոցա ողորմութիւն:

— Երկրորդն. յամի Տեառն 1737 փետրվար 22, մինչ մտաք ի քաղաքն Վարշաւ, իմ յընկեր քափուչինն մեկնեցաւ յինէն եւ գնաց ի վանն քափուչինաց, եւ զիս դուրսն նստուցին ի դարպասոջն Կրասինցքի իշխանին, որ տունն էր ամայի, սաստիկ ցուրտ էր, վասնորոյ առաքեցի ծառայն առ վանն /272b/ քափուչինաց, զի խնդրեսցէ ի նոցանէ փոքր ինչ փայտս վասն այն աւուր մինչ որ վաղն յելանեմք ի դուրս եւ հոգամք վասն մեր: Դառցաւ ծառայն յունայն, աւատացի, թէ ոչ ունին փայտ աղքատ քափուչինքն: Անցին յաւուրս բազումս: Յաւուր միում, մինչ գնացի անդ, տեսի այնքան կարկառս փայտից, որ բաւական գլնէր ամենայն քաղաքին: Այնպէս կարծեմ, թէ այն աւուրն, որ շինեցաւ վանն այն, այն ժամանակէն փայտ այնպէս կայր, որ նորն զհինն կոխել էր այնպէս, որ հինն գօսացել էր: Արդ ի՞նչ ասես այսպիսի անողորմելութեանն: Եթէ այն քաղաքն թանկագին լինէր փայտն, ոչ այնքան մեղադրէյի զնոսա: Բայց էր էժանագին, որ մէկ սալն տային 300 դիանի:

Հ. Այն Սպահանայ ճէզուիտներն, որ ոչ ողորմէին աղքատաց, իրաւունք ունէյին չտալ, որ ոչ բամբասին:

Պ. Այն սնոտի բամպասանն է մեծ, թէ՞ Աստուծոյ պատուէրն, որպէս որ Յոհաննէս ասէ, թէ տեսնէ nf եխպայրն կարօտեալ, nr ոչ

91 Հմմտ. Յովհ. ԺԳ 14

© National Library of Armenia

գթայ, զիա՞րդ կարէ ասել, թէ սէրն Աստուծոյ ի նմայ է բնակեալ[92]: Շնորհեմ քեզ այս ամենայն:

— Ոչ ապաքէն ամենայն ետրօքայ յորժամ որ նստիք ի սեղան, փակէք զդրունս եւ այնպէս սահմանեցիք, որ հացի ժամանակն ոչ ոք գնայ ի տունն օտարաց, որքն որ մեծ հարկաւորութիւն հանդիպի: Եթէ գնան, մեծ ամօթ լինի: Նայեաս ոչ հրաւիրեն եկօղին ուտել եւ կամ նստուցանել առ սեղանաւն, այլ հեռու տեղ աթոռ դնեն եւ նստի անդ: Նայեաս ոչ տան զաւ[յ]իդ պատասխան, այլ հարեւանցի: Ոչ թէ միայն վասն օտարացն է /273a/ արգիլեալ հացի ժամանակն տուն մտանել, այլ եւ վասն հարազատ եխպօրն եւ թէ, որքան սիրելի եաս իցէ, մանաւանդ ի վանօրայս ձեր նոյն օրինակաւն վարին, փակեն զդրունս, յորժամ որ հաց ուտեն:

— Մինչ գնացի ի քաղաքն Մսրտամ, պատմեցին ինձ հայքն տեղոյն, թէ այս մեր տանտէրն ունէր մէկ եխպօր որդի, փոքրիկ մանուկ մի: Յաւուր միում եկաւ աստ, որ սոքայ հաց ուտէին: Նստուցին զնայ հեռու ի սեղանւոյն: Ամէն բրթուճ, որք դնէին նոքա ի բերանս յիւրեանց, մանուկն նայէր զկնի եւ թուքն կուլ տար: Իբրեւ մեք տեսաք այս անողորմելութիւնն, գալարեցան յաղիք մեր, ասացաք նոցա, թէ՝ մի՞թէ դուք Աստուծոյ ոչ յերկնչէք, գոնէ փոքր ինչ միրճ տվէք մանկանն, որ ուտէ: Պատասխանեց տանտէրն եւ ասաց, թէ՝ ես ի՞նչ պարտական եմ դմայ, ունի հայր, թող նայ կերակրէ: Այս սովորութիւնն ձեր հաստատէ վերոյ իմ բանքն, թէ են ճշմարիտ եւ դուք ի սկսբանէ անողորմ էք, ժլատ եւ ագահ:

— Արդ եկ եւ տես մեր յերկիրն, գնայ յուր որ կամիս եւ յորժամ որ կամիս, գտնես զդրունս բաց: Եթէ հասանիս ի վերայ սեղանոյն եւ կամենաս նստիլ ի հեռու, բռնադատեն զքեզ եւ նստուցանեն առ սեղանաւն, ամենայն կողմանց հրաւիրեն ուտել զարդ դիմօք, ազնիւն ուտելեաց մատուցանեն եւ դնեն առաջի քոյ, աղաչեն, խնդրեն եւ բռնադատեն ճաշակել: Վերջ սեղանոյն աղաչեն ներել, զի ոչ ունեցան ըստ արժանեացն քոց կերակուր եւ ոչ ըմպելի, մէ հին ի քենէ. յանկարծ պատահեցար, եւ գտան անպատրաստ եւ այլ: Ահա /273b/ մեկնեցան զանազանեցան եւ ուրոյն կացան մերն եւ ձերն:

Հ. Մեր յերկիրն ամենայն ինչ թանկագին է, մեք ձեզ նման ոչ կարեմք առնել, հապա թէ կարեմք կերակրել զ[ը]նտանիս մեր:

Պ. Մի՞թէ մեք ոչ ունիմք զաղքատս, որ հազիւ թէ բաւականանան միայն թէ կերակրել զ[ը]նտանիս իւրեանց: Բայց միեւնոյն սովորութիւնն է փարթամացն եւ թէ աղքատացն. իբրեւ որ մտանէս տունն աղքատաց, նոյն օրինակաւն վարին ընդ հիւրողն:

— Ասացիր, թէ մեր յերկիրն ամենայն ինչ թանկագին է: Ո՞վ է պատճառն այտ թանկութեանն, ոչ ապաքէն թագաւորք եւ իշխանքն ձեր, որ դրին զմեծամեծ մաքսս ի վերա[յ] պարէնի ժողովրդեանն, որ հազիւ թէ կարէք ապրիլ:

— Ապա վերոյ ինձ այպանեցիր, թէ գովեցի զտէրութիւնն տաճկաց: Արդ, արի տես, քննէ, թէ միթէ գոյ մին քաղաք ի ներքո[յ] տէրութեանն տաճկաց, որք ձեզ նման, ամօթ ասելն, տասանորդեն մինչ զսոխն եւ զսխտորն, նայ եւ մինչի կանանչեղէնն: Տաճիկն ոչ ուստեքէ առնուն զմաքսն, եթէ ոչ միայն եւեթ ի ըզգակացն, ամենեւին ոչ մերձենան ի ուտելիս եւ ի խմելիս: Վասն այս պատճառէս ասի, թէ լաւ է գոհեհիկն տաճկաց, քան թէ քրիստոնէիցն:

Հ. Մեք բարեկամ ձեր եմք, կամիմք, որ վասն ձեր լաւ լինաց, բայց դուն միշտ հակառակ կաս կամացն մերոց:

Պ. Քաւ լիցի ինձ ումեք հակառակ կալ, մանաւանդ բարեկամացն մերոց: Բայց աղաչեմ, զի ասես ինձ, թէ որպիսի՞ բարեկամ եք դուք մեզ: Ոչ գիտեմ ձեր /274a/ բարեկամութիւնն. միայն թէ բանիւ լսեմք եւ ոչ գործով: Ի սկսբանէ մինչի ցայսօր ի՞նչ բարեկամութիւն արարիք ընդ մեզ, որ յայտնապէս երեւեցաւ եւ երեւի: Ոչինչ ի ձէնջ առ մեզ եղեւ բարի, երբեք որ յիշատակիւր ի միջի մերում, բայց ձեր ծածկեալ եւ գաղտագողի թշնամութիւնն յայտնեմ մեր պարզամիտ ազգին:

92 Ա Ցովհ. Գ 17

— Ի սկսբանէ տեսիք մեր ազգի յարութեան քաջութիւնն, յերկեաք, թէ զօրանամք եւ տիրեմք ի վերայ ձեր: Այնքան հնարեցիք, որ կործանեցաւ մեր թագաւորութիւնն, այնուհետեւ որ ոչ ի ձեզ մնաց կայսերական իշխանութիւնն, որով իշխիցէյիք ի վերայ մեր: Հնար յիմացաք, թէ գոնէ ի կողմանէ հաւատոյ տիրէսցուք հայոց, որ եւ տիրեցիք ժամանակ մի: Երբեմն տիրեցիք եւ երբեմն՝ ոչ, մինչ որ հասաւ մեր ժամանակն: Տեսիք, որ մեր ազգն բնական գիտութիւն ունի, եթէ առնուցուին զստացականն, եւս յաղթեն մեզ: Սկսեցիք ծածկաբար արգելուլ յուսումն ի հայոց ազգէն, զի մի եղիցի ի միջի մերում գիտութիւն, որ ոչ յաղդեմք զձեզ:

— Վերչապէս կամեցաք կործանել աթոռն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ձեռամբ պարսից յարօղ Նատիր շահին, որ զամենայն զոր ինչ որ կամեցաւ, առաւ ի կաթուղիկոսէն: Իբրեւ որ սպառեցաւ գանձն ամենայն, այնուհետեւ կողոպտեաց ամենայն վանուց զարդն, որ Ղազար կաթուղիկոսն փախստեամբ եկաւ ի Կարին յամի Տեառն 1746 դեկտեմբերի ամսոյ[93]: Այս է ձեր բարեկամութիւն /274b/, այս կերպիւս բարեկամաց դատաւորն լիցի ինքն արդարադատ Տէրն մեր եւ լիցի վրէժխնդիր:

Հ. Ձեր կաթուղիկոսն ինքն հակառակեցաւ մեզ:

Պ. Կաթուղիկոսն իրաւունք ունէր հակառակելո[յ]: Ասաց Տէրն, թէ՝ որպէս կամիս, թէ արասցեն քեզ մարդիք, նոյնպէս արասցես եւ դու նոցա[94]: Եթէ մեր մարդն գայր ձեր երկիրն, այն գործն գործէր, որպէս որ ձերոնքն գործեն ի յերկրի մերում: Թոյլ կու տայի՞ք դուք: Ոչ: Մեր կարգաւորն, որ ձեր յերկիրն գու գայ, գողի նման շրջագայի, բայց ձերն ի յերկրի մերում այնքան համարձակութիւն ունին եւ այնքան իշխեն, որ [յ]անդգնին մեր ազգին շուն կոչեն, նայ եւ ծանախու առնեն զմեզ, նայեւ մեր վարդապետաց եւ քահանայից, կապեալ ասեն նայեւ կաթուղիկոսին:

— Արդ շատ է մեր կաթուղիկոսին, թէ հակառակի նոցա, զի կաթուղիկոսին արածն ոչ համարի հակառակութիւն, քանզի նախ դուք պատճառս ետուք, հակառակեցայք նմայ, նայ հարկաւորեցաւ ընդդիմանալ ձեզ: Կաթուղիկոսն ոչ վնասեց ձեզ, որպէս որ դուք վնասեցիք նմայ: Ինչ ասէ կաթուղիկոսն ձեզ. ոչ այլ ինչ եթէ ոչ միայն եւեթ, թէ՝ գնացէք ձեր յերկիրն: Միթէ այս բան հակառակութիւն է: Ոչ համարիմ:

Հ. Ունի՞ս այլ ինչ բան հարցանելո[յ]: Ոչ: Բայց այս ամենայն հարցմանցն իմոց, որոցն դու պատասխանեցիր, ոչ այլ ինչ յառաջագայի եթէ ոչ ատելութիւն: Յերկնչիմ, թէ մեղանչեցաք յերկոքեանս եւս, քանզի Տէր մեր հրամայեաց սէր եւ ոչ՝ ատելութիւն:

/275a/ Պ. Մի՛ յերկնչիր, քանզի մեր կողմանէ ոչ լինի ատելութիւն, բայց ի ձեր կողմանէ ի սկսբանէ չիք սէր, այլ միշտ է ատելութիւն, վասնզի մեր ազգն է սիրօղ եւ ոչ ատօղ, ուստի են պարզամիտ: Տես, որքն որ ազգ քրի[ս]տոնեա[յ] կան ի վերայ աշխարհիս, ամենայն ոք ըստ կարծեացն իւրե[ա]նց պատճառ ինչ դնեն ի վերայ մեր եւ ատեն զմեզ, բայց մեք յամենեցուն սիրեմք եւ պատուեմք զնոսա, որպէս որ համաշունչ եխպայր:

— Այս մեր վիճաբանութիւն Աստուծով ի երկու կողմանց հաստատելոց է սէր: Ուստի տեսանեն, թէ ի զուր շարչարեցին զիս, զղջայն եւ փոշմանին եւ դառնան վերստին սիրել զմեր ազգն, թէ են տեւօղ եւ համբերօղ ի փորձութիւնս եւ մեր ազգն զարթնուն ի քնոյ եւ զամենայն հնարն ձեր յիմանալօվ պատրաստեն զինքեանս ոչ անկանիլ ի ցանձս ձեր: Տես եւ լաւ քննէ, թէ իմ ասածին պէս է եւ թէ՝ ոչ:

— Այր ոմն, որ միամիտ լինի, կամի սէր առնել ընդ խորամանկի ումեք, բայց ոչ գիտէ զնայ, թէ է խորամանկ, այլ թէ միամիտ, իբրեւ զինքն: Բայց խորամանկն միշտ շրջի որոնել զայպիսին, զի պատրիցէ զնայ, իբրեւ որ պատ-

93 Նադիրի եւ Ղազար Ջահկեցու միջեւ յարաբերութիւնների ամբողջ ընթացքի մանրամասն նկարագրությունը տե՛ս Մ. արք. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, Ս. Էջմիածին, 2001, §§2022-2028:

94 Հմմտ. Ղուկ. Զ 31

© National Library of Armenia

րէ զմիամիտն եւ վնասէ նմայ: Առժամայն միամիտն վիրաւորի, վրդովի, գայթակղի եւ դառնայ ի նմանէ կսկծալով, բառնի սէրն ի միջէ եւ լինի մեծ ատելութիւն: Այնուհետեւ տիւ եւ գիշեր ոչ դադարի միա/275ե/միտն, թէ որպէս կամ որպիսի հնարիւք առնու զվնասն ի նմանէ, որ ոչ կարէ առնուլ ի նմանէ զվրէժն, քանզի նայ խորամանկ է, միշտ զգաստ: Նոյն նախանձօվն տոչորի միամիտ այրի մինչի մահ: Բայց իբրեւ որ երկու կողմանց լինին զգաստ, ոչ լինի պատրանք եւ վնաս: Ուր ոչ լինի վնաս եւ խաբէութիւն, ոչ նազի սէրն, այլ միշտ մնայ, վասն այսորիկ իբրեւ որ տեսանէ մեր ազգն այս ամենայն [յ]անձանքն եւ հմտանայ ձեր գործոցն, պատրաստ պահէ զինքն եւ զգուշանայ ոչ վնասիլ: Որ ոչ վնասի, ոչ ատէ, այլ միշտ սիրէ: Նայեւ իմ կողմանէ գայթակղօքն տեսանեն զայս ամենայն, սկսին ապաշաւել, թէ ի զուր եւ ի տարապարտուց ատեցին զիս, դարձեալ դառնան սիրել զիս եւ դարձեալ հաստատի սէր ի միջի մերում:

Հ. Իրաւ, որ այդպէս է: Շնորհակալ եմ, որ զերծա[յ] ի տարակուսանաց, մնաս բարով:

Հ. Կացի՛ր եւ լո՛ւր ինձ: Զամենայն, զոր ինչ որ դուն ինձ հարցիր յինէն, ամենայն ճշմարտութեամբ քեզ պատասխան տվի: Այժմ ես հարցանեմ ի քէն, պարտիս եւ դուն պատասխանել ինձ:

Հ. Ասայ ինձ, ի՞նչ դիտաւորութիւն էր իմ յընկեր քափուչինին, որ զիս մատնեց ի Ռուստաց:

Պ. Վասն չորս պատճառից: Նախ, որ դուն միշտ գովաբանէիր զռուս թագաւորն առաջի Պարսից: Տեսաւ զքոյ ջերմեռանդ սէրն ընդ ռուստաց, կարծիք անկաւ ի վերայ քոյ, /276ա/ թէ դուն ծածուկ միաբանես ընդ ռուստաց, եւ յայտնին ընդ ֆռանցիգաց շրջիլ ի մէջ Պարսից եւ բանիլ վասն Ռուստաց: Դուն, որ անուամբ ֆռանցիզաց էիր, ոչ էր պարտ քեզ գովել զռուսն առաջի քափուչինացն: Դուն դեռեւս ոչ գիտացիր բարեպէս զնրբահայեաց միտսն ֆռանցիզաց:

— Երկրորդ պատճառն էր, որ որօվհետեւ իւր մեծաւորն քափուչին Բեռնարդոսն սկսեց յայտնապէս վիճել ընդ քեզ եւ յայտնեաց իւր թշնամութիւնն: Ոչ կարէր ստել զնայ եւ զքեզ ճշմարտել: Կամեցուցաւ, որ նորա բանն յառ[ա]ջանայ, քանզի մեք հայոց նման չեմք, որ միաբանիմք ընդ օտարաց եւ հակառակիմք ընդ մերոցն: Այլ մեք այնպէս բնութիւն ունիմք, որ մեր մարդն, որքան որ սուտ լինի, վասն օտարացն ոչ ստեմք նմայ եւ ոչ թողումք, որ լինի նկուն:

— Երրորդն, որ կամեցաւ հաւատարիմ երեւիլ Ռուստաց, որ յիւրեանց վանորայքն, որք են ի մէջ յՌուստաց ապահօվ ապրին, մանաւանդ որ տեսնուն, թէ իրաւի ռուսք որպէս համարի՞ն զքեզ յիւրեանցն եւ թէ՞ ոչ:

— Չորրորդն պատճառ, որ քեզ թողու անդ կալեալ ի ձեռն ռուստաց եւ ինքն միայնակ դառնայ առ շահն, որ ամենայն խորհուրդն լինի մեծ եւ որ դու մեր թագաւորքն չը դեսնուս, յերկեաւ քէն, թէ գիտուն /276բ/ մարդ էս եւ լիզուօք ճարտար, չլնի թէ յառաչէս եւ նկուն առնես զքափուչինքն փոխանակ մատնութիւնն, որք արարին ընդ քեզ:

— Եւ մնացեալ պատճառքն, որք են ի միջի մերում խորհուրդ ոչ կարեմ յայտնել, այսքանն բաւական լիցի վասն քոյ հրամանուցն:

Հ. Ես միամիտ գովէի զռուսն, նոցա դիտաւորութիւնն ոչ գիտացի: Բայց աղաչեմ լսէ յերկայնմտութեամբ: Եթէ կրոնաւոր ոմն առաքէր զիս այնիշ քաղաքն բերել վասն յիւր հնագոյն գրեանք, յորժամ որ որ[ո]նէի գրեանքն, գտանէի անդ լաւ թուր մի՝ գինն էժան, գնէի զնայ, թէ տանիմ զսայ այնիշ զինուորի: Իբրեւ որ դառնայի ի անդի հանդերձ բազում գ[ր]քօք, որ բերէի վասն կրոնաւորին եւ զսուրն՝ ոչ, քանզի ի՞նչ է փոյթ ունէր կրոնաւորն զսրէ:

— Յիւր մեծաւորի անունն առաւել կամեցաւ շինել, քան թէ պահել զպատուէրն Աստուծոյ, ապայ

— Մի՞թէ այտ արարն վայել է կրոնաւորացն: Ոչ:

Հ. Վասն այտ արարմանցն ընդէ՞ր ոչ դատեցին զնայ, որ յայտնի եղեւ յամենեցուն:

Պ. Մի՞թէ վերո[յ] ոչ լուար, զոր ինչ որ ասացի, թէ վասն օտարաց մեք ոչ ատեմք զմերն, մանաւանդ որ նոքա մօտ երեսուն հազար քափուչինք են, տասն անգամ այնքան ի օտար կրոնաւորացն ունին զբարեկամս, նայեւ աշխարհականացն անթիւս, կամիս, թէ վասն մի՞ո[յ] հայի /277ա/ զայնքան անձինքն նկուն առնէի՞ն: Այտ անհնար էր, մանաւանդ որ ի մերս հայն ոչինչ համարին:

Հ. Այտպէ՞ս է:

— Այո՛:

Հ. Բարի յէ, լիցի այտպէս: Ես նոցա արածին հակառակ չէի մինչի ցայսօր: Բայց նոքա այնուհետեւ մինչի ցայսօր ընդէ՞ր հակառակին եւ վնասեն ինձի քափուչինքն ամենայն տեղիս եւ ամենայն ուրեք:

Պ. Վասն այն հակառակին, որ բարկանաս եւ վնասես նոցա եւ որ նոքա սկսին յայտնապէս վնասել եւ կորուսանել զքեզ, զի ոչ այլ խոսիս վատ վասն անուանն նոցա, որ ոչ յաւելին վատահամբաւիլ: Քանզի մինչի ցայսօր ոչ հասաւ զձայնն քոյ ի յունկս ամենեցուն վասն քափուչինաց: Վասնորոյ դեռեւս ոչ ոք մեղադրէ զքափուչինքն, այլ քեզ միայն մեղադրեն: Քանզի նոքայ բազումք են, նոցա ձայնն տարածեցաւ ամենայն ուրեք, եւ դու՝ միայնակ: Յերկնչին, թէ միգուցէ հասանիցի, վասն այսորիկ կապեցին զդրունս թագաւորաց եւ իշխանաց, զի մի լսիցեն քեզ, որ հաստատի յիւրոց բանն:

Հ. Այր ոք, որ յիւր յընկերն մատնէ ի ձեռն թշնամեաց եւ խորհուրդն նորա յայտնէ նոցա, մի՞թէ մեղք չէ:

Պ. Այո, մեծ մեղք է, բայց վասն քոյ մեք ոչ համարեցաք մեղ: Վասնզի ճշմարտապէս հաւատացաք քափուչինացն, թէ դուն ի կողմանէ Պարսից գնալ կամիս ի Եւրօբա, խնդրել զօրութիւն վասն շահին:

Հ. Թոյլ տամք եւ դիցուք, թէ այտպէս է: Ընդէ՞ր ոչ համբերեց, որ գնայի մինչի Եւրօբայ եւ այտ բանն /277բ/ իմ բերանօվս ասէի թագաւորացն նոցա, այնժամ զիս պատուհասէին:

— Թոյլ տամք թէ ես վասն այսորիկ գնայի խնդրել օգ[ն]ութիւն: Մի՞թէ թագաւորքն քրիստոնէից շահին ծառան էին, որ ի ասել բանին վաղվաղակի առաքէին զօրքն յիւրեանց: Եթէ իրաւ լինէր այտ բան, ինձ ոչ էր մեղ եւ ոչ պատուհասի արժանիս արասցէր զիս: Ես խնդրէի, թող նոքայ չտային:

— Մի՞թէ նախարարքն շահին այտքան անխելք էին, որ ոչ գիտենային, թէ յայտ անհնար գործ էր, որ կամենային խնդրել օգնութիւն ի Եւրօբայու:

— Դիցուք, թէ սոքայ խնդրէին եւ նոքայ յանձն առին տալ: Յուստի՞ կամ ո՞ր ճանապարհաւն գային զօրքն: Այտ բանիտ ոչ թէ մարդիկք միայն, այլեւ տհաս մանկունքն ծիծաղին:

Պ. Իրաւ որ, այտպէս է:

Հ. Մի՞թէ այտ ծիծաղելի բան չէ, կ[հ]աւատա՞ս դուն:

Պ. Պատասխան՝ ես ոչ հաւատամ, բայց կարծեմ, թէ յերկեաւ քափուչինն, թէ դուն ոչ կամիս, թէ ռուսք գան տիրել հայոց, վասն այսորիկ աճապարեց գործել վասն վերո[յ] եւ վասն այտ պատճառացն:

Հ. Ոչ է այտպէս: Լսէ, որ ես ուղիղն ասեմ քեզ: Նայ տեսաւ իմ ճառքն, իմ զօրութիւն եւ իմ իշխանութիւն, որ ետ ինձ Աստուած եւ ստուգիւ զգաց, թէ իմ ձեռամբն լինելոց էր փրկութիւն ազգին իմոյ, նախանձեցաւ, աճապարեց ոչ լինիլ: Այս բան յայտնի յէ ամենայն հմուտ արանց եւ որպէս արեգակն ճառագայթէ ամենեցուն, վասնզի քափուչինն, օտար ազգ գոլով, առաւել հոգ /278ա/ կրէ՞ր վասն ազգին հայոց, քան զիս, որ եմ ազգաւ հայ: Այտմօվ հաւատայ, ի՞նչ փոյթ է քափուչինին, թէ հայոց համար լաւ լինի: Եթէ ի սկսբանէ մեր ազգին մին բարութիւն արած լինէին, կարելի էր հաւատալ:

Պ. Պարզաբար նկատողացն այտպէս է:

Հ. Այնքան զիս չարչարեցին, ընդէ՞ր մին անգամ զիս ոչ խոսեցուցին:

© National Library of Armenia

Պ. Վասն երկուց պատճառաց. նախ՝ որ քափուչինքն չը խայտառակին, երկրորդն՝ որ ոչ ոք լուաւ ի բերանո[յ] քումմէ ճշմարիտ բան:

Հ. Այտ քու ասած ճշմարիտ բանն առ յո՞ւմ պարտի ասել՝ տեարց, թէ՝ ծառայից, իրաւաց, թէ՝ անիրաւ կեղծաւոր անձանց: Յերբոր գային կեղծաւոր փարիսեցիքն առ Տէրն մեր, ոչ տայր նոցա ուղիղ պատասխան. ընդէ՞ր կեղծաւորք էին, ոչ էին արժանի ճշմարիտ պատասխանուոյ: Նմանապէս ես առնէի ընդ կեղծաւորացն, ընդէ՞ր նոքա կեղծաւոր լրտեսս առաքէին առ յիս, որ ես ընդ նոսա այլաբանէի:

— Յե՞րբ բանիբուն լինօղ իշխանաց եւ թագաւորացն ոք ըստ օրինի հարցին յինէն ինչ, որ ես ոչ ասի նոցա: Ճշմարիտն Դաւիթ ասաց, ընդ ամբծին ամբիծ եւ ընդ թիւրի թուր եղիցիս[95], առ յոր ճանապարհաւն, որ գային առ յիս, նոյն ճանապարհաւն վարվէի ընդ նոսա:

Պ. Իրաւ, որ այտպէս է, ամենայն ոք այտպէս առնէ:

Հ. Ընդէ՞ր ձեր քափուչինքն այնքան վնասեցին ինձ եւ ոչ դադարին վնասելոյ:

Պ. Զի մի յաւելիցիս վատահամբաւել զնոսա, /278b/ այլ սկսիս խոսիլ վասն նոցա բարի եւ ոչ չար:

Հ. Մի՞թէ այտ ոչ է ծիծաղելի զրուց: Ես իմ ամենայն կեանն ծախեցի վասն նոցա, նոքայ փոխանակ բարութեան, հատուցին ինձ չարիս: Նայեա օրաւուր յաճախեն գործել զչարիս, այնուհետեւ յուսան յինէն, թէ վասն նոցայ խոսիմ բարի: Ի յաւիտենից ոչ լսայ զայտպիսի բան:

Պ. Այտպէս կամին, որպէս որ գիտեմ, այնպէս պատասխան կուտամ:

Հ. Մեք, որ նոցա խոստովանիմք, ասեն մեզ՝ յում անուն որ կոտրեցիր, գնայ դարձեալ շինէ գնայ եւ յում որ վնաս տվիր՝ հատոյ: Սոքայ ոչ թէ միայն չանան հատուցանել զիմ վնասն եւ կամ շինել զհամբաւն իմ, այլեւ նոր նորոգն վնասել ինձ: Թէ ասայ ինձ, թէ զլնի՞ նոցա ասել կրոնաւոր եւ քրիստոնեայ:

Պ. Իրաւապէս ասես: Ո՛չ:

Այլ ունի՞ս բան ինչ հարցնելոյ: Ոչ, բաւական է: Մնաս բարով:

Հ. Կացի՛ր եւ լսէ՛ այլ իմն զարմանալիս: Յամի Տեառն 1724, յորժամ որ ես կապանօք ածայ Փետրբուրգ, այն ժամանակին խոստացաւ թագուհին Ռուստաց Կատարինա Ալեքսեւնայն տալ ինձ յիւր տանէն մեծ իշխանի աղջիկ մի ի կնութիւն՝ վեց հազար տամբ գոհեկաւ, եթէ ծառայէի նմայ: Նայեա յաւել, խոստացաւ տալ ինձ մեծութիւնն՝ իշխանութիւն, պատիւ եւ զօրավարութիւն: Բայց ես այս ամենայնէ հրաժարեցայ վասն սիրոյն ֆռանցիզ թագաւորին՝ մտածելով այս բան, թէ այս բան ոչ ուղիղ գայ հաւատարմութեան, որովհետեւ ես խոստովանեցայ ծառայել նմայ: Թարց տեսանելոյ վնաս /279a/ եւ կամ դառնութիւն ինչ ի նմանէ ոչ է արժան թողուլ գնայ, վասնզի ոչ վայել է հաւատոցս, ազգիս եւ տոհմիս, նայեա անուան իմոյ, վասն փառաց աշխարհիս լինիմ նենգաւոր, նայ եւ մատնեմ զազգն իմ ի նախատանս ամենայն աշխարհի: Եւ ես, որքան որ կենդանի յեմ, յամօթալից լինիմ ի մէջ էսպայրց, պատճառ լինիմ վասն անուանակոտրութեան, որ այսուհետեւ եթէ էսպայր ոք հայ դիմէ առ դրունս թագաւորացն, արհամարհելով վարեն ի նոցանէ եւ որ այպանելով ասեն նմայ, թէ գնայ ի բաց ազգ յիւր եւ առանց հաւատարմութեան: Որքան որ ի մէջ անդորրութեան էք, բարի յէք, իբրեւ հասանի փոքր ինչ փորձութիւն, առժամայն դառնայք, որպէս որ ձեր եղիան Մուշեղանց, որ ոչ տեւեաց ի մէջ փորձութ[եան], առժամայն դառցաւ ի յայլ:

— Վասն պահելո[յ] հաւատարմութիւն ընդ ֆռանցիզաց զրկեցի զիս այնքան փառացն, մեծութեանցն եւ պատուոցն եւ մատնեցայ ի չարչարանս անտանելիս, երեքտասան ամօք տեւեցի վասն սիրոյն ֆռանցիզաց եւ վասն վերո[յ] զայլ պարագայիցն: Իբրեւ որ զերծա[յ] ուրախութեամբ եւ ամենայն յուսով հապճէպ փութայի գնալ տեսանել զթագաւորն իմ, զի ըստ արժանի արարմանց եւ հաւատարմութեան իմոյ եւ

95 Հմմտ. Սաղմ. ԺԷ 26-27

ըստ արժանեաց այնքան մեծ անուանն նորա պսակիմ:

— Բայց երեւ ժամանեցի անդ, ոչ թէ պսակեցին զիս, այլեւ ոչ ասին, թէ՝ բարի եկիր, այլեւ յաւելին՝ անարգել եւ խաբել զիս, նայեա յաւելին՝ մատնել /279b/ զիս ի պարսից յանարգանս եւ ի կորուստ: Արդ, ընդէ՞ր այնպէս արարին:

Պ. Վասն երկու պատճառաց: Նախ որ մատնեցին զքեզ քափուչինքն, թէ դուն լրտես ես Ռուստաց, երկրորդ՝ որ կամեցան փորձել զքեզ, թէ հաւատարիմ ես եւ թէ ոչ, կարե՞ս տեւել զայն անարգանացն եւ խաբէյութեանցն:

Հ. Վասն առաջին պատճառին պատասխան տամ քեզ եւ ասեմ կա՛մ կարի յոյժ խելագար էք եւ կա՛մ անասելի անիրաւ: Ո՞ ոք ի մէջ աշխարհիս վասն փորձութեան մահադեղ կերաւ եւ մեռաւ: Եթէ ես նոցա կողմն լինէի, յե՞րբ կ[հ]աւատային ռուսք մատնութիւնն քափուչինին, թէ եմ լրտես պարսից եւ կամ թէ այն մեծութիւն եւ փառքն, որ խոստացան, ընդէ՞ր խոստանային:

— Գիտէին, որ այն ժամանակին ունէի մեծ զօրութիւն եւ իշխանութիւն, կարող էի վասն նոցա առնել մեծ բարութիւն, վասն այն խոստանային, բայց ոչ արարի, վասն այն բարկացան, տեսին իմ հաստատ միտն ընդ ձեզ եւ մատնեցին զանձն իմ ի զանազան անարգանս, չարչարանս եւ ի նեղութիւնս: Ի՞նչ հարկ եւ յերկիւղ կար ի վերայ իմ տեւել այնքան չարչարանացն եւ կամ ի՞նչ հարկ եւ երկիւղ կար ի վերայ Ռուստաց, որ ի զուր եւ ի տարապարտուց չարչարէին վասն եւ կամ թէ ի՞նչ օգուտ էր իմ չարչարանն վասն նոցա:

— Յերբոր բարի խոստմանցն նոցա ոչ հաւանեցայ, առժամայն սկսեցին չարչարել զիս, որ ձանձրացեալ յակամայ դառնամ եւ կատարեմ զկամս նոցա: Դուն ի քեզ մտածէ, թէ այտ կարծիքտ ճանապարհ ունի՞: Ո՞ ոք հաւատայ եւ ընդունի զայտ: Ոչ ոք: Ի վերայ այտ կարծեացդ ոչ թէ միայն գիտուն /280a/ մարդիք, այլեւ տգէտ եւ տհաս մանկունք ծիծաղին: Դուն ինձ խոստացար ուղիղ պատասխան տալ, բայց տակաւին ոչ տաս ճշմարիտ պատասխան, այլ թիւր: Մի այտպէս ասել, այլ ասա՛, թէ՝ մեք չունեմք սովորութիւն, որ վասն մեր աշխատաւորացն վերշն փառաւորեմք, այլ զրկանօք հանեմք ի մէնջ, որպէս որ ասի ի վերո[յ], թէ որպէս որ մեղուքն պահեն զմեղրաշէն եւ աշխատաւոր մշակսն որքան որ կարեն շինել զմեղրն: Յերբոր գայ ժամանակն կեր[ա]կրել զնոսա, այնժամ կոտորեն եւ յընկենուն զմարմինս նոցա ի յարտաքս: Նմանապէս, յերբոր ես երեւելի քաջութիւն գործեցի, էհաս ժամանակն, որ պարանդէր արքայն փառաւորել զիս, այնժամ պատճառ եդին ի վերայ իմ եւ հանին զիս յունայն:

— Եթէ դուք ի սկսբանէ բարի ծառ լինէնայիք եւ բերած լինէյիք բարի պտուղ եւ թէ դուք ճանաչէիք զԱստուած եւ թէ դուք ամօթ ունենայիք եւ ամաչէյիք ի մարդկանէ, ոչ այնպէս անէյիք: Այլ թէ դուք ունենայիք բարեխիղճ մտանք, կասէյիք ի մտի, թէ՝ այրտ այտ այսքան ժամանակաց կրէ մեր անունն եւ ամենայն ուրք խոստովանի առաչի ամենեցուն յայտնապէս: Եթէ մեղն նորա վեր է, քան զգլուխն իւր, պարտ է շնորհել եւ այն փառքն, որ ռուսք կամեցան տալ նմա, կրկնապատիկ շնորհեմք, որ հոչակ հարկանի ի մէջ ամենայն աշխար[հ] եւ փառաւորէ անունն մեր: Ասեն, թէ այր ոմն վասն ֆռանցիզաց այսքան մեծութիւնն մերժեց եւ այնքան նեղ/280b/ութիւն կրեց, բայց ֆռանցիզ թագաւորն այնպիսի փառօք փառաւորեց զնա: Բայց դուք ի այսցանէ ոչինչ գիտէք, այլ միայն թէ ջան եւ դիտաւորութիւն ձեր այն է, որ ժողովէք զդրամս, ծառայէք վասն մամոնայի, որպէս որ վասն մամոնայի ստեցիք խոստմունքն թագաւորին, զի ինձ խոստացան ի բերանէն թագաւորին, թէ ի Ստանպօլ նստող դեսպան մուսիու Վիլնովին վերայ հրաման առաքեցաք, որ զքեզ պալիօզի պէս առաքէ առ թագաւորն Պարսից: Իբրեւ գնացի ի Ստանպօլ, ոչ թէ պալիօզի պէս եւ ոչ թէ վաճառականի պէս առաքեց, այլ մատնեց զիս ի ձեռն Վրաց, որք ածին զիս ընդ յիւրեանս որպէս գերի մի:

— Վասն երկրորդին պատասխանեմ եւ ասեմ ոչ ապաքէն վասն այդր բանիս, կարի յոյժ մոլորեալ էք, ասացին փիլիսոփայքն, թէ՝ փոր-

© National Library of Armenia

ցեալն կրկին փորձելն մեծ յիմարութիւն է: Այս պատճառն, որ ինձ ասացիր, ոչ էր ուղիղ, քանզի այս փորցելն արտաքին է եւ ոչ ներքին: Սակայն ով ես պատասխան տամ քեզ, նախ՝ արտաքնոյն եւ ապայ թէ՝ ներքին ուղիղ պատճառին:

— Այս ձեր սատանայեասահման օրէնն կերպիւ իմն լաւ գլնիր վասն առաջին ժամանակին մարդոցն, որք կապրէին հինկ վեց հարիւր ամ: Այսմ ժամանակին այտ ձեր օրէն ոչ վայել է, քանզի ժամանակիս մարդու կեանն է յիսուն կամ վաթսուն ամ. եթէ յաւել անցանէ, այլ անպէտ է: Ասացէք ինձ, այտ ձեր փորձութիւնն քանի՞ տարի սահման ունի: Ոչ գիտեմ: Մարդն /281a/ մինչի քսան ամ անպէտ է, քանզի խելքն նորա է մանկական, անհաստատ, քակօղ եւ ոչ շինօղ: Այնուհետեւ մինչի երեսուն տարին պիտանի լինի յամենեցուն, կամ թէ հազիւ մինչի քառասուն տարի, որ ընդ մանկականին լինի վաթսուն տարի:

— Որ ասէք, թէ յիմաստուն էք եւ գիտուն, զայտ ո՞չ գիտացիք, թէ մարդ, որ այս տարի լաւ էր, եկած տարի վատ գլնի, այս տարի էր հոգէսէր, եկած տարին գլնի մարմնասէր եւ այլք: Ի սկսբանէ մինչի ցայսօր ո՞ ոք լուաւ, թէ ի որդւոցն Ադամայ ի միում կացութեան եկաց մինչի մահ: Ոչ ոք եւ ոչ կարէ լինիլ: Ո՞չ գիտէք, թէ մարդն է սահական, է եւ փոփոխական, ապայ ուրեմն դուք այլ ի՞նչ փորձութիւն խնդրէք:

— Երեք կամ չորեքտասան ամաց էյի, որ զիս բոլորօվին մատուցի ձեր ձեռն եւ ամենայն հոգօվս չափ ծառայեցի ձեզ անպատմելի արարողութեամբ մինչի քառասուն ամ, որպէս որ վերո[յ] փոքր ի շատէ ծանուցաւ իմ արարն:

— Արդ, այն ամենայնն փորձութիւն չէ՞ր, որ այլք զայն առաւել ինչ կամիք յինէն: Ահայ յիսուն եւ չորս ամաց եղէ, անցաւ կեանս: Կարծեմ, թէ այտ ձեր տրիտուրն լինելոց է ինձ զկնի մահուան: Ջայ ես ձեզանէ ոչինչ չեմ խնդրել, քանզի ես ազգ եմ ազնիւ տոհմէ եւ եմ Աստուծով Ռատ, նայեւ որ բնիկ անուն ցեղին իմո[յ] է Ռատ, թէպէտ այնուհետեւ մինչի ցայսօր երեք /281b/ անուն փոխեցաւ՝ Պալճոնց, Գասպարանց եւ մակ Մուշեղանց, բայց տան անունն մինչի ցայսօր յիշատակի Ռատինց, որ եմ Աստուծով Ռատ եւ ոչ որպէս զձեզ ժլատ եւ ծառայ մամոնայի: Ոչ կարօտիմ եւ ոչ ցանկամ ձերոցն, այլ խնդրեմ ի ձէնջ իմ արդար բարին, որ կողոպտեցիք յինէն եւ ի Աստուծոյ պարգեւացն, որ զրկեցիք զիս: Օվ որ ունի զաչս, տեսանէ եւ որ ունի զականճս, լսիցէ եւ քննեսցէ իմ արարն վասն ձեր եւ զձեր հատուցումն ընդդէմ իմ: Այնժամ բարւոք կարէ յիմանալ իմ ազատութիւնն եւ ձեր գռեհկութիւնն, իմ առատութիւն եւ ձեր ժլատութիւն, իմ քրիստոնէյութիւն եւ ձեր կռապաշտութիւնն եւ այլ:

— Տեսիր որ քո ասաց փորձութիւնն ոչ էր ուղիղ, այլ արտաքին եւ պատրողական պատճառ:

— Այլ ուղիղն եւ ճշմարիտ պատճառն այն է, որպէս որ վերո[յ] գրեցի, թէ իբրեւ ժիր մշակն զկնի ամբողջ վճարելւոյ զգործն զարդ դիմօք դառնայ առ տէրն իւր առ ի վարցատրիլ: Բայց անիրաւ տէրն հանգոյն մեղուաց սպանանէ զմշակն:

— Ահայ այս էր ձեր ներքին եւ ճշմարիտ պատճառն: Բայց դուն թագուցիր զներքինն եւ զճշմարիտ պատճառն եւ յայտնեցիր զարտաքինն. միշտ պահես օֆակն ազգին քո:

Պ. Դուն ամենայն բան գիտես, ընդէ՞ր հար[ց]անես յինէն, բայց ես այնպէս լսեցի ֆռանցիզաց, թէ դուն ի քէն անուանեցար նոցա ծառայ, այլ նոքա ոչ ճանաչեն զքեզ:

/282a/ Հ. Յամենեւին գլնի, որ մէկ մարդ վարկօրէն ասէ, թէ՝ ես այն պարոնին եւ կամ թէ այն թագաւորին ծառան եմ, որ ոչ գիտենան տեարքն: Եթէ ես ոչ լինէի կապեալ ընդ նոսա, ինձ ի՞նչ փոյթ էր գնալ առ նոսա: Մի՞թէ խելագար էյի, որ թողէյի իշխանութիւնն Պարսից թագաւորութեանն եւ գնալ կամենայի անդ եւ կամ թէ մի՞թէ խելագար էյի, որ թողէյի այնքան բարին ռուստաց, զորս խոստացան ինձ եւ գնայի անդ:

— Դիցուք, թէ ես իմ կամաւն յընկալայ անունն նոցա: Ապայ ընդէ՞ր ոչ տվին իմ գրերուն

պատասխան, յորժամ որ գրէյի ի Հաշթարխանու առ վերո[յ] դեսբան մուսիու Գառտանն[96], թէ եթէ ձեր եմ, օգնեցէք, եթէ ոչ՝ արձակեցէք զիս: Ապայ ընդէ՞ր ոչ ետուն պատասխան, թէ՝ ոչ գիտեմք զքեզ:

— Օվ ոք որ կամենայ քան զայս առաւել լսել, որոնեսցէ զմատենագիրս բարովագրիցն իմոց, զորս գրեցի նոցա սկսեալ 1723 թէն մինչի թիւն 1742 յելանելն իմ ի Սպահանայ: Այնժամ կարէ եղուկ կարդալ ձեզ:

— Ապայ այս մեծ մեղանք չէ՞, որ իմ գրին պատասխան չտվին, որ ես արձակեալ գնայի հոգալ վասն իմ:

Պ. Եթէ քեզ այնպիսի գրած լինէյին, այլ ոչ գայիր առ նոսա: Կամեցան զքեզ փորձել, թէ՝ տեսանեմք, թէ հաւատարի՞մ է, առանց պատասխան տալոյ եւ յուսադրելո[յ] գու գա՞յ, թէ ոչ:

Հ. Եթէ այտպէս է, ես որ գնացի, ապայ ընդէ՞ր ոչ ընդունեցին զիս:

/282b/ Պ. Ես ոչ գիտեմ նոցա կարծիքն եւ ոչ յիմացա[յ], թէ այլ ինչ պատճառս ունէյին:

Հ. Ինքեանք գիտէյին, որ զիս ոչ են ընդունելւոց: Ընդէ՞ր շուտօվ ոչ պատասխան տվին, որ ես ոչ կրէյի այն երեքտասան ամեայ չարչարանքն եւ յետ այնորիկ այնքան ոչ պարապ անցուցանէյի զկեանն իմ կրելով զվիշտս այնքան յերկար ճանապարհին:

Պ. Վասն այսորիկ ոչ գրեցին եւ ոչ պատասխանեցին, զի կամեցան տեսանել զքեզ:

Հ. Վասն միայն տեսութե՞ն թողին, որ երեքտասան ամ բանտարգեալ մնացի եւ քսան ամսեաւ ճանապարհի վիշտն կրեցի:

Պ. Այո՛, այտպէս արարին:

Հ. Այտպիսի գործն համեմատի՞ քրիստոնէյութեան եւ կամ թէ գլնի՞ ասել, թէ են մարդ: Ոչ: Այտ ես շնորհեմ ձեզ:

— Բայց զկնի տեսութեան ընդէ՞ր ոչ պարզ պատասխան տվին, այլ առաքեցին ի յետս գնալ առ Պարսկաստուն եւ ասին՝ գնայ տես, թէ որպիսի է Պարսից էհտիմայ դօվլայն, անդի գրէ առ մեզ տեսանեմք: Դարձայ դարձեալ անտի եւ եկի ի Պարսս:

— Այնքան նեղութեամբ եւ վշտիւք գնացի ի Խորասան, անտի դարձայ յՍպահան: 1740 անտի դարձեալ գրեցի նոցա իմ ամենայն արարն եւ իմ որպիսութիւնն: Այնուհետեւ սպասեցի անդ երկու տարի, թէ գան պատասխան գրեանցն իմոց, որ ոչ եկին: Ապայ թէ դարձայ եւ եկի ի Դաւրէժ: Անդ եւս սպասեցի եր/283a/-կու տարի, որ ոչ եկաւ պատասխան, եկի յերզրում: Մէկ տարի եւս անդ սպասեցի, տեսի, որ ոչ եկաւ, թողի զնոսա:

Ես իմ կողմանէ զ[ը]նթացս իմ ամենայն հաւատարմութեամբ կատարեցի, բայց ի ձեր կողմանէ ամենայն ինչ եղեւ ստութիւն եւ խաբէյութիւն, այնքան, որ յայտնի եղեւ յամենայն աշխարհի եւ Աստուծոյ:

— Ոչ գիտեմ, թէ զձեզ որոյ ազգի եւ կամ որոյ կրօնի նմանեցուցանեմ ո՛չ քրիստոնէյի, ո՛չ տաճկի եւ ո՛չ կռապաշտի, քանզի քրիստոնեայն յերկնչի ի Աստուծոյ եւ ամաչէ ի մարդկանէ, նմանապէս տաճիկն: Բայց կռապաշտն, թէպէտ զԱստուած ոչ ճանաչէ, զի ոչ յերկնչի ի յԱստուծոյ, բայց զգուշանալ ի գործս իւր, զի մի վատահամբաւիցի ի գործոցն:

— Բայց դուք, որ ոչ յերկնչիք ի Աստուծոյ, ոչ զարմանամ, քանզի ոչ ճանաչէք զԱստուած: Բայց այս մին մեծ եւ զարմանալի զարմանք է, որ ոչ ամաչէք ի մարդկանէ եւ ոչ գիտէք զգին բարի համբաւոյն, որպէս որ գովեց զնայ Սողոմոն եւ ասաց՝ լաւ է անուն բարի, քան մեծութիւն աշխարհի[97]: Դուք, որ ոչ նմանիք քրիստոնէյի եւ ոչ կռապաշտի, ուրեմն էք փոշի, զոր հողմն հոսէ զնայ ի վերայ յերեսաց յերկրի՝ ըստ վկայութեան Դաւիթ մարգարէյի:

Հ. Ահայ տեսիր զայս ամենայն եւ լար փոքր ի շատէ, աղաչեմ զի ասես ինձ զճշմարիտն, թէ եթէ դու իմ տեղն լինէյիր, որ այսքան չարչարան քեզ տված լինէյիր, ի՞նչ կառնէյիր դուն նոցա:

96 Եղիա Մուշեղեանի այս նամակների բնագրերը պահպանուել են:

97 Հմմտ. Առակ. ԻԲ 1

© National Library of Armenia

Պ. Քրիստոնէաբար պարտի ներել, բայց աշխարհ[հ] /283b/օրէն՝ խնդրել զվրէժ: Եթէ խնդրես զվրէժ, ոչ ոք մեղադրէ զքեզ, բայց անցանես զպատուիրանաւն Աստուծոյ եւ Յիսուսի, քանզի Աստուած ասաց, թէ՝ իմ է վր[է]ժխնդրութիւն[98] եւ Քրիստոս պատուիրեաց, թէ՝ մի կալ հակառակ չարին[99], եւ թէ՝ բարի արարէք ատելեացն ձերոց[100], եւ թէ՝ դում ոչ թողուցում, ոչ թողցէ ձեզ Աստուած զ[յ]անձանս ձեր[101] եւ այլ զբազումս, զորս դուն գիտես զամենայն առաւել, քան զիս: Եթէ թողուս եւ ներես զամենայն սրտէ քումմէ, ես այնպէս համարիմ, թէ դուն քանի որ կենդանի ես, կենդանի մարտիրոս ես, եւ յետ աստի յելանելոյն մարտիրոսաց պսակաւն պսակելոց է զքեզ Աստուածն մեր:

Հ. Ահայ քսան եւ չորս ամ եղէ, որ չարչարեն զիս: Ես պատրաստ եմ ներել, բայց դուք ոչ դադարիք վնասելոյ: Արդ զինչ արարից՝ ոչ գիտեմ: Պօղոս առաքեալն, թէպէտ ոչ առաւ վրէժն իւր հակառակորդացն, բայց գանկատեց յաշակերտին, թէ այնիշ ոմն հակառակ կացաւ, հատուցէ նմա Տէրն:

— Տես, խնդրեաց յԱստուծոյ, որ Աստուած առնու զվրէժն: Ես վերոյ գրեցի վասն իմ, թէ ապայ այսքան չարութիւն որ գործեաց, քանզի կամէցի գործել ընդ դէմ ձեզ եւ խնդրել վրէժ ի ձէնձ վասն ամենայն չարեացն ձերոց, զոր ի զուր վնասեցիք ինձ:

— Արդ, եթէ դուք այսուհետեւ դադարիք ի վնասելոյ ինձ եւ զամենայն վնասն, զորս ետուք ինձ եւ զզրկանքն, զորս արարիք, դարձուցանէք /284a/ առ յիս, այնժամ ես դադարիմ եւ ոչ սկսիմ խնդրել զվրէժ: Բայց եթէ դուք ոչ դատրիք վնասելոյ ինձ եւ ոչ դարձուց[ա]նէք առ յիս իմ բարին, այնժամ խնդրեմ Ամենակալէն, որ առնու իմ վրէժն ի ձէնջ, եւ ես լինիմ անմեղ առաջի Աստուծոյ Տեառն իմոյ, ահաւասիկ ասացի ձեզ:

Պ. Բարի յէ, զայտ բան քրիստոնէաբար ասացիր: Ունի՞ս այլ ինչ բան հարցանելոյ:

Հ. Ունիմ բազում ինչ բան հարցանելոյ, բայց տեսի, որ ոչ տաս ուղիղ պատասխան, քանզի քոյ ազգի օֆակն պահես եւ ոչ յայտնես զծակեալն նոցա, վասն այսորիկ հարկաւորեցայ լռել եւ այլ ոչ հարցանել: Տէր ընդ քեզ: Որպէս որ լսեցիր, պատմէ ձերոցն: Գիտեմ, որ կարգաւոր էյիր, ոչ յայտնեցիր զքեզ:

Պ. Կցի այնպէս, մնաս բարով:

Հ. Երկնչիր խաղաղութեամբ եւ Տէր եղիցի ընդ քեզ:

Վերջ երկրորդ գրգիս:

98 Հմմտ. Հռոմ. ԺԲ 19, Եբր. Ժ 30
99 Հմմտ. Մատթ. Ե 39
100 Հմմտ. Մատթ. Ե 44
101 Հմմտ. Մատթ. Զ 15

ԿԱՐԷՆ ԻԻԶԲԱՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ես՝ Կարէն Նիկիտի Իւզբաշեանս, ծնուել եմ 1927 թ. Յունուարի 6-ին Թբիլիսիում: Յեղափոխութիւնից յետոյ հայրս՝ Նիկիտա (Մկրտիչ) Իւզբաշեանը՝ ծագումով շուշեցի, հաստատվել էր Թբիլիսիում՝ լինելով գործարանի տնօրէն եւ դասաւանդելով Պոլիտեխնիկ ինստիտուտում: 1930 թ. տեղափոխւում է Երեւան՝ ղեկավարելով տրամվայի շինարարութիւնը, միաժամանակ դասաւանդելով Երեւանի Պոլիտեխնիկ ինստիտուտում: Վախճանուել է Երեւանում 1961 թ.: Մայրս՝ Վարսենիկ Իւզբաշեանը՝ Թիֆլիսի Գայիանեան դպրոցի շրջանաւարտ, եղել է հայերէնի ուսուցչուհի: Վախճանուել է Լենինգրադում 1982 թ.:

Միջնակարգ կրթութիւնը ստացել եմ Երեւանում՝ աւարտելով Պուշկինի անուան ռուսական դպրոցը: 1943 թ. ընդունուել եմ Մոսկուայի՝ Բաումանի անուան Բարձրագոյն տեխնիկական ուսումնարանը: Երրորդ կուրսից թողել եմ այդ ուսումնարանը եւ ընդունուել Երեւանի Համալսարանի Պատմութեան ֆակուլտետ՝ հայ ժողովրդի պատմութեան բաժինը: 1948 թ. աւարտելով երկրորդ կուրսը՝ փոխադրուել եմ Լենինգրադի Համալսարանի Պատմութեան ֆակուլտետը՝ մասնագիտանալով բիւզանդագիտութեան ամբիոնին առընթեր: 1951 թ. աւարտել եմ Համալսարանը. աւարտական աշխատութիւնս նուիրուած է եղել պալիկեան շարժմանը Հայաստանում եւ Բիւզանդիայում:

Նոյն՝ 1951 թ. ընդունուել եմ ՀԽՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի ասպիրանտուրա եւ երեք տարով գործուղուել Լենինգրադ՝ ԽՍՀՄ ԳԱ Պատմութեան ինստիտուտի Լենինգրադի բաժանմունք: Աւարտելով ասպիրանտուրան 1954-ին՝ 1957 թ. պաշտպանել եմ դիսերտացիոն աշխատանքս՝ «Բիւզանդիան Խաչակրաց չորրորդ արշաւանքի նախօրեակին» թեմայով:

Համալսարանի եւ ասպիրանտուրայի տարիներին իմ հիմնական ուսուցիչները եղել են Մ. Վ. Լեւչենկոն եւ Ե. Է. Լիպշիցը: 1945 թ. սկսած անմիջական շփման մէջ եմ եղել Աշոտ Յովհաննիսեանի հետ: Աշոտ Յովհաննիսեանին, Սուրէն Երեմեանին, ձեռագրերի բնագաւառում՝ Լեւոն Խաչիկեանին, որոշ իմաստով նաեւ Յովսէփ Օրբէլուն դիտում եմ իբրեւ հայագիտութեան իմ ուսուցիչների:

1955 թ. անցել եմ աշխատանքի Մատենադարանում՝ որպէս ձեռագրական բաժնի վարիչ: Եթէ թեկնածուական աշխատութիւնս եղել է զուտ բիւզանդագիտական բնոյթի, ապա Մատենադարանում վերսկսել եմ թողած ուղղութիւնը՝ հայ-բիւզանդական յարաբերութիւնների ուսումնասիրութիւնը քաղաքական, մասամբ մշակութային ոլորտում: Մատենադարանում ձեռնամուխ եմ եղել Արիստակէս Լաստիվերտցու Պատմութեան քննական բնագրի պատրաստմանը՝ գրաւոր մի յուշարձանի, որը կարեւորագոյն սկզբնաղբիւր է թէ՛ Հայոց, թէ՛ Բիւզանդիայի պատմութեան: Նոյն այդ տարիներին սկսել եմ

1 Մեր երախտագիտութիւնն ենք յայտնում երջանկայիշատակ հայագէտ-բիւզանդագէտի դստերը՝ Ելենա Կարէնի Իւզբաշեանին՝ 1989 թ. մեքենագրուած այս բնագիրը եւ նմանատիպ հեղինակային նիւթերը (այդ թւում գիտնականի կազմած սեփական աշխատանքների ցուցակները) մեզ տրամադրելու համար: Նշենք, որ այդ նիւթերի արխիւացումը կատարուել է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի Քրիստոնեայ Արեւելքի բաժնի կաբինետում - *Խմբ.*:

© National Library of Armenia